

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# **CONTEMPORARY EURASIA**

**TURKEY: PROBLEMS OF IDEOLOGY  
AND POLITICS**

EDITED BY RUBEN SAFRASTYAN

**VOLUME III (2)**

YEREVAN – 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# **СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ**

ТУРЦИЯ: ВОПРОСЫ ИДЕОЛОГИИ  
И ПОЛИТИКИ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

**ТОМ III (2)**

ЕРЕВАН – 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ԹՈՒՐԹԻԱ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՌՈՒՐԵԼՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄբ

**ՀԱՏՈՐ III (2)**

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՅՅ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԵԱԳԻՐ

**Ռուբեն Սաֆրաստյան**, ՅՅ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԵԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Լիլիթ Յարուբյունյան**, պ. գ. թ., դոցենտ

**Գոհար Իսկանդարյան**, պ. գ. թ., դոցենտ

**Վահրամ Տեր-Մաթևոսյան**, պ. գ. թ.

**Լևոն Յովսեփյան**, պ. գ. թ.

**Նազելի Նավասարդյան**, պ. գ. թ. (հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի սույն հատորը նվիրված է Թուրքիայի Յանրապետության ներքաղաքական գործընթացների և աշխարհաքաղաքական մի շարք կարևոր հիմնահարցերի քննությանը: Յամարն ընդգրկում է Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության, գաղափարախոսական առանձնահատկությունների ու միտումների մասին վերլուծություններ:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող այլ շրջանների համար:

ISSN 1828–3948

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL  
OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF

**Ruben Safrastyan**, Academician of NAS RA

EDITORIAL BOARD

**Lilit Harutyunyan**, Assoc. Prof., PhD

**Gohar Iskandaryan**, Assoc. Prof., PhD

**Vahram Ter-Matevosyan**, PhD

**Levon Hovsepyan**, PhD

**Nazeli Navasardyan**, PhD, Responsible for the Volume

The current volume of the “Contemporary Eurasia” includes analyses of the major domestic political processes and the developments of the Republic of Turkey as well as recent geopolitical developments. The articles particularly deal with ideological tendencies and characteristic features of Turkish internal and foreign policies.

The volume may be of interest for scholars, experts of politology and students.

ISSN 1828–3948

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

**Рубен Сафрастян**, академик НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Лилит Арутюнян**, к. и. н., доцент

**Гоар Искандарян**, к. и. н., доцент

**Ваграм Тер–Матевосян**, к. и. н.

**Левон Овсепян**, к. и. н.

**Назели Навасардян**, к. и. н., ответственная за выпуск

Вошедшие в настоящий том периодического издания «Современная Евразия» статьи анализируют важные внутриполитические процессы Турецкой Республики и рассматривают некоторые вопросы ее геополитики. Особое внимание уделено идеологическим тенденциям и характерным особенностям внутренней и внешней политики Турции. Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся ближневосточным регионом.

ISSN 1828–3948

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **ՎԱՅՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

\$ԱՇԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ. ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ.....10

## **ԱՆՈՒՇ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ**

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԻՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....16

## **ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԳՅՈՒԼԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՉԱՆՈՒՄ.....32

## **ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ**

ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԼԵՉԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ՉԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԻ ԼԵՉԿԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ..... 52

## **ՈՒՐԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 2007-2014 ԹԹ..... 77

## **ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԹԻԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ . . .86

## **ՆԵԼԼԻ ՄԻՆԱՍՅԱՆ**

«ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» (TIKA). ՍՏԵՂԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒԼԵՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱԿԱՌՆԵՐԸ..... 106

## CONTENTS

### **VAHRAM TER-MATEVOSYAN**

MANIFESTATIONS OF FASCISM IN TURKEY.

A FEW QUESTIONS ON THEORY..... 10

### **ANUSH HOVHANNISYAN**

TURKEY'S POLICY THROUGH THE PRISM OF CRIMEAN CRISIS..... 16

### **LEVON HOVSEPYAN**

ANTI-GULENIST POLICY OF TURKISH AUTHORITIES AND IT'S INFLUENCE  
IN AZERBAIJAN.....32

### **ALEKSANDR SAFARYAN**

THE ROOTS OF KEMALIST LANGUAGE POLICY: ZIYA GOKALP'S

LINGUISTIC VIEWS .....52

### **RUBEN MELKONYAN**

THE ISSUE OF ARMENIAN GENOCIDE IN THE PARLIAMENT

OF TURKEY (2007–2014) ..... 77

### **GEVORG VARDANYAN**

PONTIC GREEKS AND REPUBLICAN TURKEY: HISTORICAL MEMORY

AND NEW CHALLENGES .....86

### **NELLI MINASYAN**

"TURKISH INTERNATIONAL COOPERATION AND DEVELOPMENT AGENCY

(TIKA)": GOALS OF ESTABLISHMENT AND SPHERES OF ACTIVITIES ..... 106



## СОДЕРЖАНИЕ

### **ВАГРАМ ТЕР–МАТЕВОСЯН**

ПРОЯВЛЕНИЯ ФАШИЗМА В ТУРЦИИ.  
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ТЕОРИИ ..... 10

### **АНУШ ОГАНЕСЯН**

ПОЛИТИКА ТУРЦИИ СКВОЗЬ ПРИЗМУ КРЫМСКОГО КРИЗИСА ..... 16

### **ЛЕВОН ОВСЕПЯН**

ВЛИЯНИЕ АНТИГЮЛЕНОВСКОЙ ПОЛИТИКИ ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ  
В АЗЕРБАЙДЖАНЕ ..... 32

### **АЛЕКСАНДР САФАРЯН**

У ИСТОКОВ ЯЗЫКОВОЙ ПОЛИТИКИ КЕМАЛИСТОВ:  
ЛИНГВИСТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ЗИЯ ГЁКАЛЬПА ..... 52

### **РУБЕН МЕЛКОНЯН**

ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН В ПАРЛАМЕНТЕ  
ТУРЦИИ (2007–2014) ..... 77

### **ГЕВОРГ ВАРДАНЯН**

ПОНТИЙСКИЕ ГРЕКИ И РЕСПУБЛИКАНСКАЯ ТУРЦИЯ:  
ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ И НОВЫЕ ВЫЗОВЫ ..... 86

### **НЕЛЛИ МИНАСЯН**

“ТУРЕЦКОЕ АГЕНТСТВО ПО СОТРУДНИЧЕСТВУ И РАЗВИТИЮ” (ТІКА):  
ЦЕЛИ СОЗДАНИЯ И СФЕРЫ ДЕЯТЕЛЬНОСТИ ..... 106

## ՖԱՇԻՉՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Քենալական պաշտոնական պատմագրության հիմքում ընկած մի շարք անհերքելի պնդումներ, որոնք տասնամյակներ շարունակ թելադրում էին թուրքական քաղաքական ու հասարակական մտքի ուղղությունները, արդեն երկու-երեք տասնամյակ է, ինչ համակարգային վերանայման են ենթարկվում: Այդ թեզի առանցքային գաղափարներից մեկն այն էր, որ 1919 թ. մայիսը հարկ էր համարել նոր Թուրքիայի սկիզբը, որը վերջ տվեց օսմանյան և հատկապես երիտթուրքական անցյալին և սկիզբ դրեց նոր քաղաքական, գաղափարախոսական ու քաղաքակրթական ուղղության: Իրականում քենալականության գաղափարախոսական դրույթների կապը և կախվածությունը նախորդող երիտթուրքական ժամանակաշրջանից ունի բազմաթիվ անհերքելի «շարունակություններ»: Նմանատիպ դրսևորումներից է գաղափարախոսական շարունակությունը, հատկապես արդիականացման, եվրոպականացման, քաղաքակրթության, ազգային պետության ձևավորման ուղղություններով: Այդ ուղղություններից մեկն անշուշտ վերաբերում էր 19-րդ դարի վերջերից մի շարք եվրոպական երկրներ համակաժ մի շարժմանը, որն հետագայում պետք է ստանար *ֆաշիզմ* անվանումը: Ֆաշիզմի դրսևորումները և դրանց ուսումնասիրությունը Թուրքիայում ունեցել է բավական ուշագրավ ճանապարհ, արդյունքում այն ներկայացվել է որպես ոչ կարևոր մի ուղղության: Իրականում այս հոդվածը կարելի էր վերնագրել նաև «Մի մոռացված ֆաշիզմի պատմություն»:

2001 թ. Նորվեգիայի Բերգենի համալսարանում տեղի ունեցավ մի գիտաժողով, որը նպատակ ուներ քննելու Եվրոպայից դուրս գործած ֆաշիստական համակարգերը: Գիտաժողովի ըն-

թացքում հնչած ելույթները հետագայում տպագրվեցին ամբողջական տարբերակով<sup>1</sup>: Այդ գիտաժողովում հանդես եկած Ֆիքրեթ Ադանըրը վերստին բարձրացնում է մի հարցադրում, որը երկար ժամանակ մոռացված էր. «քեմալական Թուրքիան ինչքանով էր ֆաշիստական»<sup>2</sup>: Նախկին գրեթե բոլոր ուսումնասիրությունները, որոնք քննարկել են այդ թեման, հանգել են այն եզրակացությանը, որ Թուրքիայում գոյություն չեն ունեցել ֆաշիզմը ծնող պայմաններ, այնպիսիք, ինչպիսիք եղել են Եվրոպայում: Այդ ուսումնասիրություններում 20-րդ դարի առաջին կեսի Թուրքիայում տեղի ունեցած գաղափարախոսական զարգացումները, եթե դիտվել են տոտալիտար համակարգերի տեսության ներքո, ապա համեմատվել են միջպատերազմյան հայտնի գերմանական և իտալական զարգացումների հետ: Արդյունքում դրանց ճնշող մեծամասնությունը հանգել է այն եզրակացությանը, որ Թուրքիան չի անցել այն ճանապարհով, որը ծնեց եվրոպական ֆաշիզմը, հետևաբար, Թուրքիան չի ունեցել ֆաշիստական անցյալ:

Իհարկե Թուրքիայում եղել են ուսումնասիրողներ ու հրապարակախոսներ (Աթիլա Յայլըա, Ջան Դյունդար, Ահմեթ Ալթան, Նագեհան Ալջը), որոնք պնդել են Թուրքիայի ֆաշիստական անցյալի մասին իրենց համոզմունքը և արդյունքում խնդիրներ ունեցել Թուրքիայի արդարադատության հետ: Որոշ ուսումնասիրողներ էլ, ինչպես, օրինակ, Թահա Փարլան և Անդրյու Դավիսոն պնդում են, որ «քեմալական գաղափարախոսության մեջ կային ֆաշիստական և դիկտատորական միտումներ, հավակնություններ, բայց...» այն չունեի ֆաշիզմին բնորոշ ամբողջական բնութագրիչները<sup>3</sup>:

Թուրքիայի ֆաշիստական անցյալի մասին հարցադրումները քննական վերազնահատման կարիք ունեն: Այդ նպատակով նպատակահարմար է առաջ քաշել հետևյալ երեք փաստարկումները:

1. Ֆաշիզմը Թուրքիայում պետք է դիտել համաշխարհային ֆաշիզմի համատեքստում և այդ գաղափարախոսական ուղղությունից ներս: Այլ խոսքերով՝ երիտթուրքական գաղափարախոսությունը և քեմալիզմը ֆաշիզմի հետ համեմատության մեջ դի-

<sup>1</sup> Fikret Adanır, *Kemalist Authoritarianism and Fascist Trends in Turkey during the inter-war period*. In *Fascism outside Europe*, by Stein Ugelvik Larsen, 2001, p. 313–361. Boulder: Social Science Monographs.

<sup>2</sup> Taha Parla, *Andrew Davison, Corporatist Ideology in Kemalist Turkey: Progress or Order?*, Syracuse, N. Y., Syracuse University Press, 2004, p. 244–256.

<sup>3</sup> Fikret Adanır, նշվ. աշխ., էջ 359:

տելու, ավելին, դասական ֆաշիստական ռեժիմների հետ համեմատելու ցանկացած փորձ պարունակում է մեթոդական սխալ: Հետևաբար 1910–1940 թթ. Թուրքիայի ֆաշիզմը պետք է ուսումնասիրել, էության մեջ, այսինքն, ինչքանով էր երիտթուրքական, իսկ այնուհետև քեմալական գաղափարախոսությունը համապատասխանում համաշխարհային ֆաշիզմի ձևավորման պատմությանը, էությանը, ոգուն և դրսևորման ձևերին: Տվյալ խնդրի ուսումնասիրությամբ զբաղվողների համար հաճախ հանդիպող բացթողումը եղել է այն, որ «ֆաշիզմի համեմատական ուսումնասիրության ժամանակ իտալական ֆաշիզմը վերցվել է որպես կատարելատիպ»<sup>4</sup>: Ավելին, 20–րդ դարի առաջին կեսի ֆաշիզմը դիտվել է գերազանցապես եվրոպական երևույթ, որն իր էությամբ օտար էր ոչ-եվրոպական համակարգերի համար:

2. Ֆաշիզմը 1920–1930–ական թվականների արդիականության գաղափարական հոսանքի անքակտելի մասն էր, հետևաբար, այն չէր կարող շրջանցել արդիականությունը պետական վերգաղափարախոսական հավատամք հռչակած երիտթուրքական և քեմալական Թուրքիային: 1890–ական թթ. ի վեր Թուրքիայում ակտիվ շրջանառության մեջ էր այն գաղափարը, որ փլուզվող կայսրությունը հնարավոր է փրկել միայն արդիականացման շնորհիվ: 1908 թ. իշխանափոխությունից հետո, այնուհետև 1914 թ. դիկտատուրայի հաստատումից հետո երիտթուրքական կառավարությունը երկրի արդիականացումը մղեց առաջին պլան: Իսկ արդիականացման քաղաքականությունն իր հերթին ենթադրում էր հասարակության կառուցվածքի, արժեհամակարգի, կացութաձևի փոփոխություն: Մինչև 1918 թ. նրանք կարճ ժամանակ ունեին պետության և հասարակության վերափոխման ծրագրերն ամբողջությամբ իրականացնելու համար, սակայն մի շարք առումներով նրանց հաջողվեց անել «հսկայական ու շնորհակալ գործ»: Նրանց արդիականացման փորձերը շարունակվեցին քեմալականների օրոք, այն դարձավ պետական քաղաքական ուղեգծի մաս և այն խնդիրները, որոնք հնարավոր չէր իրագործել երիտթուրքերի օրոք շարունակվեցին քեմալականների կամ նորացված երիտթուրքերի կողմից:

3. Այսպիսով՝ ֆաշիզմի դրսևորումները Թուրքիայում ունեցել են ամենատարբեր փուլեր, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են եվրոպական ֆաշիզմի էությանը և ձևավորման փուլերին: Թուրքիայի պարագայում առկա է անկանոնություն և գործըն-

<sup>4</sup> Fikret Adanır, նշվ. աշխ., էջ 360:

թացների տարերայնություն: Մի շարք գաղափարախոսություններ Թուրքիա հասան ուշացումով, հետևաբար դրանց կիրառման առումներով ևս կար հապճեպություն, քառասյին դրսևորումներ և այլն: Իսկ որոշ առումներով էլ ֆաշիզմի թուրքական դրսևորումները հետագայում տեղ գտան մի շարք ֆաշիստական շարժումներում և ռեժիմների գործելաոճում:

Ֆիքրեթ Ադանըրը, հետևելով Ռոջեր Գրիֆինի Ֆաշիզմի միջուկի/առանցքի տեսությանը, առաջ է քաշում «նվազագույն ֆաշիզմի» վեց սկզբունքները. ա) հակալիբերալիզմ, բ) հակապահպանողականությունը, գ) ազգի պատմության որոշ փուլերի մեծարումը, գովերգումը, դ) խարիզմատիկ առաջնորդի առկայությունը, ե) մի շարք միֆականացված կոնցեպցիաների աստվածացումը, ինչպես, օրինակ՝ ազգ, առաջնորդ, ազգային ինքնություն, զ) ազգի միատարրության գաղափարի բացարձականացումը<sup>5</sup>:

Փորձելով համադրել ֆաշիզմի վերաբերյալ տարբեր սահմանումները՝ Սթենլի Փեյնն առաջ է քաշում ֆաշիզմի հետևյալ աշխատանքային սահմանումը. «Ֆաշիզմը հեղափոխական ծայրահեղ ազգայնամոլության տեսակ է, որը ձգտում է ազգային վերածննդի, որը հիմնվում է գերազանցապես կենսապահովման փիլիսոփայության վրա, կառուցված է ծայրահեղական էլիտիզմի, զանգվածների մոբիլիզացիայի և առաջնորդի սկզբունքների հիման վրա: Այն նաև դրականորեն է արժևորում բռնությունը, թե՛ որպես միջոց, թե՛ որպես նպատակ և վերջնականապես նպատակ ունի արժևորելու ազգի պատերազմական և ռազմական արժանիքները»<sup>6</sup>: Ֆաշիզմի սահմանումների շարքին ավելանում են նաև միակուսակցական համակարգը, առաջնորդի պաշտամունքի դրսևորումը, կրթական համակարգի ամբողջական վերահսկողությունը պետության կողմից, պատմության և լեզվի վերաբացահայտումը և այլն:

Այս սահմանումների համադրման արդյունքում, երբ ստանում ենք ունիվերսալ ֆաշիզմի անհրաժեշտ բաղադրիչների ցանկը, հասկանալի է դառնում, որ ֆաշիզմի այն չափորոշիչները, որոնք Եվրոպայում համընդհանուր տարածում գտան 1920–30–ական թթ., երիտթուրքերի կառավարման շրջանում արդեն լայն տարա-

<sup>5</sup> Payne Stanley, A History of Fascism, 1941–1945. Madison: University of Wisconsin Press, 1995, p. 14.

<sup>6</sup> Kamil Arlı, “Türkiye son 6 yılda Rusya’ya 3 defa mağlup oldu”, Zaman, 8 Haziran 2014, [http://www.zaman.com.tr/pazar\\_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu\\_2222897.html](http://www.zaman.com.tr/pazar_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu_2222897.html)

ծում ունեին և որոշ առումներով նրանք անքննելի առաջնորդներ էին և նորամուծումների հեղինակներ: Ինչպես, օրինակ՝ արտաքսումը, զանգվածային բռնությունները, սոցիալական և ժողովրդագրական պարտադրված փոփոխությունները, էթնիկ զտումները և, իհարկե, ցեղասպանությունը: Ավելին, ֆաշիզմի բնորոշ դրսևորումներից մեկի՝ ծայրահեղ-ազգայնամոլության դրևորումներից երկուսը՝ պարտադրված ասիմիլացիան և միատարր էթնիկ համայնքի ձևավորումը, հոմոգենիզացիան (թուրքացումը), Թուրքիայում կիրառվում էր ֆաշիզմի համաեվրոպական փուլի ամբողջական ծավալով գործարկումից տասնամյակներ առաջ: Զտարյուն թուրքական ազգ և միատարր հասարակություն ձևավորելու գործընթացը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում սկսվեց 1915 թ. ցեղասպանությամբ, այնուհետ ընդգրկեց հույների, ասորիների դեմ իրականացված զանգվածային կոտորածները: Այս փուլին հետևեցին 1923-1939 թթ. ընթացքում ոչ թրքախոս մահմեդականների ներգաղթը և նրանց պարտադրված միաձուլումը թուրքական հասարակության մեջ, դրան հետևեցին 1934 թ. Թրակիայում հրեաների դեմ իրականացված բռնությունները, նրանց հարկադիր տեղաշարժը, 1941 թ. քրիստոնեաների հավաքագրումը աշխատանքային ճամբարներում, Ունեցվածքի հարկը՝ 1942 թ., հակաքրիստոնեական բռնությունները և այլն:

Տոտալիտար գաղափարախոսությունները ձգտում են ոչնչացնել անմիջական անցյալը և վերածնել նոր իրականությունը, և շատ դեպքերում բռնությունը դառնում է այս արագ կերպափոխման միակ ընդունելի ուղին: Իսկ հեղափոխականությունը դառնում է այդ նոր «ճշմարտության» իրականացման միակ մեթոդը, կամ այն մտացածին ռացիոնալիզմը կամ կեղծ-ռացիոնալիզմը, որի շուրջ ծավալվում է նոր հասարակական կազմակերպվածության ձևը: Ֆաշիստական գաղափարախոսություններին բնորոշ մի շարք դրսևորումներ, ինչպիսիք են անավարտ հեղափոխականության ընկալումը, գաղափարախոսություն և խորհրդանիշների բռնություն, ներքին անհամապատասխանողների վերացումը, լեզենդների ստեղծումը, կուսակցական էլիտիզմը, ուղղիչ աշխատանքային ճամբարները, քաղաքական սպանությունները իրենց դրսևորումը ստացան Թուրքիայում ևս: Հարկ է նաև նկատի ունենալ, որ ֆաշիզմի այս կամ այն ձևերը առաջ բերեցին դրանց կրկնօրինակողների: Տոտալիտար գաղափարախոսությունները իրենց բնույթով ուտոպիստական են, իսկ էությամբ՝ ծայրահեղական:

Ամփոփելով կարող ենք նաև առաջարկել մի փուլաբաժանում, որ ֆաշիզմը Թուրքիայում կոփտարկի շարունակականության համատեքստում: Առաջին փուլը՝ 1910–ական թթ., որը կարելի է կոչել պրոտո–ֆաշիստական փուլ, քանի որ այն առաջին հնարավորությունն էր տարերայնորեն մշակված և նույն տարերայնությամբ ներմուծված գաղափարախոսությունների կենսագործման համար: Այս փուլն իր քաղաքական հետևանքներով «ամենաարդյունավետն» էր, երբ հաշված ամիսների ընթացքում, օգտվելով համաշխարհային պատմության ընձեռած հնարավորությունից երիտթուրքերը իրագործեցին Հայոց ցեղասպանությունը և հիմք դրեցին անատոլիակենտրոն և թուրքակենտրոն հասարակական կառուցվածք ձևավորելու գործին: Երկրորդ շրջանը 1920–ական թթ. են՝ ֆաշիզմի գաղափարախոսական հիմնադրույթների բյուրեղացման շրջանը, երբ քեմալականների իշխանության գալով փոխվեց ձևը, սակայն ոչ բովանդակությունը և նպատակները: Երրորդ շրջանը՝ 1930–ական թթ. են բարձրագույն քեմալիզմի և ոչ եվրոպական ֆաշիզմի ժամանակաշրջանը: Վերջին շրջանը՝ 1940–ական թթ. են, երբ Թուրքիայում կրկին ակտիվացան երիտթուրքերը և առաջ քաշվեց պանթուրքիզմի գաղափարախոսության վերակենդանացման թեզերը: Թուրքիան ձգտում էր ստեղծել նոր պետություն, նոր ազգ, նոր քաղաքակրթություն, նոր հասարակություն և այդ նպատակներին հասնելու ճանապարհն անհնար էր անցնել առանց ֆաշիզմի և տոտալիտար գաղափարախոսության տարատեսակներին բնորոշ այլ փուլերի:

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂՐԻՄԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Ղրիմի թերակղզին և այնտեղ ապրող թաթարները ավանդաբար եղել են Թուրքիայի արտաքին քաղաքականության հետաքրքրությունների շրջանակում: Ուստի բնական է, որ պաշտոնական Անկարան, որն իրեն դիրքավորում է որպես տարածաշրջանային խաղացող, չէր կարող անտարբեր մնալ 2013 թ. վերջից Ուկրաինայում ծավալվող ճգնաժամի, առավել ևս՝ 2014 թ. մարտին Ղրիմի Ռուսաստանին միացման նկատմամբ: Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնելու Թուրքիայի քաղաքականությունը Ղրիմի ճգնաժամի կապակցությամբ, դիտարկելու հիմնական քաղաքական ուժերի մոտեցումները Ղրիմի խնդրին, ինչպես նաև լուսաբանելու այդ խնդրի ծագման պատմական առանձնահատկությունները և թուրքական քաղաքական օրակարգում դրա ակտուալացմանը նպաստող գործոնները:

Սև ծովը մշտապես եղել է քաղաքական պայքարի ու դաժան պատերազմների ասպարեզ. այս տարածաշրջանի պետությունները միշտ փորձել են ուժեղացնել այստեղ իրենց ռազմական և աշխարհաքաղաքական հնարավորությունները: Ղրիմի միացումը Ռուսաստանին ռազմավարական առումով փոփոխում է գերիշխող երկրների ազդեցությունը սևծովյան տարածաշրջանում հօգուտ Ռուսաստանի: Ստամբուլի համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսոր Շեներ Աքթուրքը, խոսելով թուրքական շահերի վրա Ուկրաինայի ճգնաժամի ունեցած ազդեցությունների տեսանկյունից, հետևյալն է նշում. «Ղրիմի թերակղզին տեղակայված է ամենակարևոր, ռազմավարական կետում, որը թույլ է տալիս վերահսկելու Սև ծովը: Այն, որ հիմա Ռուսաստանը պաշտոնապես և փաստացիորեն ղեկավարում



է Ղրիմը, նշանակում է, որ Ռուսաստանը կրկին դառնում է գլխավոր ուժը Սև ծովում, ինչպես Սառը պատերազմի և նրա սկսվելուց 200 տարի առաջ էր: Եվ Թուրքիայի համար դա Ուկրաինայի ճգնաժամի ամենաբացասական հետևանքն է: ԽՍՀՄ-ի փլուզման և սառը պատերազմի ավարտի մեջ Անկարայի համար ամենամեծ օգուտը կայանում էր նրանում, որ Ռուսաստանը, ի դեմս որի Թուրքիան 300 տարվա ընթացքում տեսնում էր գլխավոր աշխարհաքաղաքական սպառնալիքը, նահանջեր դեպի Կովկասի հյուսիսը և զրկվեր Սև ծովում իր ունեցած ազդեցությունից: Մենք չպետք է մոռանանք, որ Թուրքիան ունի խոր մշակութային կապեր Ղրիմյան թաթարների հետ: Այդ տեսանկյունից Ռուսաստանը խլել է Թուրքիայի համար Ուկրաինայի կարևորագույն մասը»<sup>1</sup>:

Ղրիմի թերակղզին և այնտեղ ապրող թաթարները միշտ էլ եղել են Թուրքիայի ուշադրության կենտրոնում: Ղրիմի խանությունը (ստ. 1441 թ.) մի քանի հարյուրամյակ (1475–1783 թթ.) գտնվել է Օսմանյան կայսրության ենթակայության տակ, իսկ Ռուսական կայսրությանն է միացվել 230 տարի առաջ՝ համաձայն կայսրուհի Եկատերինա II-ի՝ 1783 թ. մանիֆեստի: Ղրիմի թերակղզու՝ Ռուսական կայսրությանը միանալուց հետո շատ թաթարներ արտագաղթում են Թուրքիա: Արտագաղթի մեծ ալիք տեղի ունեցավ 1853–1956 թվականներին, երբ Ղրիմի պատերազմում կրած պարտության պատճառով ռուսները թուրքերին զիջեցին Օսմանյան կայսրությունից նախկինում գրաված որոշ տարածքներ, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում և այդ գնով կարողացան պահպանել Ղրիմը: 1917–1920-ական թվականների քաղաքացիական պատերազմի ժամանակ ևս մի քանի անգամ Ղրիմը ձեռքից ձեռք անցավ, ինչի հետևանքով ղրիմաթաթարների զգալի հատված կրկին հայտնվեց Թուրքիայում<sup>2</sup>: Այսպիսով, ներկայումս Թուրքիայում գոյություն ունի մեծ ղրիմաթաթարական համայնք: Թուրքիայում ղրիմաթաթարների թիվը հասնում է մի քանի հարյուր հազարների, սակայն հստակ թվերը բացակայում են, քանի որ Թուրքիայում չեն հրապարակվում երկրի էթնիկ կազմի տվյալները: Թուրքական «Թեմփո» ամսագրի տվյալներով՝ Թուրքիայի այն բնակիչների ընդհանուր թիվը, որոնց նախնիները ժամանակին արտագաղթել են Ղրիմից, կազմում է շուրջ 5–6 միլիոն, սա-

<sup>1</sup> Kamil Arlı, “Türkiye son 6 yılda Rusya’ya 3 defa mağlup oldu”, Zaman, 8 Haziran 2014, [http://www.zaman.com.tr/pazar\\_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu\\_2222897.html](http://www.zaman.com.tr/pazar_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu_2222897.html).

<sup>2</sup> Я. Водарский, О. Елисеева, В. Кабузан, Население Крыма в конце XVIII – конце XX веков. (Численность, размещение, этнический состав), Москва, 2003.

կայն դրանց մեծ մասը ձուլվել է տեղացի թուրքերի հետ և իրեն համարում է ոչ թե դրիմաթաթար, այլ դրիմական ծագում ունեցող թուրքեր<sup>3</sup>: Դրիմաթաթարները բնակվում են Թուրքիայի տարբեր քաղաքներում՝ Անկարայում, Ադանայում, Ստամբուլում, սակայն որևէ վայրում չունեն հոծ ներկայություն: Բացառություն է էսքիշեհիր քաղաքը, որտեղ ապրում է մոտ 200 հազար Դրիմի թաթար: Թուրքիայի դրիմաթաթարները պահպանել են իրենց լեզուն ու մշակույթը և ուժեղ լոբբի ունեն Թուրքիայում: Նշենք, օրինակ, որ նախկին արտգործնախարար և ներկայիս վարչապետ Ահմեդ Դավութօղլուն բազմիցս հիշատակել է իր ընտանիքի անդամների դրիմաթաթարական ծագման մասին: Այսպիսով, չնայած այն բանին, որ Օսմանյան կայսրության տարածքից Դրիմը դուրս է եկել մոտ 200 տարի առաջ, այնուամենայնիվ, Թուրքիայի և Դրիմի թաթարների սերտ կապերը պահպանվել են:

Դրիմի թաթարները դառը հիշողություններ են պահպանել 1944 թվականի բռնագաղթի վերաբերյալ, որի ժամանակ նրանց կտրեցին իրենց հայրենի թերակղզուց: 1944 թ.՝ Դրիմը ֆաշիստական զորքերից ազատագրելուց անմիջապես հետո, ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (НКВД) կողմից իրականացվել է տեղի ժողովուրդների զանգվածային տեղահանություն: Պաշտոնական հիմնավորմամբ՝ Դրիմի թաթարական բնակչությունը ակտիվորեն կամավոր աջակցել է ֆաշիստական զորքերին և կովել խորհրդային բանակի դեմ: Տարբեր տվյալներով՝ Ուզբեկստանի, Ղազախստանի, Տաջիկստանի խորհրդային հանրապետություններ և այլ վայրեր են արտաքսվել մոտ 180 հազար Դրիմի թաթարներ: Արտաքսման ենթակա դրիմաթաթարների հետ միևնույն ցուցակում են եղել նաև գնչուներ և թուրքեր: Դաժան ճամփորդության ժամանակ նրանց գրեթե կեսը մահացել է: Դրիմի թաթարներին արտաքսելուց հետո մեկ այլ հրամանագրով տեղահանվել են տասնյակ հազարավոր հայեր, հույներ և բուլղարներ: Գորբաչովյան վերակառուցման (перестройка) տարիներին՝ 1980-ականների վերջին, թաթարներին թույլ են տվել վերադառնալ<sup>4</sup>: Դրիմի բնակչության (2013

<sup>3</sup> Togrul Ismail, “Turkish-Crimean relations in the new geopolitical conditions (1991-2011yy.)”, in “İlmiy Qırım” milliy mecmua, (Тогрул Исмаил, “Турецко-крымские отношения в новых геополитических условиях (1991-2011гг.)”, <http://ilmiyqirim.blogspot.com/2014/12/1991-2011.html>. Տե՛ս նաև Henryk Jankowski, “Crimean Tatars and Noghais in Turkey”(International\_Committee forCrimea), <http://www.crimean.org/forum/viewtopic.php?f=1&t=3569>

<sup>4</sup> Постановление ГКО СССР № ГОКО-5859 от 11 мая 1944 г. за подписью И. В. Сталина, в кн. В. А. Бердинских, Спецпоселенцы: Политическая ссылка

թ. տվյալներով՝ մոտ 2 մլն. մարդ՝ առանց Սևաստոպոլի) մոտ 60% ռուսներ են կամ ռուսախոս այլ ազգություններ, 25% ուկրաինացիներ են, մոտ 14%ը՝ Ղրիմի թաթարներ: Այստեղ ապրում են նաև հայեր (10000–ից ավելի), բուլղարներ, հույներ, հրեաներ, գնչուներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ: 1991 թ. Ուկրաինայի հանրապետության կազմում ձևավորվել է Ղրիմի Ինքնավար Հանրապետությունը և հանրապետական նշանակության կարգավիճակով Սևաստոպոլ քաղաքը:

1954 թ. ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն. Խրուշչովի առաջարկությամբ Ղրիմի շրջանը և հանրապետական նշանակության Սևաստոպոլ քաղաքը Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կազմից փոխանցվել է Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը, դրա փոխարեն՝ ՌԽՖՍՀ–ին փոխհատուցելով հավասարամեծ մի հողատարածք՝ Ուխտկ–ի կազմի մեջ մտնող Տագանրոգ քաղաքը և դրան հարակից շրջանը (ԽՄԿԿ ԿԿ Գերագույն խորհրդի №49 արձանագրություն առ 25 հունվարի, 1954 թ.): 1954 թ. փետրվարի 19–ին հրապարակված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության այդ հրամանագիրը Թուրքիայում աննկատ չանցավ: Թուրքական որոշ լրատվամիջոցներ նշում էին, որ Ռուսաստանը խախտում է դեռևս 18–րդ դարում Օսմանյան կայսրության հետ կնքված իր համաձայնագրերը Ղրիմի կարգավիճակի վերաբերյալ և դրանով իսկ հիմք է ստեղծում «Ղրիմյան հարցի» քննարկման համար՝ երկկողմանի և միջազգային ձևաչափերով: Հոդվածագիրները նշում էին, որ Թուրքիան նախօրոք տեղյակ չի պահվել Ղրիմի՝ Ուկրաինային փոխանցելու մասին և վկայակոչում էին 1774 թ. Քյուչուկ–Քայնարջի պայմանագիրը, որով Ղրիմի թերակղզին Օսմանյան կայսրությունից անցնում էր Ռուսաստանին, սակայն հատուկ կետով նշվում էր, որ թերակղզին չի կարող անկախանալ կամ տրվել երրորդ կողմին, հակառակ դեպքում պետք է վերադարձվի թուրքական կողմին:

Մինչդեռ այդ ժամանակահատվածում ԽՍՀՄ–ի հետստալինյան ղեկավարությունն ամեն կերպ ձգտում էր մեղմացնել Թուրքիայի հետ հարաբերություններում լարվածությունը: Այսպես, 1953 թ. մայիսին ԽՍՀՄ–ը նոտա ուղարկեց Անկարային, որում ասվում էր, որ պաշտոնական Մոսկվան հրաժարվում է Թուրքիայի նկատմամբ ցանկացած տարածքային պահանջներից, ինչպես նաև նեղուցների ռեժիմի հարցն առաջարկում է քննարկել

երկկողմանի ընդունելի պայմաններով<sup>5</sup>: Սակայն Թուրքիան այլևս ԽՍՀՄ-ի հետ իր հարաբերությունները դիտարկում էր ոչ այնքան երկկողմանի, այլ ավելի լայն՝ ԽՍՀՄ-Արևմուտք հարաբերությունների ծիրում: Ուստի պաշտոնական Անկարան որոշեց ժամանակավորապես հետաձգել իր «ղրիմյան հավակնությունները»՝ սպասելով հարմար առիթի: 1961 թ. Կարիբյան ճգնաժամից հետո Թուրքիայի տարածքում ամերիկյան միջին տարածության հրթիռների տեղադրումը խորհրդա-թուրքական հարաբերությունների սրման պատճառ դարձավ, իսկ 1968 թ. Չեխոսլովակիայի հայտնի դեպքերը հանգեցրին ԽՍՀՄ - Արևմուտք դիմակայության ուժգնացմանը: Այս պայմաններում Թուրքիան «հիշեց» Ղրիմի հարցը և սկսեց համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարան հայցով դիմելու ուղղությամբ: 1968 թ. վերջին «Ղրիմյան հայցը» ներկայացվեց դատարան: Անկարան, վկայակոչելով 1774 թ. Քյուչուկ-Քայնարջի պայմանագիրը, ըստ որի Թուրքիան ճանաչում էր թերակղզու նկատմամբ միայն Ռուսաստանի և ո՛չ այլ երկրի ինքնիշխանությունը, առաջարկում էր քննարկել Ղրիմի Թուրքիայի կազմում ինքնավար կարգավիճակի վերականգնումը: Սակայն 1969 թ. Միջազգային դատարանը մերժեց Թուրքիայի հայցն այն հիմնավորմամբ, որ նշված պարագայում տվյալ տարածքի փոխանցումը տեղի է ունեցել մեկ պետության՝ ԽՍՀՄ-ի կազմում, որն իրավաբանորեն ներկայացնում է նաև Ռուսաստանը<sup>6</sup>: Դատարանում ձախողվելուց հետո Անկարան որոշ ժամանակով դադարեց բացելիքաց խոսել Ղրիմի հարցի մասին:

1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումից և Ուկրաինայի անկախացումից հետո Ղրիմի նշանակությունը՝ որպես Թուրքիայի ու Ռուսաստանի միջև դիմակայության գործոն կրկին կարևորվեց: Սակայն ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն չէին ցանկանա Ղրիմը տեսնել ո՛չ թուրքական, ո՛չ էլ ռուսական ազդեցության գոտում, և նրա պատկանելությունն

<sup>5</sup> Idil Pembe Izmirli and Sezai Ozcelik, “Sources Of Ethnic Conflicts and Conflict Resolution in Crimean Peninsula: Deportation (Sürgün), Repatriation and Crimean Tatars”, <http://www.turkishweekly.net/article/97/sources-of-ethnic-conflicts-and-conflict-resolution-in-crimean-peninsula-deportation-surgun-repatriation-and-crimean-tatars.html>

<sup>6</sup> ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացվող տարածքային պահանջների մասին տե՛ս Ս. Корхмазян, “Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании”, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVI, Եր., 1996, էջ 20–33; Ք. Մելքոնյան, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները, Հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945–1947 թթ.), Եր., 2013:

Ուկրաինային ձեռնտու էր Արևմուտքին: Թուրքիան իր հերթին հատուկ կարևորություն էր տալիս Ուկրաինայի հետ հարաբերություններին: Հարկ է նշել, որ Թուրքիայում ուկրաինական խնդրի գիտակցումը սկիզբ էր առել դեռ Առաջին Աշխարհամարտի տարիներին, երբ Ուկրաինայի ազատագրումը թուրքական կառավարությունը որոշեց ծառայեցնել իր աշխարհաքաղաքական շահերին: Դեռևս մինչև Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը Ուկրաինայի ազատագրության միությունը(ՈՒԱՄ) հանդես եկավ թուրք ժողովրդին ուղղված հայտարարությամբ: Այդ ուղերձը առաջին պաշտոնական փաստաթուղթն էր Ուկրաինայի և Թուրքիայի նոր շրջանի հարաբերություններում: Ուկրաինան և Թուրքիան համարվում էին դաշնակիցներ, որոնք ունեին ընդհանուր հակառակորդ՝ ի դեմս ռուսական ցարիզմի: ՈՒԱՄ-ի ներկայացուցիչները նույնիսկ հանդիպում ունեցան Էնվեր և Թալեթ փաշաների հետ: Նրանք որջունեցին Ռուսաստանի փլատակերի վրա ուկրաինական անկախ պետություն ստեղծելու ձգտումը, որը պատնեշ կհանդիսանար դեպի Բալկաններ և Միջերկրական ծով Ռուսաստանի էքսպանսիային: Նրանք հայտարարում էին, որ Բարձր Դուռը ճանաչում է Ուկրաինայի՝ ռուսական պետությունից անջատվելու անհրաժեշտությունը, և որ պատերազմում Ռուսաստանի ջախջախումից հետո օսմանյան կառավարությունը պատրաստ կլինի աջակցել ուկրաինական ժողովրդին ստեղծել անկախ պետականություն: Համարվում էր, որ ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությունը, Ուկրաինայի անջատումը Ռուսաստանից մեծ հարված կհասցներ Ռուսաստանի ավանդական քաղաքականությանը և կազատեր Թուրքիային շուրջ 200 տարի սպառնացող վտանգից<sup>7</sup>:

1991 թ. գարնանը Ուկրաինա այցելեց Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը: Արդեն այդ շրջանում ուկրաինական կողմը հավանության արժանացրեց Թուրքիայի մտադրությունը ստեղծել սևծովյան տնտեսական համագործակցության գոտի՝ որպես Եվրոպայում ինտեգրացիոն գործընթացների զարգացման ուղիներից մեկը<sup>8</sup>: Ինչպես նշում է թուրք փորձագետ Քամիլ Արլըն, Անկարայի կոնցեպտուալ մոտեցումը կայանում էր նրանում, որ շնորհիվ անկախ Ուկրաինայի և Վրաստանի Թուրքիան յուրա-

<sup>7</sup> А. Балиев, “Крымская карта в турецкой игре”, [http://www.stoletie.ru/geopolitika/krymskaja\\_karta\\_v\\_tureckoj\\_igre\\_537.htm](http://www.stoletie.ru/geopolitika/krymskaja_karta_v_tureckoj_igre_537.htm)

<sup>8</sup> Sև՝ u Н. Несук и Н. Ксёндзик, “Украина во внешней политике Турции”, глава 6 в кн. Украинская государственность в XX веке (историко-политический анализ), Киев, 1996, <http://litopys.org.ua/ukrxxr/zmist.htm>

տեսակ «բուֆերային» գոտիներ էր ստանում ցամաքում և ծովում, ինչը հավասարակշռություն էր ստեղծում տարածաշրջանում և նվազեցնում Ռուսաստանի հզորությունը: Նա եզրակացնում է. «Եթե Վրաստանը վերանա որպես ինքնիշխան պետություն, Թուրքիան և Ռուսաստանը նորից կդառնան մայրցամաքային հարևաններ, իսկ դա ընդհանրապես ցանկալի արդյունք չէ Թուրքիայի համար: Երկրորդ հերթին՝ ուկրաինական ճգնաժամ. Ռուսաստանը գրավեց Ղրիմը: Իսկ դա նորից Ռուսաստանին Սև ծովում գերիշխող ուժ է վերադարձնում: Դա ևս չի կարող ցանկալի իրադարձություն լինել Թուրքիայի համար»<sup>9</sup>:

1990-ական թվականների սկզբներից Թուրքիան աջակցություն է ցուցաբերում Ղրիմին, այնտեղ ներդրումներ կատարում: Ղրիմի տարածքում թուրքական ֆոնդեր են գործում, մասնավորապես Թուրքիայի նախարարների խորհրդի Թյուրքական զարգացման և համագործակցության գործակալությունը (TIKA): Գործում են Թուրքիայի կողմից ֆինանսավորվող դպրոցներ: Այնպիսի երիտասարդական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Ղրիմի թաթարների մշակույթի և փոխօգնության ֆոնդը, Էմել, Ղրիմի զարգացման ֆոնդերը, ինչպես նաև դրիմաթաթարական ազգի Մեջլիսի գործունեությունը ֆինանսավորվում է վերը նշված գործակալության կողմից: Պատահական չէ, որ Ղրիմի համայնքների ֆեդերացիան, որը Ղրիմի թաթարներին միավորող առաջատար կազմակերպություն է, Թուրքիային կոչերով է դիմում՝ պաշտպանել թերակղզում մնացած հայրենակիցների անվտանգությունը: Այսպիսով, երկար տարիներ Թուրքիան հետևողական ֆինանսական, քարոզչական և կազմակերպչական աշխատանքներ էր տանում Ղրիմում սեփական դիրքերն ամրապնդելու և հանձինս տեղի թաթարների՝ աշխարհաքաղաքական պատվար ունենալու համար<sup>10</sup>: Ռուսաստանյան որոշ փորձագետներ նույնիսկ պնդում են, որ թուրքական հետախուզական գերատեսչությունը (MIT) դրիմաթաթարներից գաղտնի զինված ջոկատներ էր կազմավորում՝ դրանց հարմար պահի գործի դնելու նպատակով: Նրանք ֆինանսավորվում էին անկախ «Imdat» («Վերադարձ») բանկի միջոցով, վարժանքներ էին անցնում թուրքական ճամբարներում և վերահսկում թերակղզում վերաբնակեցվող դրիմաթաթարներ-

<sup>9</sup> Д. Шевелев, "Украино-турецкие отношения: эскизы к стратегии и тактике", «Новое восточное обозрение», <http://www.journal-neo.com/> 21.05.2010

<sup>10</sup> Kamil Arlı, "Türkiye son 6 yılda Rusya'ya 3 defa mağlup oldu", Zaman, 8 Haziran 2014, [http://www.zaman.com.tr/pazar\\_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu\\_2222897.html](http://www.zaman.com.tr/pazar_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu_2222897.html)

րին կառուցապատման նպատակով տրամադրվելիք գումարները: Այդ ջոկատներն իրենց մարտունակությունն ու կազմակերպվածությունը ցուցաբերել են ուկրաինական իրավապահների հետ մի շարք ընդհարումների ժամանակ, երբ ղրիմաթաթարների բողոքի ակցիաները երբեմն ուղեկցվել են նույնիսկ հրազենի գործադրմամբ<sup>11</sup>:

Սակայն կիևյան Մայդանը և դրան հետևած Ղրիմյան զարգացումները կարծես թե խառնեցին Անկարայի բոլոր «խաղաթղթերը»: Թուրքիան կանգնեց երկու քարի արանքում. մի կողմից կորցնում էր ռազմավարական նշանակության կարևոր օբյեկտ, միևնույն ժամանակ չէր կարող ոտք մեկնել Ռուսաստանի հետ և Ղրիմի առնչությամբ կտրուկ գործողությունների դիմել: Երբ իրավիճակը Ղրիմում թեժացավ, թուրք հողվածագիրներն ու մեկնաբանները մեկը մյուսի հետևից խոսում էին պատմական արդարության մասին և հայտարարում, որ Ղրիմը պետք է մտնի Թուրքիայի տիրապետության տակ<sup>12</sup>: Փետրվարի 28-ից մարտի 1-ը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն աշխատանքային այցով մեկնեց Ուկրաինա, որտեղ հանդիպելու էր «բոլոր շահագրգիռ կողմերի» հետ: Թե՛ Ուկրաինայի ղեկավարների, թե՛ Ղրիմի թաթարների հետ իր ունեցած հանդիպումներում նա ընդգծում էր, որ Ղրիմի հարցը պետք է լուծվի Ուկրաինայի տարածքային ամբողջականության շրջանակներում, նաև առաջարկում էր Թուրքիայի միջնորդությունը: Ղրիմի թաթարների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում նա հավաստիացնում էր, որ Թուրքիան իրադարձություններից դուրս չի մնալու, և իրենք առաջինն են շտապելու նեղության մեջ հայտնված իրենց եղբայրներին (թաթարներին) օգնության: Ակնհայտ էր, որ Անկարան չի պատրաստվում բացահայտորեն ներքաշվել Ղրիմում տեղի ունեցող գործընթացների մեջ, բայց նաև չի հրաժարվում կողմերի միջև միջնորդ լինելուց: Սակայն Անկարայի ջանքերն արդյունք չտվին և ի զորու չեղան կանխել մարտի 16-ի՝ թերակղզու կարգավիճակի մասին հանրաքվեի արդյունքները: Ղրիմի թաթարները հանրաքվեի ընթացքում հիմնականում դեմ են արտահայտվել Ղրիմը՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելուն և

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս «Турецко–крымские отношения в новых геополитических условиях (1991–2011 гг.)», <http://ilmiyqirim.blogspot.com/2014/12/1991–2011.html>

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, С. Балмасов, «Турецкий «джокер» в схватке России и Запада за Крым», 6.03.2014, <http://www.news Balt.ru/detail/?ID=20426>

հանդես են եկել Ուկրաինայի կազմի մեջ մնալու և այդ երկրի տարածքային ամբողջականության օգտին:

Ղրիմի միացումը Ռուսաստանին թուրքական ՁԼՄ-ներից շատերը գնահատեցին որպես Անկարայի արտաքին քաղաքականության պարտություն, որակելով աշխարհաքաղաքական այդ շրջադարձը որպես «աշխարհագրության փոխվրեժ»<sup>13</sup>: Թուրքական «Ջաման» օրաթերթը գրում էր. «վերջին 25 տարվա ընթացքում Թուրքիան պետք է, վարելով ավելի ակտիվ դաշնակցություն, ապահովեր Միջին Ասիայում և աշխարհի այլ անկյուններում ապրող ղրիմյան թաթարների վերադարձը դեպի Ղրիմ: Այդ ժողովրդի վերադարձը պատմական հայրենիք օրինական և ողջամիտ իրավունք է՝ ճանաչված միջազգային հանրության կողմից: Եթե դա արվեր ժամանակին, այսօր, հավանաբար, ղրիմյան թաթարների թիվը Ղրիմում կկազմեր ոչ թե 15%-ը, այլ 30-35%-ը, իսկ Ղրիմը չէր ենթարկվի բռնազավթման, քանի որ էթնիկ ռուսները մեծամասնություն չէին կազմի»: Թուրքիայի արկածախնդրական քաղաքականությունը նույնպես քննադատության էր ենթարկվում. «Խառնվելով Սիրիայի ճգնաժամին՝ Թուրքիան խոշոր պարտություն կրեց: Օրինակ, Իրաքի անհաջողությունից հետո Ամերիկան իրեն շատ մեկուսացած է պահում և զսպում է իրեն Սիրիայի միջամտությունից: Եվ ակնհայտ է, Թուրքիան կխուսափի միջամտել որևէ երկրի քաղաքականությանը Սիրիայի պարագայում ունեցած նման խոշոր պարտությունից հետո: Կողմերը, որոնց Թուրքիան աջակցում էր՝ Եգիպտոսում, Սիրիայում, Վրաստանում՝ պարտություն կրեցին: Այսօր Մերձավոր Արևելքում փաստացիորեն չի մնացել որևէ դաշնակից պետություն Թուրքիայի համար: Ոչ մեկը այնպիսի առանցքային մայրաքաղաքներից, ինչպիսիք են Դամասկոսը, Թեյ-Ավիվը, Կահիրեն, Բաղդադը, ոչ միայն Թուրքիային չեն համարում իրենց դաշնակից, այլև բացերբաց սկսում են տեղ գրավել հակառակ կողմում: Անհաջողության պատճառն այն է, որ Թուրքիան չփորձեց վարել այնպիսի արտաքին քաղաքականություն, որը կլիներ իր ներուժի ուղիղ համեմատականը»<sup>14</sup>: Գնահատական տալով Անկարայի արտաքին քաղաքականությանը, Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը եզրակացնում է. «Դավութօղլու-

<sup>13</sup> St' u Nerdu Hacıoğlu, "Ukrayna parçalanırsa, Türkiye'nin Kırım hakkı doğar", Hürriyet: 29 Ocak 2014, <http://www.hurriyet.com.tr/dunya/25693129.asp>

<sup>14</sup> Semih Idiz, "Turkey faces «geography's revenge» in Crimea", <http://www.al-monitor.com/pulse/ru/originals/2014/03/turkey-crimea-policy-russia-strategy-tatars-geography-rights.html#ixzz3MWtlocfv>



լի և Էրդողանի հայտարարած քաղաքականությունը՝ զրո խնդիր հարևանների հետ, դարձավ զրո հարևան՝ առանց խնդրի»<sup>15</sup>:

Թուրքիան ի սկզբանե հայտարարել էր, որ չի ճանաչելու Ղրիմի միացումը Ռուսաստանին<sup>16</sup>: Էրդողանն այդ դիրքորոշումը հաստատել էր նաև Ղրիմի թաթարների Մեջլիսի նախկին ղեկավար Մուստաֆա Ջեմիլի հետ հանդիպման ժամանակ: Թուրքիայի պաշտոնյաները հավաստիացրել էին, որ Անկարան փորձելու է աջակցել Ղրիմի թաթարներին տարբեր միջոցներով, այդ թվում ֆինանսապես, որպեսզի տեղի թաթարները չլքեն թերակղզին և շարունակեն լինել ինքնուրույն դերակատար և հակակշիռ՝ ռուսական գործոնին և Մոսկվայի շահերին թերակղզում: Ավելացնենք, որ Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուի ներկայացրած 62-րդ կառավարության ծրագրում տեղ է հատկացվել ուկրաինական ճգնաժամին, Ուկրաինան որակվել է որպես Թուրքիայի ռազմավարական գործընկեր երկիր, իսկ Ղրիմի թաթարների անվտանգության ապահովումը՝ որպես առաջնահերթություն թուրքական կառավարության համար<sup>17</sup>:

Թուրքիայի համար ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ Ղրիմի թաթարներին բացահայտ աջակցելու և ֆինանսավորելու ծրագրերը Մոսկվայի կողմից կարող են դիտվել որպես Ռուսաստանի ներքին գործերին միջամտություն, քանի որ Ղրիմն այսօր Ռուսաստանի դաշնային սուբյեկտ է: Բացի դրանից՝ Թուրքիան է ներգետիկ մեծ կախվածություն ունի Ռուսաստանից՝ գազի առաքում, շուտով սկսվելու է նաև ատոմակայանների կառուցումը, ռուս զբոսաշրջիկները տասնյակ միլիոնավոր դուլարների եկամուտներ են բերում՝ այցելելով Թուրքիայի միջերկրածովյան հանգստավայրեր, Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների պայմաններում թուրք ապրանքահանողներն արտոնյալ կարգավիճակ են ստանում և այլն:

Չի բացառվում, այնուամենայնիվ, որ Անկարան փորձելու է օգտագործել Ղրիմի թաթարներին որպես այսպես կոչված 5-րդ

<sup>15</sup> Kamil Arlı, “Türkiye son 6 yılda Rusya’ya 3 defa mağlup oldu”, Zaman, 8 Haziran 2014, [http://www.zaman.com.tr/pazar\\_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu\\_2222897.html](http://www.zaman.com.tr/pazar_turkiye-son-6-yilda-rusyaya-3-defa-maglup-oldu_2222897.html)

<sup>16</sup> «Թուրքիան պարտվեց Ղրիմի հարցում, սակայն Ռուսաստանի դեմ գործողություններ իրականացնել չի շտապում», <http://artsakhpress.am/arm/news/596/turciya-proigrala-v-kriymskom-voproseno-odnoznachno-ne-mozhet-viystupit-protiv-rossii.html>

<sup>17</sup> Տե՛ս «Թուրքիան չի ճանաչում Ղրիմում անցկացված հանրաքվեն», <http://civilnet.am/2014/03/18/turkey-mfa-statement-crimea-referendum/#.VT5pBCGqqko>

շարասյուն՝ թերակղզում հարմար առիթի դեպքում անկայունության օջախ ստեղծելու համար, մեծ զգուշավորությամբ և հնարավոր է՝ Կիևի իշխանությունների միջոցով<sup>18</sup>:

Պետք է նշել, որ Ղրիմի թաթարների գործոնը հաշվի է առնում նաև Մոսկվան և պատահական չէ, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը մինչև հանրաքվեն հանդիպել էր Մուստաֆա Ջեմիլևի հետ և հայտարարել, որ Ղրիմի թաթարների իրավունքները հարգվելու են: Բացի այդ՝ արդեն հանրաքվեից հետո Պուտինը հայտարարել էր, որ Ղրիմում պետք է լինի երեք պետական լեզու՝ ռուսերեն, ուկրաիներեն և թաթարերեն: Այսինքն՝ Ռուսաստանը ցանկանում է ամեն գնով շահել Ղրիմի թաթարների վստահությունը, տրամադրել նրանց լայն իրավունքներ՝ Ղրիմի կառավարությունը որոշում է կայացրել թաթարներին կառավարման բոլոր օղակներում տեղեր հատկացնելու և այսպիսով թույլ չտալու Ղրիմի թաթարների մարգինալացումը կամ շարժը՝ Կիևի, Անկարայի, Բրյուսելի ուղղությամբ<sup>19</sup>:

Կիևի այսօրվա իշխանությունները նույնպես ցանկանում են թերակղզում ունենալ իրենց հակառուսական դաշնակիցներին՝ ի դեմս Ղրիմի թաթարների, և պատահական չէ, որ Գերագույն ռադան Ղրիմի թաթարների վերաբերյալ օրենք է ընդունել, որտեղ նրանք հռչակվում են որպես թերակղզու բնիկ ազգ: Կիևը հավանաբար փորձելու է հասնել նրան, որ Ղրիմի թաթարները իրենց կոմպակտ բնակության վայրերում առանձին հանրաքվե անցկացնեն և հայտարարեն միասնական Ուկրաինայի կազմում մնալու մասին և դա կներկայացնեն որպես ազգերի ինքնորոշման իրավունք՝ օրինակ բերելով Ղրիմի ամբողջ բնակչության ինքնորոշման իրավունքը:

Այսպիսով՝ Ռուսաստանի համար Ղրիմում ներքին խնդիրներ առաջացնելու, ազդեցության սեփական հենասյունն ունենալու համար Անկարան, Կիևը և Արևմուտքը կօգտագործեն Ղրիմի թաթարների գործոնը՝ ռուսական ազդեցությունը Ղրիմում թուլացնելու, իսկ հնարավորության դեպքում ռուս-թաթարական բախումներ հրահրելու և այդ պատրվակով Մոսկվային մարդու իրավունքների խախտման մեջ մեղադրելու համար:

<sup>18</sup> «Թուրքիայի կառավարության նոր ծրագիրը հիմնականում կրկնում է նախորդին. Թուրքագետ», <http://www.resource.am/arm/165278.html>

<sup>19</sup> Ա. Բալասանով, «Անկարան և Կիևը օգտագործելու են Ղրիմի թաթարների գործոնը Մոսկվայի դեմ», <http://www.aysor.am/am/news/2014/03/24/turkey-crimean-tatars/762846>

2014 թ. նոյեմբերի 10-ին պաշտոնական այցով Կիևում գտնվող Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն տեղեկացրեց, որ իրենք պատրաստվում են դիտորդական խումբ ուղարկել Ղրիմ, որը ոչ պաշտոնական ուսումնասիրություններ կկատարի թաթարների հանդեպ գործադրվող բռնությունների, առևանգումների և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի կապակցությամբ: Նյու Յորքում տեղակայված Ղրիմի թաթարների խնդիրների ուսումնասիրման կենտրոնի հիմնադիր Մուբեյին Բաթու Ալթանը նկատում է, որ չնայած թուրքական պաշտոնատար անձանց ամպագողգող հայտարարություններին՝ Ղրիմի թաթարներն իրենց հիասթափված և լքված են զգում, քանի որ Անկարան պատրաստ է պաշտպանելու նրանց իրավունքներն այնքանով, որքանով դա չի խանգարում Թուրքիայի առևտրական և բիզնես շահերին: Մինչ ԱՄՆ-ն և ԵՄ-ն պատժամիջոցներ են կիրառում Ռուսաստանի նկատմամբ, Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Նիհաթ Ջեյբեքչին գոհունակությամբ հայտարարում է, որ դա հրաշալի հնարավորություն է (firsat) Թուրքիայի համար: Որպես ցինիզմի ծայրահեղ դրսևորում է գնահատում Ալթանը թուրքական կոշիկ արտադրող Yakupoğlu Deri Sanayi ընկերության կողմից 100 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ վերջերս կնքված գործարքը՝ ռուսական զինվորների համար ճտքավոր կոշիկ մատակարարելու վերաբերյալ: Ալթանի կարծիքով, այդ գործարքը ցույց է տալիս, թե Էրդողանի համար ինչն է առավել կարևոր: «ԶԷ որ այդ ճտքավոր կոշիկներով են ռուս զինվորականներն ու ոստիկանները հարվածում և տրորում թաթարներին»,– գրել էր նա արտգործնախարարին ուղված իր նամակում: Արտգործնախարարի պատասխանը «business as usual» ոճի մեջ էր. «Տնտեսական հարաբերությունների բարձր մակարդակը ռուս-թուրքական կապերի ամենակարևոր բաղադրիչն է»<sup>20</sup>:

Ինչպես հայտնի է, 2014 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը պետական այցով այցելեց Թուրքիա՝ 2010 թ. ստեղծված ռուս-թուրքական Բարձր մակարդակի համագործակցության խորհրդի (ԲՄՀԽ) հինգերորդ նիստին մասնակցելու նպատակով: Ամենևին պատահական չէր, որ այդ այցի նախօրեին Կիևում այցով գտնվող Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն խոսում էր Ղրիմում թաթարների մարդու իրավունքների խախտումների մասին, Ղրիմի թաթար-

<sup>20</sup> “Crimean Tatars Feel Abandoned by Turkey”, <http://www.eurasianet.org/>

ների մեջլիսի նախկին ղեկավար Մուստաֆա Ջեմիլը Անկարայում պաշտոնական անձերի հետ հանդիպումների ընթացքում կոչ էր անում Թուրքիային միանալու ՌԴ-ի դեմ Արևմուտքի պատժամիջոցներին, իսկ Ղրիմի թաթար ժողովրդի հասարակական խորհուրդը շրջանառության մեջ էր դրել «ղրիմաթաթարների գեներցիդի մասին» մի փաստաթուղթ: Անկարայում և Ստամբուլում Ղրիմի թաթարների կազմակերպությունները Պուտինի այցի դեմ ցույցեր էին կազմակերպել, որոնց միացել էին Թուրքիայի տարբեր քաղաքական և հասարակական կազմակերպություններ: Արձագանքելով այդ գործընթացներին՝ Թուրքիայի վարչապետ Ահմեդ Ղավութօղլուն հայտարարել էր, որ Անկարան ճանաչում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը և պատրաստ է պաշտպանելու Ղրիմաթաթարների իրավունքները, սակայն թույլ չի տա իրեն ներքաշել «Ղրիմյան ծուղակի» մեջ և ռուս-թուրքական հարաբերությունները վերածել ճգնաժամի<sup>21</sup>:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ Պուտին-Էրդողան հանդիպման ժամանակ նախևառաջ քննարկվել են տնտեսությանը և էներգետիկ ոլորտին վերաբերող հարցեր: Մասնավորապես, Ռուսաստանի կողմից «Հարավային հոսք» նախագծից հրաժարման և ռուսական գազը դեպի Արևելյան Եվրոպայի փոխարեն Թուրքիա արտահանման մասին քաղաքական որոշումը լուրջ իրարանցում առաջացրեց միջազգային քաղաքական ասպարեզում: Անկարան մշտապես ձգտել է դառնալ Եվրոպայի համար էներգառեսուրսների տարանցիկ կարևորագույն երկիր, ինչը կմեծացներ նրա տնտեսական դերակատարությունը Եվրոպայում և կուժեղացներ Անկարայի աշխարհաքաղաքական ազդեցությունն այնպիսի կարևոր տարածաշրջաններում, ինչպիսիք են Բալկաններն ու Հարավային Կովկասը<sup>22</sup>: Թուրքիայի տնտեսությունը մեծապես կախված է ռուսական էներգակիրներից, բրիտանական The Economist-ի տվյալներով՝ շուրջ 59%-ով: Սակայն Էրդողանն օգտվելով բարենպաստ իրավիճակից, չբա-

<sup>21</sup> St' u Pavel Shlykov, "Turkish will not Fall into the «Crimean Trap»", [http://russiancouncil.ru/en/inner/?id\\_4=4893#top](http://russiancouncil.ru/en/inner/?id_4=4893#top)

<sup>22</sup> St' u Maria Savel, "Energy Trumps Politics in Turkey-Russia Relationship", 8 Dec.2014, [www.worldpoliticsreview.com/trend-lines/14612/energy-trumps-politics-in-turkey-russia-relationship?utm\\_source=Weekly+Headlines&utm\\_campaign=df5555f263-WPR\\_Weekly\\_121214&utm\\_medium=email&utm\\_term=0\\_6e36cc98fd-df5555f263-62682325](http://www.worldpoliticsreview.com/trend-lines/14612/energy-trumps-politics-in-turkey-russia-relationship?utm_source=Weekly+Headlines&utm_campaign=df5555f263-WPR_Weekly_121214&utm_medium=email&utm_term=0_6e36cc98fd-df5555f263-62682325)

վարարվելով Ռուսաստանի կողմից գազի սակագնի 6% նվազեցման հետ՝ ցանկանում է ստանալ ավելի մեծ զեղչեր:

Պուտին-Էրդողան հանդիպման ընթացքում քննարկման ենթակա հարցերի թվում էին նաև Ղրիմի հարցը, իրավիճակը Սիրիայում և կիպրական խնդիրը: Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններում ամենաակնհայտ տարածայնությունը կապված է հենց սիրիական վարչակարգի, Ղրիմի՝ Ռուսաստանի կողմից բռնակցման և կիպրական խնդրի հետ: Անդրադառնալով Պուտինի թուրքական այցին՝ թուրքական Uluslararası Politika Akademisi հանդեսը նշում է, որ Թուրքիան բացահայտ քննադատել է Ղրիմում Ռուսաստանի քաղաքականությունն ու հստակ հայտարարել, որ չի ճանաչում Ղրիմի վարչակազմը: Սև ծովում աշխարհաքաղաքական հավասարակշռության նման փոփոխությունը չէր կարող չհարուցել սևծովյան տարածաշրջանի պետություն հանդիսացող Թուրքիայի անհանգստությունը: Թուրքիայի ընդդիմադիր դիրքորոշումը ձևավորվել է նաև Ղրիմի թաթարների ապագայի, թուրք-ուկրաինական լավ հարաբերությունների և որոշ այլ պատճառների արդյունքում: Սակայն Թուրքիայի այդ մտեցումն այդպես էլ մնաց թույլ հոետորաբանության մակարդակի վրա, և իրականում չհանգեցրեց որևէ հստակ քաղաքականության: Հետևաբար տվյալ հարցի շուրջ Թուրքիայի դիրքորոշումը պետք չէ համարել հակամարտ Ռուսաստանի հանդեպ<sup>23</sup>:

Ուշագրավ է, որ Պուտին-Էրդողան հանդիպման արդյունքները գնահատելիս թուրքական լրատվամիջոցները հիմնականում առանձնացնում էին տնտեսական բաղադրիչը՝ շեշտադրելով Անկարայի վարած քաղաքականության «ողջախոհությունն ու պրագմատիզմը»: Մինչդեռ ռուսաստանյան փորձագետները հակված են դրանք ներկայացնելու որպես «աշխարհաքաղաքական շրջադարձ՝ Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում»: Նման գնահատականների թիվն ավելացավ հատկապես այն բանից հետո, երբ 2014 թ. դեկտեմբերի 18-ի իր ավանդական տարեկան մամլո ասուլիսի ժամանակ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հիշատակեց ռուս բոլշևիկների համագործակցությունը Քեմալ Աթաթյուրքի հետ<sup>24</sup>: Փորձագետների մի մասն էլ ռուս-

<sup>23</sup> St' u Saltuk Buğra Bozkurt, "Putin'in Türkiye ziyareti: ziyaret öncesi konuşulanlar", <http://politikaakademisi.org/putinin-turkiye-ziyareti-ziyaret-oncesi-konusulanlar/>

<sup>24</sup> St' u Станислав Тарасов, "Путин разворачивает Эрдогана на Восток", 18.12.2014, <http://www.regnum.ru/news/polit/1878425.html#ixzz3MHWsoSWO>

թուրքական բարեկամության այս նոր փուլը, ի թիվս այլ օբյեկտիվ պատճառների, պայմանավորում էր երկու երկրների առաջնորդների՝ Պուտինի և Էրդողանի անձնական տիպաբանական ընդհանրություններով: Օրինակ՝ գերմանական Die Welt-ի վերլուծաբան Սոնյա Բլաշկեի կարծիքով՝ այդ երկու քաղաքական գործիչներին միավորում է «կառավարման ինքնակալ (ավտոկրատիկ) եղանակը, կրոնական և էթնիկ միատարրության և մշակութային անկրկնելիության գաղափարների վրա արմատավորված ծայրահեղ ազգայնականությունը, ինչպես նաև անցյալում կրած իրական կամ երևակայական նվաստացումների համար վրեժխնդիր լինելու ցանկությունը»<sup>25</sup>: Առավել կշռադատված գնահատական տվողներն ընդգծում են, որ չնայած երկու երկրների տնտեսական աննախադեպ մերձեցմանն ու այս պետություններում հակաարևմտյան տրամադրությունների առկայությանը՝ Անկարան և Մոսկվան չեն դառնա ռազմավարական գործընկերներ: Անկարան չի հրաժարվի թուրք-ամերիկյան ավանդական հարաբերություններից հանուն Ռուսաստանի, քանի որ երկու երկրները անհաշտ մրցակիցներ են: Թուրքիան կարող է հաշտվել Ղրիմի բռնակցմանը, սակայն երբեք չի հրաժարվի Բալկաններում, Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում վարած քաղաքականությունից, որը հակասում է Ռուսաստանի շահերին<sup>26</sup>:

Այսպիսով, օգտվելով երկրի բարենպաստ աշխարհագրական դիրքից, Անկարան վարում է կրկնակի խաղ, մի կողմից քննադատում է Կրեմլի վարած արտաքին քաղաքականությունը, Ղրիմի բռնակցումն ու Դոնբասում ստեղծված իրավիճակը, մյուս կողմից՝ տնտեսական պատժամիջոցներ չի կիրառում Ռուսաստանի հանդեպ և հակառակը՝ փորձում է ստեղծված իրավիճակից տնտեսական և քաղաքական դիվիդենտներ շահել: Ղրիմյան ճգնաժամի առնչությամբ Թուրքիայի պահվածքը կարելի է բնորոշել որպես «զգուշավոր լարախաղացության» քաղաքականություն երկու դիմակայող ուժերի՝ Արևմուտքի և Ռուսաստանի

<sup>25</sup> Со́ня Блашке, “Опасный альянс униженных лидеров”, <http://www.inopressa.ru/article/17Dec2014/welt/autokraten.html>

<sup>26</sup> GeorgePirishis, “TheCrimeanCrisisunderthePrismofTurkish–AmericanRelations”, *Journal of International Relations and Foreign Policy*, June 2014, Vol. 2, No. 2, pp. 115–121. Տե՛ս նաև Maria Savel, “Energy Trumps Politics in Turkey–Russia Relationship”, 8 Dec. 2014, [www.worldpoliticsreview.com/trend-lines/14612/energy-trumps-politics-in-turkey-russia-relationship?utm\\_source=Weekly+Headlines&utm\\_campaign=df5555f263-WPR\\_Weekly\\_121214&utm\\_medium=email&utm\\_term=0\\_6e36cc98fd-df5555f263-62682325](http://www.worldpoliticsreview.com/trend-lines/14612/energy-trumps-politics-in-turkey-russia-relationship?utm_source=Weekly+Headlines&utm_campaign=df5555f263-WPR_Weekly_121214&utm_medium=email&utm_term=0_6e36cc98fd-df5555f263-62682325)

միջև: Վարչավայի համալսարանի Արևելյան Եվրոպայի ուսումնասիրման կենտրոնի փորձագետ, Լեհաստանի Նախագահի խորհրդական Ադամ Բալցերն այդ քաղաքականությանը պատկերավոր բնորոշում է տվել՝ «պարեր՝Արջի հետ»<sup>27</sup>: Հայաստանը գտնվում է «ռուսական արջի» և «թուրքական գայլի» վտանգավոր այդ «պարահրապարակի»՝ տարածաշրջանի կիզակետում, իսկ ռուս-թուրքական «սիրախաղերը» միշտ էլ դառնում պտուղներ են բերել մեզ: Ուստի Հայաստանը՝ որպես փոքր պետություն, որը վտանգավոր տարածաշրջանում է և ունի չկարգավորված Ղարաբաղյան խնդիր, պետք է շահագրգռված լինի, որ բոլոր հակամարտությունները, հատկապես Ուկրաինայի նման համամոլորակային նշանակություն ունեցող հակամարտությունը, լուծվի հնարավորինս խաղաղ ճանապարհով:

<sup>27</sup> Adam Balcer, “Dances with the Bear: Turkey and Russia after Crimea”, GTE Working Paper No. 8, 9 July 2014, <http://www.iai.it/content.asp?langid=2&contentid=1148>

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱԿԱԳՅՈՒԼԵՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ**

Ադրբեջանում իսլամի դերի ու նշանակության, հասարակական-քաղաքական կյանքում դրա տեղի մասին բավական շատ է խոսվում ու քննարկվում, և դա պայմանավորված է վերջին տարիներին հատկապես այդ երկրում իսլամական գործոնի ազդեցության աճով: Ադրբեջանում ընդհանրապես իսլամական արժեհամակարգի և կրոնի դերի հետ կապված միտումներն ամբողջացվում են քաղաքական շարժառիթների մեջ, քանի որ կրոնական գործոնի տարածման հիմնական սուբյեկտներ են մեծմասամբ Թուրքիան և Իրանը, որոշակի չափով նաև Սաուդյան Արաբիան, Պարսից ծոցի միապետությունները, ինչն էլ խնդիրը տեղափոխում է նաև «աշխարհաքաղաքական մրցակցության» հարթություն: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Ադրբեջանում նուրջուականության և հատկապես գյուլենական շարժման տարածման միտումները, հասարակական-քաղաքական գործընթացներում դրա հնարավոր ազդեցությունը և միտումները:

Գյուլենական շարժումը բավական ակտիվ է ինչպես Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, այնպես էլ ՌԴ մի քանի սուբյեկտներում, հատկապես Թաթարստանում և Բաշկիրիայում<sup>1</sup>: 2013 թ. մարտի սկզբներին Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) կողմից Ս. Պետերբուրգում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվեցին ու ձերբակալվե-

<sup>1</sup> Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, <http://www.riss.ru/?activityId=152>.



ցին «Նուրջու» կրոնական շարժման 10 անդամներ, որոնցից 4-ը՝ Ադրբեջանի քաղաքացիներ: Նրանց մոտից առգրավվեց մեծ քանակությամբ թուրքերեն ու ռուսերեն լեզուներով կրոնական բովանդակությամբ գրականություն, որն արգելված է ՌԴ ողջ տարածքում: Ըստ ռուսական հատուկ ծառայությունների՝ «Նուրջու» կրոնական շարժման գործունեությունը առանձնանում է նրանով, որ այն սերտ կապերի մեջ է թուրքական հատուկ ծառայությունների հետ և գործում է հոգուտ թուրքական հետախուզության<sup>2</sup>:

2013 թ. մայիսին բավական հետաքրքիր տեղեկատվություն հայտնվեց, որը վերաբերում էր սիրիական հակամարտության մեջ գյուլենական շարժման որոշակի ներգրավվածներն ու գործունեությանը: Մասնավորապես Սիրիայի կառավարության գաղտնի ծառայության բարձրաստիճան աշխատակիցը մանրամասներ էր հրապարակել սիրիական հակամարտության մեջ Թուրքիայի դերակատարության ու գործունեության վերաբերյալ, որում գյուլենական շարժումը դրսևորել է գործնական ակտիվություն: Ըստ այդ հրապարակման՝ Թուրքիայից դեպի Սիրիա զինամթերքի ու սննդամթերքի մատակարարումներն իրականացվում էին նաև գյուլենական շարժման ազդեցության ու ենթակայության տակ գտնվող հիմնադրամների ու կազմակերպությունների միջոցով<sup>3</sup>:

Գյուլենական շարժումն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է հատկապես ԱՊՀ տարածքի թուրքալեզու երկրների ուղղությամբ: Միայն Կենտրոնական Ասիայի երկրներում և Ադրբեջանում 1997–1998 թթ. դրությամբ գյուլենական դպրոցների թիվը գերազանցում էր 8 տասնյակը<sup>4</sup>: Ժամանակի ընթացքում, սակայն, Կենտրոնական Ասիայում գործող դպրոցների թիվը զգալիորեն նվազեց: Նախ՝ Ուզբեկստանի իշխանությունները, անընդհատ վտանգ զգալով իսլամական հոսանքների ու շարժումների տարածումից, փակեցին գյուլենականների կողմից գործող դպրոցները, իսկ Թուրքմենստանում դրանք վերջին տարիներին պետականացվեցին: Ադրբեջանում գյուլենականների հիմնած դպրոցները մինչև օրս շարունակում են գործել<sup>5</sup>:

<sup>2</sup> Взяли с прочитанным, <http://www.rg.ru/2013/03/05/extreme.html>.

<sup>3</sup> Ринат Ахметзянов, Как Вашингтон и Анкара работают с «сирийской оппозицией». Новые подробности, «Российские тенденции», 10.05.2013, <http://rostend.su/?q=node%2F927>.

<sup>4</sup> Ա. Շարարյան, Արարատից այն կողմ. Կապակողմորելով Թուրքիան, Եր., 2011, էջ 105–107:

<sup>5</sup> Саид Нурси и Фетхуллах Гюлен в Центральной Азии: Влияние на религию и образование после распада СССР, <http://www.fergananews.com/articles/7598>.

Հարկ է նշել, որ շարժման արտաքին ծավալումը խրախուսվել է թուրքական պետության կողմից՝ նաև իշխանության ղեկին եղած աշխարհիկ ուժերի շրջանում, քանի որ դա տեղավորվում էր Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակների ու հավակնությունների մեջ: Տվյալ պարագայում գյուլենական շարժումը կարելի է դիտարկել բուն Թուրքիայի գաղափարական-մշակութային հեգեմոնիայի տեսանկյունից: Այն արտաքին քաղաքականության իրականացման կարևորագույն գործիքներից էր համարվում՝ հատկապես թյուրքալեզու հանրույթների հետ հարաբերությունների հարցում: Շարժումը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ յուրահատուկ «փափուկ ուժի» (soft power) կիրառման կարևոր դեր ուներ: Բացի այդ, ինչպես նշվեց, շարժման հնարավորությունները օգտագործվում էին թուրքական արտաքին հետախուզական ծառայությունների կողմից, որոնց մասին բավական շատ փաստեր են հրապարակվել հատկապես Ռուսաստանի ԱԴԾ-ի կողմից:

Ադրբեջանի անկախացումից հետո նուրջու ուսմունքը, հատկապես գյուլենական շարժումը սկսեց ակտիվորեն ներթափանցել այդ երկիր և բավական արագ կարողացավ այնտեղ հիմնել իր բջիջները՝ տարբեր հաստատությունների անվան ներքո: Դա պայմանավորված էր նախ և առաջ երկրի նախկին նախագահ Հեյդար Ալիևի բարյացակամ վերաբերմունքով, քանի որ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ղեկավար եղած ժամանակ գյուլենական շարժումը նրան բավական լուրջ օգնություն էր ցուցաբերում: Նորանկախ Ադրբեջանի իշխանությունների համար այդ շարժման գործունեությունը դիտարկվում էր որպես կարևոր գործոն Թուրքիայի հետ հարաբերությունների զարգացման համար, հատկապես կրթական-մշակութային մոդելի համատեքստում<sup>6</sup>: Ներկայում էլ այդ շարժումն ամենաակտիվներից է Ադրբեջանում և շարունակական ազդեցության մեծացման միտումներ ունի: Գյուլենական շարժման գործունեությունը Ադրբեջանում, կարելի է ասել, քողարկված է և այն ուղղակի համարտության չի մտնում շիական կրոնական համակարգի ու աշխարհիկ վարչակարգի հետ: Շարժման գործունեության հիմքում դրված է դանդաղ ու փափուկ գործունեության սկզբունքը, ինչն ավելի արդյունավետ է: Գյուլենական շարժման մեծ օրա-

<sup>6</sup> F. Aliyev, The Gulen Movement in Azerbaijan, <http://www.currenttrends.org/research/detail/the-gulen-movement-in-azerbaijan>; Э. Мамедов, Азербайджан: Оценивая отношение Баку к движению Гюлена, <http://russian.eurasianet.org/node/59185>.

կարգը Ադրբեջանում պետական ու կրթական համակարգում տարածվելն է, ազդեցության ձեռքբերումը: Վերջին տարիներին Ադրբեջանում գործում էին գյուլենական շարժմանը պատկանող «Qafqaz» համալսարանը, ինչպես նաև 12 մինչևակարգ դպրոցներ ու վարժարաններ Բաքվում, Սումգաիթում, Մինգեչաուրում, Ղուբայում, Նախիջևանում և այլ քաղաքներում, 11 մինչքուհական նախապատրաստական դասընթացներ, որոնցում ուսանողների ընդհանուր թիվը կազմում էր մոտ 5000<sup>7</sup>: Գործում են «Xazar» ռադիո-հեռուստաընկերությունը, «Samanyolu» հեռուստաալիքը, «Birc» ռադիոն, հրատարակվում են «Zaman» օրաթերթը, մի շարք այլ թերթեր ու պարբերականներ: Ակտիվ են նաև հասարակական ու գործարար ոլորտի ընկերություններն ու կազմակերպությունները: Ներկայում հստակ տվյալներ չկան Ադրբեջանում նուրջու հետևորդների թվաքանակի վերաբերյալ. ադրբեջանական ՋԼՄ-ների տեղեկությունների համաձայն՝ նրանց թվաքանակն անցնում է մոտ 40 հազարը, սակայն ադրբեջանցի հետազոտող Ա. Յունուսովն իր աշխատության մեջ նշում է, որ դաշտային ուսումնասիրությունների համաձայն՝ նրանց թիվն Ադրբեջանում հազիվ թե գերազանցի 10 հազարը<sup>8</sup>:

Ադրբեջանում գյուլենական շարժումը լայն տարածում է գտել հատկապես քաղաքային բնակչության շրջանում՝ շնորհիվ իր լավ կազմակերպված կրթական, լրատվական ու գործարար կազմակերպությունների, և դրանով իսկ այն իր հնարավորություններով առանձնանում է մյուս իսլամական ուղղություններից, որ փորձում են ազդեցություն ձեռք բերել այդ երկրում: Այն նաև, ի տարբերություն այլ իսլամական ուղղությունների, ուղղակիորեն կամ բացահայտ չի ներգրավվել Ադրբեջանում կրոնի տեղի ու դերի վերաբերյալ քաղաքական սուր քննարկումներին<sup>9</sup>: Գյուլենական շարժումը գրավիչ է հատկապես Ադրբեջանի երիտասարդության շրջանում՝ իր չափավոր իսլամական ու պանթյուրքական գաղափարներով՝ որպես այլընտրանք ու հակակշիռ Բաքվի աշխարհիկ

<sup>7</sup> Birol Topuz, The Gulen inspired Turkish schools in Baku, Azerbaijan, and mystery of their successes, [http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011\\_proceeding/084\\_316\\_ICM2011\\_PG1182\\_1191\\_TURKISH\\_SCHOOLS.pdf](http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011_proceeding/084_316_ICM2011_PG1182_1191_TURKISH_SCHOOLS.pdf).

<sup>8</sup> А. Юнусов, Исламская палитра Азербайджана, Институт мира и демократии, Баку 2012, с. 50.

<sup>9</sup> F. Aliyev, նշվ. աշխ.:

ռեժիմին, ծայրահեղ վահաբականությանը կամ էլ իրանական շի-  
այականությանը<sup>10</sup>:

Գյուլենական շարժումը Ադրբեջանում բավական ակտիվ է և լուծում է մի քանի խնդիր: Նախ՝ առաջին հերթին այդ շարժումն առավելապես աչքի է ընկնում իր այսպես ասած իսլամական ու թուրքական օրակարգով, այսինքն՝ իր գործունեության մեջ շաղկապված են իսլամական ու թուրքական ազգայնականությունը կամ այլ կերպ ասած թուրք-իսլամական համադրությունը: Մյուս կողմից՝ Թուրքիան նաև խրախուսում էր այդ շարժման ծավալումն Ադրբեջանում՝ որպես հակադրություն իսլամական մյուս ուղղություններին՝ վահաբականությանը և ամենակարևորը՝ այդ երկրի համար ավանդական համարվող շիականությանը, որը դիտարկվում է որպես իրանական ազդեցության լուրջ գործոն: Տվյալ պարագայում գյուլենական շարժումն իրականացնում էր նաև հստակ քաղաքական նպատակներ:

Գյուլենականությունն Ադրբեջանում ունի մի կարևոր առանձնահատկություն: Այն բավական զգուշավոր և հարաբերական պասիվ է գործում զուտ կրոնական տեսանկյունից՝ խուսափելով բացահայտ առճակատման գնալ աշխարհիկ կարգերի ու շրջանակների դեմ, քանի որ իշխանական վերնախավն իրեն նույնպես համարում է աշխարհիկ: Չնայած հենց ադրբեջանական մի շարք հրապարակումներ են եղել, որոնք փաստում են, որ դա միայն արտաքուստ է և այդ շարժման օրակարգն ավելի կրոնական է, քան առաջին հայացքից: Նույնիսկ որոշ ադրբեջանցի փորձագետներ նշում են, որ այդ շարժումն Ադրբեջանում ցանկանում է շիականությունը փոխարինել սունիական ուղղությամբ, այն էլ՝ թուրքական: Չնայած ադրբեջանական իշխանությունների կողմից գյուլենականների դեմ գործադրված «զուսպ» ճնշումներին՝ Ադրբեջանում այն գնալով ավելի է ընդլայնել իր գործունեությունը կարևորագույն ոլորտներում: Ըստ ադրբեջանական ԶԼՄ-ների՝ շարժման հետ ուղղակի կամ անուղղակի կապի մեջ են Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաներ, պատգամավորներ, հայտնի լրագրողներ ու կրթության ոլորտի ներկայացուցիչներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհթիկի որդիները սովորում էին գյուլենական ուսումնական հաստատություններում: Ադրբեջանական մշակույթի զարթոնքի ու զարգացման հիմնադրամի տնօրեն Շ. Թադիկի հրապարակած տվյալներով՝ գյուլենական շարժումը

<sup>10</sup> F. Aliyev, նշվ. աշխ., Զ. Мамедов, նշվ. աշխ.:

լայնորեն տարածվում է նաև Ռուսաստանի ադրբեջանցիների շրջանում: Մոսկվայում նուրջիզմի ակտիվ քարոզչությամբ է զբաղվում Ռուսաստանի՝ ադրբեջանցիների համերաշխության կենտրոնի ղեկավար Ն. Շահիբեյենգովը և նուրջունների թիրախում են հիմնականում ռուսաստանյան հեղինակավոր բուհերում սովորող ադրբեջանցի ուսանողները: Նրանք իրենց հիմնական շեշտադրումները կատարում են ադրբեջանական այն շրջանակների վրա, որոնք պետական ու գործարար շրջանակներում հետագայում կարող են զբաղեցնել պատասխանատու պաշտոններ<sup>11</sup>:

Չնայած նախկինում գյուլենական շարժումն Ադրբեջանի իշխանությունների համար որպես այդպիսին սպառնալիք չի ներկայացրել երկրում իսլամական արժեհամակարգի տարածման ու աշխարհիկ կարգերի տեսանկյունից, ներկայում իրավիճակն այդ առումով որոշակիորեն փոխվում է: Հատկապես նախագահ Իլհամ Ալիևի կառավարման տարիներին, երկրի քաղաքական կյանքում իսլամական գործոնի դերի մեծացման հետ զուգահեռ, փոխվեց նաև իշխանությունների վերաբերմունքն այդ շարժման նկատմամբ և սկսեցին հետապնդումներ ու ձերբակալություններ<sup>12</sup>: Սա ուղղակի կապված չէ այդ շարժման կողմից ներկայացվող սպառնալիքներով, այլ՝ անուղղակի: Նախ՝ շարժման միջոցով ադրբեջանական հասարակության որոշ շրջանակներ ավելի են հակվում դեպի կրոնական պահպանողական արժեհամակարգին և այս պարագայում ընդհանուր իսլամական արժեհամակարգի տարածման ու ազդեցության գործոնը կարող է պարարտ դաշտ ստեղծել ավելի արմատական ուղղությունների գործունեության համար, ինչպիսին է, օրինակ, վահաբականությունը: Ադրբեջանի համար ընդհանրապես կրոնական օրակարգը ժամանակի հետ կարող է ավելի վտանգավոր դառնալ: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է իսլամական մի քանի ուղղությունների միաժամանակ տարածմանն ու հաստատմանն այդ երկրում: Արտաքին ուժերով պայմանավորված իսլամական մի քանի ուղղություններ տարածում են գտնում Ադրբեջանում<sup>13</sup>: Մի կողմից՝ պետական շիական ուղղությունն է, որը հիմնական կրո-

<sup>11</sup> Саид Нурси и нурсизм в России и Татарстане: идеология, распространение, конфликтный потенциал, <http://www.riss.ru/?activityId=152>.

<sup>12</sup> Birol Topuz, The Gulen inspired Turkish schools in Baku, Azerbaijan, and Mystery of their Successes, [http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011\\_proceeding/084\\_316\\_ICM2011\\_PG1182\\_1191\\_TURKISH\\_SCHOOLS.pdf](http://www.internationalconference.com.my/proceeding/icm2011_proceeding/084_316_ICM2011_PG1182_1191_TURKISH_SCHOOLS.pdf), p. 49.

<sup>13</sup> Arzu Geybullayeva, Is Azerbaijan Becoming a Hub of Radical Islam?, [http://www.esiweb.org/pdf/esi\\_turkey\\_tpq\\_id\\_110.pdf](http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_110.pdf).

նական ուսմունքն է, մյուս կողմից՝ հատկապես երկրի հյուսիսում ազդեցություն հավաքող սալաֆիականությունը և ծայրահեղական այլ ուղղություններ: Գյուլենական շարժումն իր հերթին տարածում է թուրքական հանաֆիական մազհաբի սունիական ուղղությունը, որն ավելի չափավոր է և նպատակ ունի որոշակիորեն կանխելու նաև ծայրահեղական ուղղությունների հետագա տարածումը: Սրանով նաև կարելի է բացատրել Ադրբեջանի իշխանությունների որոշակի թողտվությունն այդ շարժմանը, չնայած արդեն իսկ ցուցաբերում են զգուշավորություն և նաև ցուցադրական գործողություններ, ինչպես, օրինակ՝ վերջին մի քանի տարիներին իրականացված ձերբակալությունները: Ըստ ամերիկյան վերլուծական «Stratfor» կազմակերպության՝ հենց այդ երեք հիմնական իսլամական ուղղություններն ու շարժումն են, որ կարող են սպառնալիք ներկայացնել Ադրբեջանի համար<sup>14</sup>: Ադրբեջանի կրոնական արդեն իսկ խորացող խայտաբղետությունը ժամանակի հետ կարող է դառնալ վտանգավոր և անկառավարելի՝ ուղղակի առճակատման տանելով մյուս ուղղությունների հետ: Իսկ առճակատումն իր հերթին կարող է վերածվել զինյալ պայքարի ու ահաբեկչության: Գյուլենական շարժման վերաբերյալ բավական կոշտ ու բացասական վերաբերմունք են դրսևորում հատկապես վահաբականները: Նույնը կարելի է ասել նաև ադրբեջանական շիական հոգևորականության մասին: Այս առումով Ադրբեջանի դավանական խճանկարի ապագան բավական մշուշոտ է:

Ակնհայտ է, որ Ադրբեջանի իշխանությունների համար իսլամական գործոնը բավական վտանգավոր է, և նրանց կողմից ամեն ինչ արվում է երկրում իսլամական ուղղությունների ազդեցությունը նվազեցնելու համար, չնայած դրան հակառակ հասարակական շերտերում կրոնի դերը գնալով մեծանում է, և դա մեծ հաշվով անկասելի է: Իսկ իշխանությունների գործողությունները տալիս են հակառակ էֆեկտը: Այդ շարժումն Ադրբեջանում քաղաքական լուրջ գործոնի վերածվելու հնարավորություն ուներ և դա էլ անհանգստացնում էր ալիկյան կլանին: Ադրբեջանում նույնիսկ խոսում էին 2015 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ շարժման ու համայնքի քաղաքական կշռի ձեռքբերման մասին<sup>15</sup>: Գյուլենական շարժման քաղաքական ռազմավարությունը ավելի է պարզ դառնում շարժման առաջնորդ Ֆ. Գյուլե-

<sup>14</sup> Islamism in Azerbaijan, <http://www.euractiv.com/europes-east/islamism-azerbaijan-analysis-512554>.

<sup>15</sup> Söğütçüoğlu, Azadbaycanda nuruların “2015” hıfzı bilindi, [www.milliyet.az/index.php?do=read\\_news&id=912](http://www.milliyet.az/index.php?do=read_news&id=912).

նի՝ 1999 թ. արված հայտարարությունից, որտեղ, ներկայացնելով Թուրքիայում իսլամականության իր տեսլականը, հայտարարել է, որ շարժման անդամները պետք է աննկատ ներթափանցեն պետական համակարգ, ճյուղավորումներ տան, մինչև որ հասունանա իշխանության լծակներ ձեռք բերելու հարմար պահը: Ըստ Գյուլենի՝ վաղաժամ քայլեր անելը կարող էր կործանարար լինել այնպես, ինչպես դա եղավ Ալժիրում, Սիրիայում և Եգիպտոսում<sup>16</sup>: Ֆ. Գյուլենի կողմից արված այս հայտարարությունը կարող ենք համեմատել դեռևս Թուրքիայում իսլամամետ «Դեմոկրատական» կուսակցության կառավարման շրջանում նուրջու աղանդի հիմնադիր Սայիդ Նուրսիի այն հայտարարությանը, որ «Ես ունեմ ինձ հավատարիմ 600 հազար մյուրիդներ (աշակերտ-հետևորդներ): Ո՛չ կառավարությունը, ո՛չ էլ ոստիկանությունն ու ժանդարմերիան չեն կարող երկրում կարգ ու կանոն հաստատել: Դա Ալլահի կամքով կարող ենք անել միայն ես և իմ մարդիկ: Դեմոկրատներին ուժ է հարկավոր և ես բավական ուժեղ եմ...»<sup>17</sup>: Նա այս հայտարարությամբ փորձում էր Թուրքիայի կառավարությանը ցույց տալ նաև իր քաղաքական ներուժը նախընտրական շրջանում՝ դրանով իսկ ակնկալելով իսլամի դերի բարձրացման հարցում կառավարության նոր գործողությունները: Ս. Նուրսին 1950-ական թթ. հանդես էր գալիս իսլամամետ «Դեմոկրատական» կուսակցության պաշտպանությամբ և քաղաքական իսլամի դերակատարության բարձրացման օգտին: Ս. Նուրսին և նրա գլխավորած աղանդը 1950 թ. ներգրավված է եղել քաղաքական, հատկապես ընտրական գործընթացներում:

Այն, որ գյուլենական շարժումը Թուրքիայում ուներ քաղաքական հեռահար նպատակներ ու պլաններ, պարզ դարձավ 2013 թ. կառավարող *Արդարություն և զարգացում* կուսակցության ու համայնքի միջև սկսված սուր դիմակայության ու դրան հաջորդած բացահայտումների արդյունքում:

Տվյալ պարագայում Ադրբեջանում ևս գյուլենական շարժումը չի կարող լինել զուտ կրթամշակութային շարժում, այլ ուղղակի քաղաքական օրակարգը կախված է ժամանակի ու ռեսուրսների համատեղումից՝ Ադրբեջանում հասունացնելով դրա բազային հիմքերը:

Պետք է հաշվի առնել Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ա. Փաշազադեի բացասական վերաբերմունքը գյուլենականների

<sup>16</sup> Ա. Փաշայան, «Արդարություն և զարգացում» կուսակցության իսլամական հենարանը, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=513](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=513).

<sup>17</sup> P. Кондакян, Турция: внутренняя политика и ислам, Ер. 1983, с. 153

նկատմամբ<sup>18</sup> և չի բացառվում, որ վերջին տարիներին ադրբեյջանական իշխանությունների կողմից իրականացված ձերբակալությունները, ինչպես նաև Բաքվում թուրքական մզկիթների փակումը հրահրված էին հենց նրա կողմից: Այս համատեքստում, չնայած նախկին տարիներին, Ալիևի վարչակազմը կարող է գնալ կտրուկ գործողությունների գյուլենական շարժման ազդեցությունը կասցենելու ուղղությամբ, և դրա նախանշաններն առկա են: Մի կողմից՝ Ալիևի վարչակարգը ցանկանում էր հաշվեհարդար տեսնել նաև գյուլենականների հետ, սակայն հասկանալով, որ դա ուղղակի կվտանգի Թուրքիայի հետ հարաբերությունները, դեռևս վճռական գործողություններ չի ձեռնարկում: Մյուս կողմից՝ էլ գյուլենական ուսմունքի ու ազդեցության տարածումը ժամանակի հետ դառնում է ավելի վտանգավոր նույն այդ վարչակարգի համար: Ամերիկյան Ջորջ Մետն համալսարանի պրոֆեսոր Պ. Մանդեվիլը, օրինակ, նշելով, որ իսլամական ուղղությունները լուրջ վտանգ են ներկայացնում Ադրբեյջանում, դրանց շարքին էր դասել նաև գյուլենական ուղղությունը՝ փաստելով, որ ադրբեյջանական վերնախավը լրջորեն մտահոգված է այդ հարցով<sup>19</sup>:

Որոշ մասնագետներ, սակայն, նշում են, որ գյուլենական շարժման կրոնական բաղադրիչի տարածման հնարավորությունները սահմանափակ են, և դա պայմանավորված է Ադրբեյջանի հասարակության բազմատարրությամբ՝ աշխարհիկ շերտեր, շիականության հետևորդներ, ոչ թուրքական փոքրամասնություններ և այլն<sup>20</sup>: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ զուտ կրոնական գաղափարախոսության տեսանկյունից շարժումը որոշակիորեն պասիվ է Ադրբեյջանում, նշանակում է, որ նրա ռազմավարությունը քաղաքական նպատակների վրա է կառուցված: Դա կարող է լինել քաղաքաբնականների շրջանում իր կրթական-քարոզչական հաստատությունների միջոցով ինտելեկտուալ սերուցքի աճեցման ու քաղաքական-պետական համակարգում նրանց ներդրման միջոցով հասնել Ադրբեյջանի կառավարող էլիտայի վրա լուրջ ազդեցության: Մնացյալ դեպքերում, ըստ Ադրբեյջանում գյուլենական շարժման գործունեության դիտարկման, անիմաստ ու անպտուղ են դառնում հսկայական ներդրումներն այդ երկրում գյուլենականների կողմից: Ուստի Ադրբեյջանում

<sup>18</sup> А. Пашаян, Исламские процессы в Азербайджане, [http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT\\_ID=1986](http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=1986).

<sup>19</sup> Власти Азербайджана опасаются религиозных течений, <http://www.radioazadlyg.org/content/article/2178213.html>.

<sup>20</sup> F. Aliyev, նշվ. աշխ.: Զ. Мамедов, նշվ. աշխ.:



գյուլենական շարժման օրակարգը, կարելի է ասել, ավելի շատ քաղաքական է, քան կրոնական: Իսկ քաղաքական մակարդակում վերոնշյալ նպատակների իրագործման պարագայում կրոնական օրակարգն ավելի բացահայտ ու անկաշկանդ կարող է ի հայտ գալ: Հատկանշական է նաև այն, որ գյուլենական շարժմանը, ըստ հայտնի թուրքագետ Է. Տյուրխտերի, բնորոշ է իսլամական «թաքիյա»-ի հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում թաքցնելու իրական հավատամքն ու հայացքները<sup>21</sup>:

Ադրբեջանում շարժման հեռանկարը որոշակիորեն անորոշ է դարձել: Ներկայում իրավիճակը փոխվել է, և Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները կարող են լրջորեն անհանգստացնել նաև Ի. Ալիևին: Խոսքը վերաբերում է 2013 թ. դեկտեմբերին Թուրքիայում կաշառքի ու փողերի վաճառման գործերով իրավապահ մարմինների կողմից իրականացված լայնամասշտաբ ձերբակալություններին, այդ թվում՝ նախարարների որդիներ, հայտնի գործարարներ, որով լրջորեն սրվեցին հարաբերությունները Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի և գյուլենական շարժման առաջնորդ Ֆ. Գյուլենի միջև<sup>22</sup>: Դիմակայության ժամանակ անվտանգության ու դատական համակարգում գյուլենական ցանցի գործողությունների արդյունքում հրապարակվեցին կառավարությանը վարկաբեկելու նպատակ հետապնդող մի շարք հեռախոսագրույցներ, գաղտնալսումներ, որոնք վերաբերում էին Էրդողանին և կառավարության անդամներին: Նույնիսկ որոշ դեպքերում այդ հրապարակումները վերաբերում էին պետական ու ռազմական գաղտնիք հանդիսացող գաղտնալսումների նյութերին:

Թուրքիայում սկիզբ առած Էրդողան-Գյուլեն հակամարտությունը նախկին գաղափարակից դաշնակիցներին դարձրեց ռիսերիմ թշնամիներ: Հակամարտության թերևս ամենահիմնական պատճառը իշխանության բաժանման հարցն էր: Ֆ. Գյուլենն արդեն իր ֆինանսական, կադրային ու տեղեկատվական դաշտում հզորացած ներուժով հավակնում էր Ռ. Թ. Էրդողանի հետ կիսել իշխանությունը, այսինքն՝ հստակ քաղաքական հայտ էր ներկայացվել: Մինչդեռ Էրդողանը պատրաստ չէր իր իշխանությունը կիսելու այլ դերակատարների հետ և սկսեց դրա լծակների չեզո-

<sup>21</sup> Rachel Sharon-Krespin, Fethullah Gülen's Grand Ambition, Turkey's Islamist Danger, Middle East Quarterly, Winter 2009.

<sup>22</sup> Büyük rüşvet operasyonunda Gözaltına alınanlar, <http://www.hurriyet.com.tr/gundem/25387128.asp>

քացման գործողություններ, ինչն էլ հանգեցրեց սուր դիմակայության:

Ադրբեջանում գյուլենական շարժման օրակարգը, կարելի է ասել, ավելի շատ քաղաքական է, քան կրոնական: Թուրքիայում Էրդողան-Գյուլեն հակամարտության թեժ շրջանում իշխանությանը մոտ կանգնած թուրքական որոշ պարբերականներում Ադրբեջանի պետական ու անվտանգության համակարգում, բիզնես ոլորտում գյուլենականների տարածման վերաբերյալ հրապարակումները բնավ պատահական չէին և ադրբեջանական իշխանություններին ուղղված հստակ ուղերձներ էին: Թուրքական պարբերականներից մեկը գրել էր, որ ինչպես եվրոպական, այնպես էլ գյուլենական դպրոցներ ունեցող այլ երկրներում իրավապահներն անցնելու են գործողությունների: Ադրբեջանն այս առումով առաջնայիններից կարող է լինել: Այն, որ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում գյուլենականները կիրառել են այսպես կոչված գյուլենական «ինքնության քողարկումը», լուրջ բարդություններ է առաջացնում: Թուրքական իշխանությունների հրահրմամբ կամ ուղղակի հանձնարարությամբ ադրբեջանական իշխանությունների գործողությունների ձեռնարկումը Ադրբեջանում գյուլենականների դեմ բավական ցավոտ կարող է լինել Ալիևի վարչակարգի համար: Այնպես, ինչպես Թուրքիայում գյուլենականները պահուստային տարբերակով պատրաստվել էին այս օրվան, այնպես էլ դա արվել է Ադրբեջանում: Այսինքն՝ քաղաքական օրակարգի ձևավորման համար ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալները՝ սցենարային տարբեր գործընթացների համար:

«Կոմպրոմատային պատերազմը», որը լայնորեն սկսեց կիրառվել Թուրքիայի վարչապետ Էրդողանի դեմ, երկար ժամանակ պատրաստված գործողություն էր, որը գործի դրվեց անհրաժեշտության պահին: Նույնը կարող է պատրաստված լինել և ամենայն հավանականությամբ էլ այդպես է, ալիևյան վարչակազմի դեմ: Իսկ Ալիևի կողմից Ադրբեջանում գյուլենականների դեմ հաշվեհարդարը առաջնահերթորեն կտեղափոխվի հենց այդ դաշտ, ինչը կդրսևորվի Ալիևի ու ադրբեջանական վարչակազմի դեմ բազմաթիվ վարկաբեկիչ բացահայտումներով, որոնք կարող են հարվածի տակ դնել Ալիևի առանց այդ էլ գոյություն չունեցող հեղինակությունը ներքին ու արտաքին մակարդակներում: Այսինքն, տարիներով Ադրբեջանի պետական ու նաև իրավապահ համակարգում ներդրված գյուլենական ներուժը կարող է կրկ-

նել Ադրբեջանում թուրքական սցենարը իր համար ոչ ցանկալի գործողությունների պայմաններում: Առավել ևս Էրդողան-Գյուլենի հակամարտությունը բացահայտ ի ցույց դրեց գյուլենականների դերակատարությունը հատկապես երկրի իրավապահ համակարգում, որը նույնիսկ որոշակի ժամանակահատվածներում դառնում էր դժվար վերահսկելի կառավարության համար: Սա պայմանավորված է տարիներով երկրի իրավապահ համակարգում գյուլենականների շարունակական ներդրմամբ, կադրային ապարատի ստեղծմամբ, ինչը հնարավոր էր դարձնում արդեն դրա ոչ ուղղակիորեն կառավարելը, և որն Էրդողանն անվանեց զուգահեռ պետություն:

2014 թ. սկզբներից թուրքական ՁԼՄ-ները սկսեցին ակտիվորեն քննարկել ու հրապարակումներ ունենալ Ադրբեջանում գյուլենական համայնքի, հավանական անդամների ու դերակատարության վերաբերյալ: Սկզբնական շրջանում դրանք ուղղակի ադրբեջանական իշխանություններին ուղղված ոչ պաշտոնական ուղերձներ էին:

Նույն թվականի փետրվարին թուրքական որոշ լրատվամիջոցներ թիրախի տակ առան Ադրբեջանի պաշտպանության նախարար Զ. Հասանովին և արտաքին գործերի նախարար Է. Մամեդյարովին՝ նրանց մեղադրելով գյուլենական շարժման հետ կապերի մեջ: Թուրքական ՁԼՄ-ներից հրապարակեցին Ֆ. Գյուլենի գաղտնի հեռախոսագրույցի ձայնագրության մասին, որի հիման վրա Ադրբեջանի նորանշանակ պաշտպանության նախարար Զ. Հասանովը որակվում էր որպես գյուլենական համայնքին մոտ կանգնած անձնավորություն: Ադրբեջանի կառավարությունը, սակայն, հերքեց նման հրապարակումների իսկությունը<sup>23</sup>: Նման հրապարակումների հեղինակը թուրքական «Haber10» լրատվական կայքն էր<sup>24</sup>, որն, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, հանդիսանում է թուրքական հատուկ ծառայությունների խոսափողներից և նույնիսկ իրականությանը չհամապատասխանող նման հրապարակումները կարող էին ուղղակի Ադրբեջանի իշխանություններին ուղղված հատուկ ազդակ լինելին:

Թուրքական կառավարությանը մոտ կանգնած «Sabah» պարբերականը 2014 թ. մարտի 3-ին հրապարակեց ադրբեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկի մոտ հայտնված Ադրբեջանում գյուլենականների կարևորագույն կրթական հաստատու-

<sup>23</sup> Azerbaycan'da paralel örgüt krizil, <http://www.haber10.com/haber/478631/>

<sup>24</sup> Турецкая разведка переводит стрелки на Эльмара Мамедьярова и Закира Гасанова, <http://haqqin.az/comics/17473>

թյունների համակարգող կառույցը հանդիսացող «Çağ Öğretim İşletmeleri» ընկերության տնօրենի գաղտնի նամակը շարժման առաջնորդ ֆ. Գյուլենին, որտեղ մտահոգություն էր հայտնվում, որ Թուրքիայում ընթացող զարգացումները բացասական են ազդում նաև Ադրբեջանում գյուլենականների վրա, ուստի կոչ էր արվում քայլեր ձեռնարկելու այդ ուղղությամբ<sup>25</sup>: Ըստ այդմ՝ Ադրբեջանում գյուլենական շարժման կողմից կիրառվել է «թուրքական մոդելը»՝ նախագահի աշխատակազմում, ներքին գործերի, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարություններում ու նաև հետախուզության ակադեմիայում գյուլենական կադրային ապարատի աստիճանական ստեղծումը, այդ ոլորտներում նրանց իսկ ներդրած «համակարգողների» կամ ինչպես, Թուրքիայում է այսօր ընդունված, «համայնքի իմամների» միջոցով:

Սկզբում թուրքական, այնուհետև ադրբեջանական մամուլում Ադրբեջանում գյուլենականների ու նրանց ցանցի վերաբերյալ հրապարակումներ սկսեցին ի հայտ գալ, նույնիսկ հրապարակվեցին գաղտնի նամակներ՝ Ադրբեջանում գյուլենական համայնքի տարածման ու կոնկրետ պաշտոնյաների վերաբերյալ:

Ադրբեջանի պետական համակարգում գյուլենականների տարածման վերաբերյալ թուրքական մամուլի ակտիվ հրապարակումներից հետո գործի անցան նաև ադրբեջանական լրատվամիջոցները, որոնք մի տեսակ «որս» սկսեցին պետական համակարգում գյուլենականներին բացահայտելու ուղղությամբ: Փաստորեն թուրքական մամուլի կամ հատուկ տեղեկատվական ուղերձները Թուրքիայից Ադրբեջան տեղ են հասել: Թուրքիայում այսպես կոչված «զուգահեռ պետության» ադրբեջանական տարբերակը ակտիվ քննարկման մեջ հայտնվեց տեղական մամուլում: Ադրբեջանական մամուլի համաձայն՝ Թուրքիայի նմանությամբ Ադրբեջանի պետական ու այլ ոլորտներում գյուլենականների բազա կամ ավելի ճիշտ «կադրային ապարատ» է ստեղծվել:

Ըստ հրապարակումների՝ գյուլենական շարժման հետ սերտ կապերի մեջ են Ադրբեջանի նախագահի աշխատակազմի բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ աշխատակազմի քաղաքական վերլուծությունների ու տեղեկատվության բաժնի ղեկավար Էլնուր Ասլանովը, «Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի» տնօրեն Ֆերիաթ Մամեդովը, խորհրդարանի պատ-

<sup>25</sup> Cemaatin Azerbaycan panigi, <http://www.sabah.com.tr/Gundem/2014/03/03/cemaatin-azerbaycan-panigi>

գամավորներ, քաղաքական գործիչներ: Ադրբեջանական մամուլը կարողացել է ձեռք գցել Ստամբուլում Ադրբեջանի գլխավոր հյուպատոս Հասան Ջեյնալովի կողմից նախագահի աշխատակազմին ու ԱԳՆ-ին ուղարկված զեկույցը, որտեղ ներկայացված է եղել ադրբեջանական գյուլենականների ցանկը<sup>26</sup>: Իհարկե, կասկածից դուրս է, որ այդ ցուցակը Հ. Ջեյնալովի մոտ է հայտնվել Թուրքիայի հատուկ ծառայությունների գործուն միջամտությամբ, որպես նախագահ Ալիևին ուղղված գաղտնի ուղերձ կամ հրահանգ:

Այն, որ թուրքական ներքաղաքական զարգացումները շղթայական ձևով կարող են տեղափոխվել Ադրբեջան, մեծ հավանականություն ունի, արդեն իսկ կան նախանշանները, դա դրսևորվում է հիմա մեդիա հարթությունում և ադրբեջանական իշխանությունների կողմից որոշ գործողություններով: Սակայն դեռևս պարզ չէ, թե նախագահ Ալիևն ի վերջո ինչպիսի քայլերի կդիմի՝ թուրքական օրինակով կոշտ «մաքրագատման», թե «փափուկ բացահայտման»:

Ադրբեջանի նախագահի հրամանագրով մարտի 16-ին պաշտոնից ազատվեց Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության ու տեղեկատվության բաժնի պետ Էլնուր Ասլանովը, որի անունը կապվում է Ադրբեջանում գյուլենական շարժման հետ, ով, ըստ մի շարք հրապարակումների, պետական ապարատում ազդեցիկ գյուլենականներից մեկն էր<sup>27</sup>:

Փաստորեն, Ասլանովը դարձավ Ադրբեջանում առաջին պաշտոնյա «զոհը»՝ գյուլենականների հետ առնչության համար: Առավել ուշագրավ է հատկապես այն, որ թուրքական իշխանամետ, ազդեցիկ լրատվամիջոցներից մեկը, որն իր վրա է վերցրել տեղեկատվական հարթությունում Գյուլենի դեմ պայքարի հիմնական մասնաբաժիններից մեկը, գլխավոր էջում Ասլանովի ազատումը ներկայացրել էր որպես «Ադրբեջանում զուգահեռ պետության դեմ օպերացիա»<sup>28</sup>:

Ավելի ուշ՝ նախագահ Ի. Ալիևի հրամանով զբաղեցրած պաշտոնից ազատվեց Ադրբեջանի Կրոնական կազմակերպություն-

<sup>26</sup> Azerbaycan'da da 'paralel yapı' tartışması, <http://www.taraf.com.tr/haber-azerbaycanda-da-paralel-yapi-tartismasi-149779/> 04.03.2014

<sup>27</sup> Hakimiyyetleri "nurçu davası"nda bir mürur "vuruldu", <http://www.azadliq.info/siyast/42758-elnur-aslanov-idn-cxarld.html>

<sup>28</sup> Aliyev, Gülen Cematinin önemli ismini görevden aldı, <http://yenisafak.com.tr/dunya-haber/aliyev-gulen-cematinin-onemli-ismini-gorevden-aldi-17.03.2014-626692>

ների հարցերով պետական կոմիտեի նախագահ Էլշադ Իսքենդերովը: Ադրբեջանական որոշ լրատվամիջոցներ նրան ներկայացնում էին որպես գյուլենական շարժման ադրբեջանական ճյուղավորման ներկայացուցիչներից մեկը, իսկ թուրքական մամուլը նրա ազատումը որակեց որպես գյուլենականների դեմ ադրբեջանական իշխանությունների հերթական քայլը<sup>29</sup>:

Հավանականությունը մեծ է, որ Թուրքիայի ներքաղաքական արդի գործընթացները տեղափոխվեն Ադրբեջան: Իսկ Ադրբեջանում հետայսու գյուլենականների քաղաքական օրակարգը գնալով առավել կազմակերպված բնույթ կկրի՝ կիրառելով դեռևս «ինքնության քողարկման» մեթոդը: Ադրբեջանում հակագյուլենական գործողությունները կարող են սպառնալ Ալիևին ու նրա վարչակազմին, իսկ Ադրբեջանի իշխանությունների կողմից գործողություններ չձեռնարկվելու պարագայում այն վերածվելու է ադրբեջանական ներքաղաքական գործընթացներում լուրջ գործոնի: Արդեն իսկ Թուրքիայում Էրդողան–Գյուլեն սուր հակամարտության շրջանակում գյուլենականների կամ այսպես ասած «զուգահեռ պետության» դեմ գործողությունները կառավարության կողմից իրենց ազդեցությունն ունեցան նաև Ադրբեջանում: 2014 թ. մարտին թուրքական ՁԼՄ–ներում, ընդ որում՝ հիմնականում իշխանամետ, հրապարակումներ ի հայտ եկան Ադրբեջանում գյուլենական կրթական հաստատությունների դեմ կառավարության գործողությունների մասին: Ըստ այդ հրապարակումների՝ Ադրբեջանի կառավարությունը սկսել էր այդ երկրում գյուլենական համայնքի գործունեության «ուսումնասիրությունը»: Նման գործողություններ սկսել են դրսևորվել գյուլենական կրթական հաստատությունների դեմ, որոնք Ադրբեջանում բավական մեծ մասսայականություն են վայելում: Ադրբեջանի կառավարությունն անցել է գյուլենական շարժմանը պատկանող կրթական հաստատությունների դեմ տարբեր ստուգումների ու պատժամիջոցների կիրառմանը: Ըստ որոշ տեղեկությունների՝ ադրբեջանական կառավարությունը սկսել է գյուլենական համայնքին պատկանող դպրոցների «պետականացման գործընթացը»: Ըստ այդմ՝ Բաքվում գործող «Շաֆ–Kafkas» համալսարանը և դպրոցները անցել են «Ադրբեջանի միջազգային կրթական կենտրոնի» հովանու ներքո՝ որպես համակարգող վերադաս մարմնի: Ի դեպ, այդ

<sup>29</sup> Azərbaycan'da Cemaat operasyonu sürüyor, <http://www.aydinlikgazete.com/guendem/39715-azerbaycanda-cemaat-operasyonu-suruyor.html>, “Elnur Aslanovla Elçid Şeyidovun nurularla birgöyayihöyü”, <http://anspress.com/index.php?a=2&lng=az&nid=270455>

կառույցը գործում է Ադրբեջանի պետական նավթային ընկերությանը (SOCAR) կից: Ադրբեջանցի պաշտոնյաներից մեկը չի հերքել նման տեղեկությունը և այդ քայլը պատճառաբանել երկրում կրթական ոլորտի արդյունավետության բարձրացման ու համակարգման անհրաժեշտությամբ<sup>30</sup>: Գյուլենական համայնքի ներքո գործող դպրոցները մասնավոր հաստատություններ են, ուստի սրանով փորձ է արվում մի կողմից դրանք վերահսկելու, մյուս կողմից էլ՝ սկսելու դրանց փակման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Փաստորեն թուրքական կողմի ուղերձները կամ ավելի շուտ հորդորները տեղ են հասել, և Ադրբեջանի վարչակազմը, վախ զգալով Թուրքիայում ընթացող զարգացումներից, սկսել է «նախապատրաստական կամ կանխարգելիչ» միջոցառումները:

Կարելի է սպասել հետաքրքիր զարգացումների, քանի որ Ադրբեջանի գյուլենական համայնքի ազդեցիկ ներկայացուցիչները աջակցություն են խնդրել Փենսիլվանիայում գտնվող «վերադասից»:

Թուրքիան ակտիվորեն շարունակում է Ադրբեջանում «զուգահեռ պետության» կամ գյուլենական շարժման չեզոքացման ու վարկաբեկման գործողությունները: Թուրքիայում դրա դեմ կոշտ պայքարի շրջանակներում քայլեր են ձեռնարկվում նաև ադրբեջանական «զուգահեռ պետության» դեմ: Ադրբեջանում որոշում է կայացվել փակել «Yurd TV» հեռուստաալիքը, որը գործում էր Ադրբեջանի նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության ու տեղեկատվության բաժնի այլևս նախկին պետ Էլնուր Ասլանովի հովանավորությամբ, որի անունը կապվում էր գյուլենական շարժման հետ:

Թուրքական կառավարությանը սպասարկող և գյուլենականների դեմ տեղեկատվական դաշտում ակտիվ պայքար մղող «Sabah» պարբերականը 2014 թ. մարտին հրապարակեց հատուկ մի փաստաթուղթ, որը վերաբերում էր Ադրբեջանում գյուլենական կառույցների ֆինանսավորման խնդիրներին<sup>31</sup>: Ի դեպ, այդ փաստաթուղթն առաջինը հրապարակել է Ադրբեջանի կառավարությանը մոտ կանգնած լրատվական կայքերից մեկը: Էրդողանը իր և իր գլխավորած կառավարության դեմ կաշառակերության ու խարդախության «օպերացիայից» հետո ձեռնամուխ է եղել Ադր-

<sup>30</sup> Gülen okullarına operasyon!, <http://sozcu.com.tr/2014/gundem/gulen-okullarina-operasyon-466592/>

<sup>31</sup> Cemaat'ın para trafiği deşifre oldu, <http://www.sabah.com.tr/Gundem/2014/03/13/cemaatin-para-trafigi-desifre-oldu>

բեջանում գյուլենական շարժման նմանատիպ օպերացիային, որով ցույց են տրվում Ադրբեջանում պետական պաշտոնյաներին տրվող կաշառքների կամ այլ կերպ «նվիրատվությունների» փաստերը: Ադրբեջանում գյուլենական «իմամներից» համարվող Մուստաֆա Թ-ի կողմից Ֆ. Գյուլենին ուղղված զեկույցում նշված են 2013 թ. Ադրբեջանում գործող գյուլենական համայնքի կառույցներին ցուցաբերվող ֆինանսական հատկացումների չափերն ու ուղղությունները: Ադրբեջանում գյուլենական համայնքի պատկանող կառույցներից ստացված ընդհանուր գումարը կազմել է 53 մլն դոլար, որից շուրջ 17 մլն-ը հատկացվել է կոնկրետ նպատակների ու ֆինանսական ծախսերի համար, իսկ մնացյալ 36 մլն-ը պահվել «հուսալի ձեռքերում»:

Նույն թվականին Ադրբեջանում գործող և գյուլենական շարժմանը պատկանող «Hazar» հեռուստաընկերությանը, «Birc FM» ռադիոընկերությանը և «Zaman Azerbaijan» թերթին հատկացվել է ավելի քան 2,4 մլն դոլար: Ադրբեջանում գործող «Gag Öğretim» կազմակերպությունների միությանը հատկացվել է մոտ 8,5 մլն դոլար: Ավելի քան 500 հազար դոլար էլ հատկացվել է Ադրբեջանում գյուլենական համայնքի քարոզչության ու ներկայացման նպատակով՝ գրքերի, տեղեկագրերի, բրոշուրների ու միջոցառումների կազմակերպման միջոցով: Այստեղ առավել հետաքրքիրը Ադրբեջանում պետական պաշտոնյայներին ու «կարևոր անձանց» վարձատրության ու «նվիրատվությունների» համար առանձնացված գումարներն են: Պետական հաստատություններում ու կառույցներում գյուլենական շարժման «բարեկամներին» որպես ամսեկան աշխատավարձ հատկացվել է ավելի քան 3,5 մլն, իսկ Ադրբեջանի «ազդեցիկ» մարդկանց նվիրատվությունների ու նվերների համար՝ 732 հազար դոլար<sup>32</sup>: Փաստորեն սա այն ծախսերի մի մասն է, որը կոչված է ապահովելու շարժման տեղեկատվական-քարոզչական գործունեության ու «ներթափանցման» համար: Հիմնական ֆինանսական միջոցները գոյանում են նույն Ադրբեջանում գործող, համայնքին պատկանող բիզնես կառույցներից: Առաջիկայում կարելի է սպասել Ադրբեջանում շարժմանը պատկանող բիզնես կառույցներին ու ընկերություններին, ինչպես նաև կոնկրետ անձնաց դեմ գործողությունների, քանի որ, ըստ երևույթին, Ալիևը տվել է իր «հավատարմության երդումն» Էրդողանին:

<sup>32</sup> Նույն տեղում:



2014 թ. ապրիլին Թուրքիայի վարչապետ Էրդողանի կատարած այցը Բաքու կարելի է դիտարկել նաև գյուլենականների դեմ Ադրբեջանի իշխանությունների կատարելիք գործողությունների համատեքստում: Էրդողանին պետք էր ստանալ նաև Ադրբեջանում գյուլենականների դեմ Ալիևի հավատարմությունն ու պայքարի հստակ երաշխիքներ: Թուրքական կառավարությանը մոտ կանգնած լրատվամիջոցները, հղում կատարելով ադրբեջանականներին, գրում էին, որ Էրդողանը Բաքու է այցելել՝ օրակարգում ունենալով նաև Ադրբեջանում գյուլենականների դեմ գործողությունների հարցը և Ադրբեջանում գյուլենական ցանցի ու դեմքերի վերաբերյալ անձամբ գաղտնի փաթեթ ներկայացրել ադրբեջանական բարձրագույն իշխանություններին<sup>33</sup>: Ավելի ուշ Էրդողանը հայտարարեց, որ Ադրբեջանում կայացած հանդիպումներում քննարկվել է նաև Թուրքիայում և Ադրբեջանում գյուլենականության դերակատարության հարցը<sup>34</sup>: Էրդողանի այցի ընթացքում Ադրբեջանում գյուլենական կրթական ցանցի՝ «Çağ Öyrətım İslətmələri» հոլդինգի ղեկավար Է. Օզերենը հանդես եկավ Էրդողանի դեմ՝ նշելով, որ Թուրքիայի իշխանությունները չպետք է միջամտեն Ադրբեջանի ներքին գործերին<sup>35</sup>:

2014 թ. մայիսին Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանն ու կառավարությանը մոտ կանգնած թուրքական մամուլը հրապարակեց, որ Ադրբեջանում շարունակվում են Գյուլենի ու «զուգահեռ պետության» դեմ գործողությունները: Ըստ այդ հրապարակումների՝ Ադրբեջանի կրթության նախարարությունը հրաժարվել է երկարաձգել իր հաշվեկշռում գտնվող և գյուլենական հիմնադրամի կողմից շուրջ 15 տարի շարունակ վարձակալված «Դամլա» անունը կրող հանրակացարանը<sup>36</sup>: Ադրբեջանի կառավարությունը վերջին շրջանում տարբեր գործողություններով փորձում է ցույց տալ թուրքական կողմին իր հետևողականությունը երկրի ներսում գյուլենականների դեմ պայքարի հարցում և մյուս կողմից էլ՝ ձգտում դանդաղ ու զուսպ գործողություններով չեզոքացնել դրա դերակատարությունը:

<sup>33</sup> Başbakan dosyayı eliyle teslim etti, <http://www.sabah.com.tr/Gundem/2014/04/05/basbakan-dosyayi-eliyle-teslim-etti>

<sup>34</sup> Erdoğan: Azerbaycan'da 'paralel yapı'yı konuştuk, <http://www.ilkehaber.com/haber/erdogan-azerbaycanda-paralel-yapiyi-konustuk-29265.htm>

<sup>35</sup> Представитель Фетхуллаха Гюлена в Баку выступил против Эрдогана, <http://haqqin.az/news/19924>

<sup>36</sup> Azerbaycan'da paralel temizlik devam ediyor, <http://www.takvim.com.tr/Guncel/2014/05/14/azerbaycanda-paralel-temizlik-devam-ediyor>

Եվ ահա արդեն մեկ ամիս անց ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակեցին, որ Ադրբեջանում դադարեցվել է շարժման կրթական ցանցի «Araz Kurslari» մինչբուհական նախապատրաստական դասընթացների գործունեությունը<sup>37</sup>: Դեռևս 2013 թ. մարտին Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR), գյուլենական շարժման «Çağ Öyrətım İslətmələri» կազմակերպության ու «Praktikal Salyuşns Qrup» ընկերության միջև ստորագրված փաստաթղթով՝ հիմնվեց «Ադրբեջանական միջազգային կրթական կենտրոն» հասարակական միավորումը, որի կազմի մեջ մտան շարժման կրթական հաստատությունները, այդ թվում նաև դպրոցները, համալսարանն ու «Araz» դասընթացները<sup>38</sup>: 2014 թ. հունիսի 18-ին «Ադրբեջանական միջազգային կրթական կենտրոնի» ընդհանուր ժողովը որոշում կայացրեց փակելու այդ կենտրոնի շրջանակում գործող դպրոցներն ու դասընթացները՝ բարեփոխումների ու առկա ֆինանսակառավարչական խնդիրների պատճառով<sup>39</sup>:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ Թուրքիայում տեղի ունեցած զարգացումները և թուրքական կառավարության դեմ իրականացված վարկաբեկիչ գործողությունները լրջորեն անհանգստացրած պետք է լինեն Ադրբեջանի իշխանություններին: Եվ եթե նախկին տարիներին Ադրբեջանում գյուլենական շարժման դեմ լուրջ քայլեր չէին իրականացվում, ապա դա պայմանավորված էր ԱԶԿ-ի և Ֆ. Գյուլենի միջև դաշնակցային հարաբերություններով, ինչը կարող էր վնասել երկու երկրների հարաբերությունները, քանի որ գյուլենականությունն Ադրբեջանում դիտվում էր որպես Թուրքիայի կողմից հասարակական, կրթական ու կրոնական գործունեության, ազդեցության տարածման կարևոր լծակ: Իրավիճակը էականորեն փոխվել է, սակայն Ադրբեջանի իշխանությունները, հաշվի առնելով թուրքական սցենարները, կդրսևորեն փոքր-ինչ զգուշավորություն գյուլենականության դեմ պայքարի շրջանակում:

Վերջին տարիներին ընդհանրապես Ադրբեջանում նկատվում է կրոնական գործոնի դերակատարության աճ, ինչն առա-

<sup>37</sup> Azərbaycanda “Araz Kurslari” MMC-nin fəaliyyətinin dayandırılması haqqında qərar verilib, <http://az.trend.az/news/society/2286547.html>

<sup>38</sup> Расширяются ряды учрежденного ГНКАР Общественного Объединения «Международный образовательный центр», <http://www.socarplus.az/ru/article/345/rasshirayutsya-ryadyi-uchrejdennogo-gnkar-obschestvennogo-obyedineniya-quotmejdunarodnyiy-obrazovatelynyiy-tsentrquot>

<sup>39</sup> ԱՂՆԸ-ի պաշտոնական էջ, <http://new.socar.az/socar/az/news-and-media/news-archives/news-archives/id/7449>

վել ցայտուն է դրսևորվում իսլամական տարբեր ծայրահեղական խմբավորումներում ադրբեջանցիների ներգրավվածության աճի միտումներում: Այդ տեսանկյունից առավել խոսուն է Սիրիայում ընթացող պատերազմի օրինակը, որում գնալով ավելանում է ադրբեջանցիների ներգրավվածությունը տարբեր ծայրահեղական կառույցներում:

Ադրբեջանում իսլամական քաղաքական օրակարգի խնդիրը գնալով ավելի ակնառու է դառնում: Մասնավորապես դա լավագույնս դրսևորվեց Սիրիայում ընթացող հակամարտության ժամանակ, երբ ծայրահեղ իսլամական ապստամբների շարքերում գնալով աստիճանաբար մեծացավ ադրբեջանցիների թիվը: Ծագումով ադրբեջանցի իսլամական ծայրահեղականների ակտիվությունը Սիրիայում նկատվում է շատ վաղուց, ընդ որում՝ այդ երկրում կռվող ադրբեջանցիներից բաղկացած ծայրահեղական խմբավորումները բազմաթիվ են և համալրված են արդի զինամթերքով:

Ադրբեջանի քաղաքական կյանքի ոչ շատ հեռավոր ապագայում չի բացառվում, որ այս նույն ադրբեջանական զինյալների ակտիվ մասնակցությամբ արդեն այդ երկրում կկազմակերպվի «սրբազան պատերազմ»՝ ընդդեմ «անհավատ իշխանությունների», իսկ այն, որ իսլամական արժեհամակարգն ու շարժումները կենսունակ են դառնում, արդեն նկատելի փաստ է:

## **ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ. ԶԻՅԱ ԳՅՈՔԱԼՓԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ<sup>1</sup>**

Թուրքիայի Հանրապետությունում «լեզվական հեղափոխության» հիմնահարցերի ուսումնասիրողները Աթաթյուրքի ու քեմալականների՝ լեզվի բնագավառում իրականացրած արմատական բարեփոխումների նպատակները ավանդաբար փորձում են ամփոփել հետևյալ դրույթներում. թուրքերենը մաքրել օսմաներենի «վնասակար անհարթություններից», լեզվին հաղորդել ազգամիավորիչ բնույթ՝ փակելով օսմաներենի պատճառով ձևավորված ճեղքվածքը մտավորականության ու ժողովրդի գործածած լեզվի, խոսակցական ու գրական լեզուների միջև, կարողանալ ուրվագծել թուրքերենի զարգացման ուղին, Թուրքիայի Հանրապետությունում կրթական համակարգի միասնականությունն ապահովելուն զուգահեռ «ազգային դարձնել» («Millîleştirme») դաստիարակությունը, «միասնական հայտարարի բերել» կրթությունը և ազգային դաստիարակության համար անհրաժեշտ լեզուն, ներկայացնել թուրքերենի գեղեցկությունն ու հարստությունը՝ ձեռնարկելով խոր գիտական ուսումնասիրություններ, թուրքերենը դարձնել ազգային մշակույթի արտահայտման անթերի միջոց՝ ապահովելով ածանցման միջոցով նոր բառեր կազմելու հնարավորությունների տեսանկյունից լեզվի արդյունավետությունը, թուրքերենը հասցնել այնպիսի վիճակի, որ այն կարողանա համարժեքորեն բավարարել ժամանակակից քաղաքակրթական մակարդակի ներկայացրած հասկացությունների պահանջները, ստեղծել ցեղային, տոհմային, տեղային ու կրոնահամայնքային

<sup>1</sup> Սույն հոդվածում առաջադրվող խնդիրներն ուսումնասիրվել են ՀՀ Գիտության կոմիտեի՝ 2013–2015 թթ. թեմատիկի ֆինանսավորմամբ:

ընկալումից անդին և գերակա բարձր հոգևոր կազմակերպմամբ ազգային գիտակցություն<sup>2</sup>: Լեզվական, ինչպես և քեմալական մյուս ռեֆորմներն ուղղակիորեն բխում էին Թուրքիան «թուրքաց–նելու» քաղաքական խնդրից:

Սույն համեստ հրապարակման մեջ կփորձենք «էտյուդային» սեղմ շրջանակներում ներկայացնել քեմալականների լեզվական քաղաքականության և Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի «գաղափարական հոր» թյուրքականության գաղափարախոս Զիյա Գյոքալփի<sup>3</sup> լեզվաբանական հայացքների որոշ առնչությունները, շուրջ հարյուրամյա «դիտակետից» արձանագրել լեզվի ոլորտում գյոքալփյան կանխատեսումների իրականացումը և անիրականանալիս:

\* \* \*

Թուրքիայում լեզվական բարեփոխման–պարզեցման համար պայքարի պատմությունը ժամանակակից թուրք և եվրոպական հետազոտողների ճնշող մեծամասնությանն անմիջականորեն կապում է թուրքերի «ազգային ինքնահաստատման ու գոյապայքարի» հետ՝ այս գործում ևս ընդունելով Զիյա Գյոքալփի դերը, սակայն հատուկ շեշտելով Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի վաստակի բացառիկությունը<sup>4</sup>: Լեզվական բարեփոխումների խնդիրները չեն «վրիպել» նաև ռուսաստանյան ու խորհրդային արևելագետների ուշադրությունից: Կարծում ենք՝ մասնավորա–

<sup>2</sup> Sê ‘u Ramazan Korkmaz, Dil Bilincimizin Serüveni veya Bir Varlık Alanı olarak Türkçe ve Atatürk, “Türk Dili“ (Dil ve Edebiyat Dergisi), Sayı 580, 2000/ I, s. 325–326, հմմտ. նաև Prof. Dr. Zeynep Korkmaz, Dil İnklâbı ve Atatürk’ün Türk Dili’ne Bakış Açısı:

<sup>3</sup> Զիյա Գյոքալփի (1876–1924) կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս Ա. Սաֆարյան, Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», ԵՊՀ հրատ., Եր., 2012, A. Safaryan, Ziya Gokalp On National Education, “Iran and the Caucasus”, vol. 8.2, Brill, Leiden– Boston, 2004, pp. 219–229: Զիյա Գյոքալփի՝ քեմալականների վրա գործած ազդեցության մասին մասնավորապես տե՛ս Ա. Алиев, Роль националистических идей Зии Гекалпа в формировании идейно–политической платформы кемалистов, „Вестник ЛГУ“, 1982, № 20, с. 41–47:

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Ramazan Korkmaz, a. g. e., ss. 325–326, Yaman Örs, Türkçeleşmiş Türkçe midir?, “Ulusal Kültür” (Üç Aylık Kültür Dergisi), Yıl 1, Sayı 2, Ekim 1978, ss. 235–237, Nuri Eren, Turkey Today – and Tomorrow: An Experiment in Westernization, Frederic A. Preager, Publisher, New York–London, 1963, p. 217, ինչպես նաև Ա. Սաֆարյան, Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքների շուրջ, Մերձավոր Արևելք և Կովկաս (Միջազգային գիտաժողով՝ նվիրված Արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին), Եր., 2008, էջ 78–79:

պես ուշագրավ է ճանաչված խորհրդային թյուրքագետ–ակադեմիկոս Ալեքսանդր Սամոյլովիչի (1880–1938)<sup>5</sup> վկայությունը քեմալական Թուրքիայում պատմագիտական ու լեզվաբանական աշխատանքների քաղաքական նշանակության մասին՝ ամփոփված «Լեզվական շինարարությունը Թուրքիայում»<sup>6</sup> հակիրճ, սակայն 1920–ական թթ. երկրորդ կեսին և 1930–ական թթ. սկզբին քեմալականների վարած լեզվական քաղաքականության մասին տեղեկատվությամբ հագեցած հոդվածում, որը տպագրվել է նախկին ԽՍՀՄ Կենտգործկոմի Ազգությունների խորհրդի նախագահությանն առընթեր Նոր այբուբենի համամիութենական կենտրոնական կոմիտեի կողմից հրատարակված «Գիր և հեղափոխություն» ժողովածուի առաջին հատորում, ինչը նույնպես փաստում է հիշյալ հրապարակման մեջ արծարծվող հիմնահարցերի թե՛ գիտական, թե՛ հասարակական – քաղաքական կարևորությունը: «Հարևան բարեկամական երկրների գիտական հաստատությունների միջև պատմության ու լեզվաբանության ոլորտում մշտական համագործակցություն հաստատելու նպատակով»<sup>7</sup> նախկին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան 1933 թ. մարտին Անկարա էր գործուղել հռչակավոր արևելագետ և լեզվաբան, ակադեմիկոս Նիկողայոս Մառին ու վերոհիշյալ հոդվածի հեղինակին՝ թյուրքագետ ակադեմիկոս Ալեքսանդր Սամոյլովիչին, ով, մեկ ամիս անց վերադառնալով գործուղումից, «Թուրքիայի լեզվական շինարարության մասին» առաջին համա-

<sup>5</sup> Ս. Սամոյլովիչի աշխատությունների ցուցակը և նրա մասին գրականությունը տե՛ս Փ. Ашин, Александр Николаевич Самойлович, «Тюркологический сборник» 1974, Москва, 1978, с. 8–27, 263–292: Մասնավորապես տե՛ս նաև Ա. Самойлович, Общий взгляд на возникновение и развитие мусульманско-турецких литературных языков в связи с разговорными наречиями, «Советская тюркология», Баку, 1973, N 5, с. 105–110:

<sup>6</sup> А. Самойлович, Языковое строительство в Турции, Письменность и революция, Сборник I, Москва–Ленинград, 1933, с. 187–191. Տասնամյակներ անց՝ 1983 թ., Թուրքական լեզվաբանական ընկերությունը մտավ Աթաթյուրքի անվան լեզվի, մշակույթի և պատմության բարձրագույն ընկերության (Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu) կազմի մեջ: Տե՛ս Ա. Кононов, Реорганизация турецкого лингвистического общества, Новое научное общество в Турции, «Советская тюркология», 1984, 3, с. 75–83, Теоретические проблемы турецкой грамматики. Новое в зарубежной лингвистике. Выпуск XIX. Проблемы современной тюркологии, Москва, 1987, с. 6: Ժամանակակից թուրքերենի նրբների մշակման գործում Թուրքական լեզվաբանական ընկերության դերի մասին տե՛ս նաև Ք. Юсипова, Словообразовательная продуктивность – непродуктивность реликтовых аффиксов в современном турецком языке, «Советская тюркология», № 6, Баку, 1986, с. 49–58:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 187:

ռոտ հաղորդումն է ներկայացնում Մոսկվայում՝ վերոհիշյալ Նոր այբուբենի համամիութենական կենտրոնական կոմիտեին, իսկ երկրորդ հաշվետու հաղորդումը՝ գիտությունների գկադեմիայի ընդհանուր ժողովին, որտեղ էլ որոշում է ընդունվում խորհրդաթուրքական գիտական համագործակցությունը խթանելու համար կազմել հատուկ հանձնաժողով: Ա. Ն. Սամոյլովիչի «Լեզվական շինարարությունը Թուրքիայում» հոդվածի հիմքում ընկած են ինչպես հեղինակի հաշվետվությունների տեքստերը, այնպես էլ անձնական դիտարկումները և արտասահմանյան գործուղման ժամանակ հավաքած նյութերը: Չնայած ակնհայտ է, որ ակադեմիկոս Ա. Ն. Սամոյլովիչը ծայրահեղ զգուշավոր էր հոդվածի ձևակերպումներում, այսուհանդերձ չէր կարող չարձանագրել, որ քեմալական կառավարության կողմից «լեզվաբանությանը ներկայացվող պահանջներն ընդլայնվել ու խորացել են», քանզի «մեծածավալ աշխատանքներ են սկսվել պատմագիտական ճակատում, որը պատմագիտական հիմնահարցերի լուծման համար լեզվաբանության օգնության կարիքն ունի»<sup>8</sup>:

Կարևորվում են Ալեքսանդր Սամոյլովիչի վկայություններն ու դատողությունները քեմալական իշխանությունների կողմից հատուկ ստեղծված «Լեզվական հանձնաժողովի» (Dil encümeni), «Թուրքական պատմության ուսումնասիրության ընկերության», «Թուրքերենի ուսումնասիրության ընկերության» ու Ստամբուլում գումարված առաջին լեզվաբանական «քրոյոլթայի» (համագումարի կամ համաժողովի), Լեզվաբանական ընկերության ծրագրերի և գործունեության վաղ շրջանի մասին, որոնք լրացուցիչ հնարավորություն են ընձեռում նաև եզրահանգումներ անելու՝ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի և նրա ստեղծած Ժողովրդական (Ժողովրդահանրապետական կամ Հանրապետական-ժողովրդավարական) կուսակցության լեզվական «շինարարության» քաղաքականության վրա Չիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքների գործած ազդեցության վերաբերյալ: Ա. Սամոյլովիչը ընդգծել է. «Այդ (իմա՝ լեզվաբանական – Ա. Ս.) աշխատանքով անմիջականորեն հետաքրքրվում է հանրապետության նախագահը՝ Գազի Մուստաֆա Քեմալը, որը երբեմն կազմակերպում է երկու (իմա՝ պատմագիտական և լեզվաբանական – Ա. Ս.) ընկերությունների նախագահությունների նիստերը իր նստավայրում:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում: Հմմտ. նաև՝ Ramazan Korkmaz, a. g. e., ss. 324–326:

Լեզվական շինարարությունը անվանվում է լեզվական հեղափոխություն, իսկ նրա կազմակերպումը՝ լեզվական մոբիլիզացիա»<sup>9</sup>:

Թուրքական լեզվաբանական ընկերության ծրագիրը, որը կանխանշվել էր 1932 թ. ստամբուլյան լեզվաբանական «քուրուլթայի» կողմից, բաղկացած էր հետևյալ յոթ կետից, որտեղ հստակ կերպով արձանագրվել են ազգայնականությունն իբրև կարևորագույն սկզբունք հռչակած պետականության կողմից լեզվաբաններին և «լեզվական մոբիլիզացիային» առնչվող բոլոր այլ մտավորականներին, պետական պաշտոնյաներին պատվիրվող աշխատանքի կոնկրետ ուղղությունները. 1. Թուրքերենի և շումերերենի, խեթերենի, հնդեվրոպական ու սեմական լեզուների «համեմատական» ուսումնասիրություն<sup>10</sup>, 2. Թուրքերենի համեմատական քերականություն, 3. Թուրքերենի բարբառների և հիմնական բառարանների կազմում, թուրքերենի ձևաբանության ու շարահյուսության «շտապ պատրաստում», 4. Թուրքերենի պատմական քերականություն, 5. Թուրքերենի վերաբերյալ արևելյան և արևմտյան աշխատությունների հավաքում և մասնակիորեն թարգմանություն, 6. Արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ հանդեսի հրատարակում, 7. Թուրքական թերթերում հատուկ «լեզվական» բաժինների կազմակերպում<sup>11</sup>:

Քեմալական կառավարության համակողմանի աջակցությունը վայելող Լեզվաբանական ընկերությունը կարճ ժամանակահատվածում իր ճյուղավորումները տարածեց ամբողջ երկրում՝ «սկսած վիլայեթների գլխավոր քաղաքներից ու վերջացրած գյուղով կամ քոչվորական շրջանով, ինչպես ընկերության տեղական հանձնախմբերի և բաժանմունքների, այնպես էլ թղթակից անդամների ձևով», իսկ այնտեղ, որտեղ կային «ժողովրդական տներ»<sup>12</sup>, հիշյալ ընկերությունը ներկայացված էր դրանց առնթեր լեզվի, գրականության ու պատմության բաժիններով: Լեզվաբա-

<sup>9</sup> А. Самойлович, Языковое строительство в Турции, с. 189.

<sup>10</sup> Փաստորեն Մերձավոր Արևելքում թուրքերին բնիկ դարձնելու քաղաքական խնդիրը սպասարկելու նպատակով շումերերենը և խեթերենը հայտարարվում էին «հին թյուրքական լեզուներ» (“Türkçenin gerek Şumer, Eti gibi en eski Türk dilleriyle, gerek Hint-Avrupa Sami denilen dilleriyle mukayesi yapılmalıdır”): Stê ‘u Agâh Sırrı Levend, Türk dilinde gelişme ve sadeleşme evreleri, Üçüncü baskı, Ankara, 1972, s. 415, ինչպես նաև А. Кононов, Очерк истории изучения турецкого языка, Ленинград, 1976, с. 72-73:

<sup>11</sup> А. Самойлович, Языковое строительство в Турции, с. 188.

<sup>12</sup> «Ժողովրդական տները» բացվում էին 1932 թվականից Հանրապետական-ժողովրդական կուսակցության կողմից «թուրք ազգայնականության ոգով մշակութային-լուսավորչական աշխատանք» տանելու նպատակով: Տե՛ս նույն տեղում:



նական ընկերության ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական կազմակերպություններում միավորվում էին ոչ միայն մասնագետ-լեզվաբանները, որոնք Թուրքիայում պարզապես շատ քիչ էին, այլև լուսավորության, առողջապահության գերատեսչությունների ու բանակի ներկայացուցիչներ, գրողներ<sup>13</sup>:

Հիշարժան է, որ 1930-ական թթ. Թուրքիայում գերիշխել է «Արևային-լեզվաբանական տեսությունը» (Güneş-Dil teorisi)<sup>14</sup>, համաձայն որի՝ նախնադարյան մարդու դիտարկման առաջին օբյեկտը արևն էր, հետևաբար «արևի տարրը» առկա է յուրաքանչյուր բառի կազմում: «Ոչ բարդ մանիպուլյացիաների արդյունքում թուրքերենը հայտարարվում էր «ամենահին և ամենակուլտուրական լեզու», որը հիմք էր հանդիսացել բոլոր մյուս լեզուների համար: Սույն հիմնադրույթը թույլ էր տալիս հրաժարվել թուրքերենը օտար փոխառություններից մաքրելու անհրաժեշտությունից»<sup>15</sup>, քանզի փորձ էր կատարվելու բազմաթիվ բառեր, որոնք նախկինում համարվում էին «օտար», բացատրելու թուրքերենի միջոցով ու համարելու թուրքական: Այսպես botanik (բուսաբանություն)–ը «բացատրվում էր» bitki (բույս)–ի միջոցով, sosyal (սոցիալական)–ը՝ soy (ցեղ)–ի, termal (թերմալ)–ը՝ ter (քրտինք)–ի միջոցով, elektrik (էլեկտրականություն) բառը՝ iltirik, yiltirik, yaltirik (լույս, փայլատակում)–ի միջոցով... Քեմալական Թուրքիայի նկատմամբ համակրանք տաճող խորհրդային ակադեմիկոս Անդրեյ Կոնոնովը փաստում էր, որ ընդհուպ մինչև Աթաթյուրքի մահը Güneş-Dil teorisi–ն ազդել է թուրք լեզվաբանության ու պատմագիտական մտքի վրա՝ «չտալով այդ դիսցիպլիններին ո՛չ արգասաբեր գաղափարներ, ո՛չ վստահելի մեթոդիկա», իսկ հետագայում հիշյալ «տեսությունը և նրա վրա հիմնված լեզվական շինարարության ամբողջ պրակտիկան սկսեց սուր քննադատության ենթարկվել ինչպես աջ, այնպես էլ ձախ դիրքերից»<sup>16</sup>:

\* \* \*

Քեմալական իշխանությունների կողմից տարվող լեզվական քաղաքականությանը, լեզվաբանության ոլորտում թուրք-խորհրդային գիտական առնչություններին ու մասնավորապես այս

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 188–189:

<sup>14</sup> Ağâh Sırrı Levend , Türk dilinde gelişme ve sadeleşme evreleri, ss. 424–426, 431–433, 437–439, 444, 460–461, ինչպես նաև А. Кононов, նշվ. աշխ., էջ 72–73:

<sup>15</sup> А. Кононов, Очерк истории изучения турецкого языка, с. 73.

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում:

ոլորտում Ն. Մառի դերին հատուկ անդրադարձել է ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին<sup>17</sup>:

Ինչպես հայտնի է, քննելով հաբեթաբանության ու լեզվի մասին իր «նոր ուսմունքի» տարաբնույթ հիմնահարցերը, Ն. Մառը բնասիրական ուսումնասիրություններում լայնորեն օգտագործել է տարբեր լեզուների, այդ թվում՝ թուրքերենի և այլ թյուրքական լեզուների նյութերը, բացի այդ հրապարակել թյուրքագիտությանը հատուկ նվիրված մի քանի ծավալուն հոդվածներ<sup>18</sup>:

ԽՍՀՄ-ում Թուրքիայի պատմության ուսումնասիրության իր համառոտ ակնարկը Վ. Գորդլևսկին սկսում է «գիտության էնտոգիաստ Ն. Մառից», ում բնութագրում է որպես հախտուն, տարվող «և բնականաբար, երբեմն պատշաճ սահմաններն անցնող» անձնավորություն, ով արդեն 1927 թ. «ժողովուրդների ու լեզուների տարածումը և թուրքական լեզուների նախահայրենիքի հարցը» հոդվածում հայտարարել էր, որ թուրքերը սկզբնապես շարժվել են միջերկրածովյան տարածաշրջանից, և եթե հարկ է «լրջորեն խոսել թուրքերի նախահայրենիքի մասին, ապա այն հենց Միջերկրական ծովի մոտ է»<sup>19</sup>:

Վ. Գորդլևսկին հիշում է նաև, թե ինչպես Ն. Մառը, թուրքական կառավարության կողմից հրավիրվելով մասնակցելու «Թուրքերենի ուսումնասիրության ընկերության» աշխատանքներին, Անկարայում և Իզմիրում դասախոսություններ էր կարդացել թե՛ ընդհանուր լեզվաբանությունից, և թե՛ թուրքերենի պատմությունից և կրկին առաջ էր քաշել մի կարգախոս, որ առանց թուրքերի գոյություն չունի միջերկրածովյան տարածաշրջան: Ն. Մառի՝ փոքրասիական թուրքական բնակչության բնիկ լինելու մասին տեսակետները, անշուշտ, հիացական արձագանք էին գտնելու

<sup>17</sup> Տե՛ս В. Гордлевский, Изучение Турции в СССР, Избранные сочинение, т. IV, Москва, 1968, с. 356–359. Վ. Գորդլևսկու մասին մեր նախորդ հրապարակումներից տե՛ս Ա. Սաֆարյան, Ռ. Մելքոնյան, Ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին՝ Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման մասին, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», թիվ 6, Եր., 2009, էջ 298–304, Գ. Մելիքյան, Ալ. Սաֆարյան, Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), VII, ԵՊՀ հրատ., Եր., 2012, էջ 148–165:

<sup>18</sup> Մասնավորապես տե՛ս «Чуваши – яфетиды на Волге» (1926), «Расселение языков и народов и вопрос о прародине турецких (= тюрских. – Ա.Ա.) народов» (1927) և «О лингвистической поездке в Восточное Средиземноморье» (1934), տե՛ս նաև А. Векилов, Записи академика Н. Я. Марра по турецкой диалектологии, Исследования по филологии стран Азии и Африки, Изд. Ленинградского университета, 1966, с. 32:

<sup>19</sup> Տե՛ս В. А. Гордлевский, նշվ. աշխ., էջ 356:

Թուրքիայում<sup>20</sup>, այսօր էլ օգտագործվելու էին թուրքական և ադրբեջանական հրապարակումներում՝ համադրվելով նոստրատիկ տեսության դրոյթների և սուրբգրային փաստարկումների հետ, հաճախ բախվելով դասական լեզվաբանության, ալթայագիտության ու թյուրքագիտության արդեն դարավոր ավանդույթներին<sup>21</sup> ու ներկայացնելով ժամանակակից թուրքերի և ադրբեջանցիների նախնիների միգրացիան Փոքր Ասիա և Այսրկովկաս՝ որպես բնականոն «վերադարձ բնօրրան»...

\* \* \*

Լեզվական բարեփոխումների (գրական լեզվի պարզեցման, ժողովրդախոսակցականին մոտեցման) առանձին փորձեր օսմանյան իրականության մեջ եղել են արդեն միջնադարում<sup>22</sup>, խնդիրը հատուկ կարևորվել է 19-րդ դարում՝ Իբրահիմ Շինասիի, Նամըք Քեմալի և նրանց կողմնակիցների, այնուհետև «Սերվեթի Ֆյունուն» գրական միավորման և նրա կողմից հրատարակվող նույնանուն հանդեսի շուրջը համախմբված «երիտասարդ» մտավորականների խմբի կողմից, այսուհանդերձ գրական օսմաներեն լեզուն ժողովրդախոսակցականին մոտեցնելու փորձերը ցանկալի արդյունք չէին տալիս<sup>23</sup>: «Նոր օսմանների»՝ գրական թուրքերենը ժողովրդախոսակցականին մոտեցնելու, լեզվի «թուրքականացման» համար մղած պայքարը նորովի շարունակեցին երիտթուրքերը<sup>24</sup>: Սեզայի բեյը «Շուրայ-ի ումմեթ» պարբերականի էջերում հանդես էր գալիս ի պաշտպանություն ժողովրդին հասու լեզվի, կոչ էր անում գրողներին հրաժարվելու թուրքական միջնադարյան գրականության ստեղծագործությունների խրթին լեզվից՝ պնդելով, որ դա թուրք ժողովրդի լուսավորության կարևորագույն նախապայմանն է<sup>25</sup>: Երիտթուրքական 1908 թ. հեղաշրջումից հե-

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>21</sup> Տե՛ս և հիմն. մասնավորապես А. Дыбо, Исследования по сравнительно-исторической грамматике тюркских и алтайских языков, „Алтаистика ж[е] туркология“ („Алтаистика и тюркология“), №2 (2), 2011, с. 33–44:

<sup>22</sup> Մասնավորապես տե՛ս Faruk Kadri Timurtaş, Tarih İçinde Türk Edebiyatı, Vilâyet Yayınları, İstanbul, 1981, s. 81–86, А. Кононов, Очерки истории изучения турецкого языка, Ленинград, 1976, с. 63–64, Köprülü M. F., Millî Edebiyat Cereyanının İlk mübeşirleri ve Divanı Türkî-i basit, XVI–ncı Asır Şairlerinden Ederneli Nazmînin eseri, İstanbul, 1928, s. 14, 19, (արարատյան) Milli Edebiyat Cereyanını İlk Mübeşşirlerinden Mahremî, «Hayat Mecmuası», 1928, IV, s. 82:

<sup>23</sup> А. Кононов, Очерки истории изучения турецкого языка, с. 68:

<sup>24</sup> Ю. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX в.), Москва, «Наука», 1971, с. 275:

<sup>25</sup> Տե՛ս Ş. Mardin, Jön Türklerin Siyasi Fikirleri, 1895–1908, Ankara, 1964, s. 201, ինչ-

տո վերականգնված սահմանադրության 7-րդ հոդվածով թուրքերենը հռչակվում էր իբրև պետության պաշտոնական լեզու: Իթթի-հաթականները փորձում էին թուրքերենը պարտադրել ոչ միայն կայսրության քրիստոնյա, այլև ոչ թուրք մուսուլման հպատակներին, ինչը հատկապես արաբների ծայրահեղ դժգոհության կարևոր պատճառ էր դառնալու: Հետագայում քեմալականները շարունակելու էին երիտթուրքերի լեզվական-ասիմիլյատորական բիրտ քաղաքականությունը, 20-ական թթ-ից խափանելով քրդական ու չերքեզական դպրոցներ ու թերթեր հիմնելու փորձերը, իսկ ազգային կրոնական փոքրամասնությունների՝ հունական, հայկական, հրեական դպրոցների սահմանափակ գոյությունը կամ թերթերի հրապարակումը թույլ տալով միայն Ստամբուլում, ինչը փաստելու էին նաև ավանդաբար պանթյուրքիզմի նկատմամբ ծայրահեղ անհաշտ, բայց թուրքիզմի նկատմամբ «ներդամիտ» խորհրդային ու ռուսաստանյան թուրքագետները<sup>26</sup>:

«Թյուրքականության հիմունքներում» Ջիյա Գյոքալփը հիշում է, թե ինչպես Սալոնիկում հրատարակվող «Գենչ Քալեմլեր» հանդեսի խմբագիր Ալի Ջանիփ բեյի<sup>27</sup> հետ մի գրույցի ընթացքում տեղեկանում է, որ վերոհիշյալ հանդեսը փորձում է լեզվի ասպարեզում հեղաշրջում կատարել, և այդ պայքարը ղեկավարում է Օմեր Սեյֆեդդինը<sup>28</sup>: Վերջինիս պրպտումները համահունչ էին

պես նաև Ю. Петросян, նշվ. աշխ., էջ 275:

<sup>26</sup> Տե՛ս Դ. Երեմեև, Թուրքերի ծագումը, Եր., 1975, էջ 284: Հատկանշական է, որ Թուրքիայի Հանարապետության առաջին տարում (1923 թ.) Ստամբուլում եղել է 47 հայկական դպրոց, իսկ 2009–2010 ուստարում՝ 16: Ստամբուլահայ համայնքի կրթական ու լեզվական խնդիրների մասին մանրամասն տե՛ս Ռ. Մեքրոկյան, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Եր., 2010, էջ 39–48:

<sup>27</sup> Yöntem, Ali Canip (1887–1967) – բանաստեղծ, գրականության պատմաբան: Տե՛ս Seyit Kemal Karaalioglu, Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü, Genişletilmiş ikinci basım, İnkılâp ve Aka, Yelken basımevi, İstanbul, 1982, s. 630, Modern Türkiye’de Siyasî Düşünce. Cilt 4. Milliyetçilik. İletişim Yayınları 848, İstanbul, 2002, s. 251, 330, 811.

<sup>28</sup> Ömer Seyfeddin, (1884–1920) – ճանաչված թուրք գրող և քննադատ: Տե՛ս u Yaşar Nabi, Ömer Seyfettin, Hayatı, Sanatı, Eseri, İstanbul, 1955, Cemil Yener, Ömer Seyfettin’in Öykücülüğüne Toplu Bir Bakış, Türk Dili, Aylık Dil ve Yazın Dergisi, Türk Öykücülüğü Özel Sayısı, Sayı 286, Temmuz, 1975, ss. 44–53, Seyit Kemal Karaalioglu, Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü, s. 420, А. Алькаева, Очерки по истории турецкой литературы, 1908–1939, Москва, 1959. Հատկանշական է, որ Լեյլա Ալկանայի կարծիքով Զիյա Գյոքալփի մշակութաբանական ու լեզվաբանական ծրագրերի քննադատությանն է ուղղված հենց Օմեր Սեյֆեդդինի «Գիտելիքների օջախներ» նովելաշարի երգիծանքը: Ըստ Լ. Ալկանայի «Իր բազմաթիվ տեսական աշխատանքներում Գյոքալփը փորձում էր ապացուցել, որ ազգը հավերժ գոյություն ունեցող միասնականություն է: Նրա գլխա-

իր՝ Ջիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքներին<sup>29</sup>:

Հետագայում «Լեզվական հեղափոխություն» (“Dil Devrimi”) անունը ստացած ու Մուստաֆա Քեմալի և քեմալականների կողմից իրագործված հիրավի արմատական բարեփոխումների տեսական հիմքերը մշակող թյուրքականության գաղափարախոսը հատուկ ընդգծում էր, որ օսմաներենում շատ փոքր էր թուրքերենի ու թուրքական մշակույթի բաժինը և օսմաներենը որակում էր որպես իրենց «քաղաքակրթության լեզու»<sup>30</sup>, որն իրականում միանգամայն խորթ էր հասարակ թուրք ժողովրդին: Անտարակույս, լեզվական բարեփոխումները ժամանակի հրամայական պահանջն էին, սակայն ինչպես գրել է խորհրդային շրջանում զգալի հեղինակություն վայելող ադրբեջանցի հետազոտող Էսմիրալդա Հասանովան, «իրենց ընդհանուր բնույթով առաջադիմական միջոցառումները հաճախ օգտագործվում էին բուրժուական մտավորականության հետադիմականորեն տրամադրված ներկայացուցիչների կողմից պանթյուրքական նպատակներով: Թյուրքական լեզուների ազգակցության հիման վրա Թուրքիայի հովանուներքո թյուրքալեզու ժողովուրդների բռնի միավորման պանթյուրքիստական գաղափարը հիմնավորելու փորձեր էին արվում: Նոր գիտաբառեր ստեղծելուն ուղղված միջոցառումները երբեմն ուղղորդվում էին դեպի նեղ ազգայնամոլության հունը: Այսպես Ջիյա Գյոքալփը... պնդում էր, որ նոր գիտաբառերի ստեղծումը թուրքե-

վոր հատկանիշը սերնդեսերունդ փոխանցվող արտապատմական գիտակցությունն է, որն արտահայտվում է արյան, հավատի, մշակույթի, լեզվի միասնության մեջ: Այդ գիտակցությունը,– պնդում է պանթյուրքիստ փիլիսոփան,– կարող է գոյություն ունենալ նաև չարթնացված, նիբիռո վիճակում, ինչպես, օրինակ՝ այն ժողովուրդների մոտ, որոնք կոչված են բնակեցնելու ապագա «Թուրքական պետությունը», իսկ այդպիսիք էր նա համարում Թուրքեստանի, Պովովիեի, Կովկասի, Ղրիմի և Ալթայի ժողովուրդներին: Անհրաժեշտ է նրանց ներշնչել այդ գիտակցությունը: Ներշնչման միջոցների համակարգում պանթյուրքիզմի գաղափարախոսն ամենամեծ դերը հատկացնում էր լեզվին: Այստեղից էլ գալիս էր ձգտումը (ինչպես և օսմանիստների մոտ) վերափոխել լեզուն, ստեղծելու միասնական «համաթյուրքական լեզու»՝ հին թյուրքական լեզուների և բարբառների հիմքի վրա»: Л. Альяева, Сюжеты и герои в турецком романе (Конец IX– начало XX века), Москва, 1966, с. 125 Ընդհանուր առմամբ համաձայնելով Լ. Ալկանայի՝ Ջիյա Գյոքալփին և պանթյուրքիզմին տված գնահատականներին՝ միաժամանակ հարկ է ճշգրտել, որ գյոքալփյան լեզվաբանական հայեցակարգը ենթադրում էր որպես «համաթյուրքական լեզու» պարտադրել կոնկրետ Ստամբուլի խոսակցական թուրքերենը, որը տվյալ ժամանակաշրջանում, հիրավի, գրական լեզվի կարգավիճակ չէր ստացել անգամ «բուն» Թուրքիայում:

<sup>29</sup> Տե՛ս Ziya Gökalp, Türkçülüğün Esasları, Dördüncü basılış, Varlık Yayınevi, sayı: 825, İstanbul, 1961, s. 10 (այսուհետև՝ “Türkçülüğün Esasları”):

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

րի հասարակական գիտակցության՝ ազգայնականության ուղղությամբ զարգացման հետ է կապված»<sup>31</sup>:

Զիյա Գյոքալփը «Թյուրքականության հիմունքները» աշխատության մեջ փորձել է տասնմեկ կետում սեղմ ամփոփել իր լեզվաբանական սկզբունքները<sup>32</sup>: Թուրքերենի պատմության ժամանակակից մասնագետներն իրենց աշխատություններում ու դասախոսություններում իրավացիորեն ներկայացնում են լեզվաբանության ոլորտում գյոքալփյան վերոհիշյալ սկզբունքներից միայն 9–ը<sup>33</sup>, այն էլ՝ գիտականորեն խմբագրված ձևով, քանզի «Թյուրքականության հիմունքների» բնագրում առկա 10–րդ կետն ընդամենը հայտարարում է բառերի՝ նշաններ հանդիսանալու մասին ցանկացած ուսանող–լեզվաբանին հայտնի իրողությունը, իսկ 9–րդ կետում պարզապես առաջարկվում է «թյուրքական քաղաքակրթության» պատմության մասին երկեր գրելիս «հին թյուրքական հաստատությունները» բնորոշող բառապաշարը միայն որպես գիտաբառեր օգտագործել նոր թուրքերենում՝ դա չհամարելով մեռյալ ձևերի վերակենդանացում<sup>34</sup>: Այսուհանդերձ ակնհայտ է, որ վերոհիշյալ երկու կետերն էլ ուշագրավ տեղեկատվություն են պարունակում թե՛ գյոքալփյան հրապարակախոսության մոդուսի և թե՛ ժամանակին թուրք մտավորականության շրջանում ծավալված բանավեճերի մասին որոշակի պատկերացում կազմելու տեսանկյունից: Ստորև շարադրենք լեզվաբանության ոլորտում գյոքալփյան սկզբունքներն ամփոփող մյուս ինը կետերը. ա) Օսմաներենից վճռականորեն հրաժարվելով և ազգային լեզվի ձևավորման համար նույնությամբ ընդունելով ժողովրդական գրականության համար հիմք ծառայող թուրքերենը՝ գրել այնպես, ինչպես խոսում են Ստամբուլի բնակիչները, հատկապես ստամբուլցի կանայք: բ) Չգործածել այն արաբերեն ու պարսկերեն բառերը, որոնց թուրքական կրկնօրինակները կան ժողովրդախոսակցական լեզվում, սակայն պահպանել այն արաբերեն ու պարսկերեն բառերը, որոնց համարժեքները չկան թուրքերենում: գ) Թուրքերեն համարել արաբերեն ու պարսկերեն բառերի ժողովրդական լեզվում «աղավաղված» ձևերը ու դրանց ուղղագրությունը համապատասխանեցնել նոր (թուրքական) ար–

<sup>31</sup> Տե՛ս «Թյուրք Յուրդու», հատրք I – II, 1911–1912, էջ 258–261, Յ. Գասանովա, *Идеология буржуазного национализма в Турции*, Баку, 1966, с. 94:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 94–95:

<sup>33</sup> Մասնավորապես տե՛ս և հիմն. А. Кононов, *Очерки истории изучения турецкого языка*, էջ 68–69:

<sup>34</sup> Տե՛ս “Türkçülüğün Esasları”, էջ 95:

տասանությամբ: դ) Չաշխատել վերակենդանացնել հին թյուրքերենի «բրածո» բառերը, եթե դրանց փոխարինել են նորերը: ե) Նոր գիտաբառեր որոնելիս նախ դիմել ժողովրդական լեզվի բառապաշարին, ապա օգտագործել թյուրքերենի ածանցները, և բացառապես նման հնարավորություն չլինելու դեպքում դիմել օտար լեզուներից փոխառություններին: գ) Վերացնել արաբերենի ու պարսկերենի «կապիտուլացիաները», թյուրքերենում չկիրառել այդ լեզուների թեքման ու կապակցման ձևերը: է) Բոլոր այն բառերը, որոնք գիտի ու գործածում է թյուրք ժողովուրդը, թյուրքերեն են, ժողովրդին հոգեհարազատ, և ոչ արհեստածին յուրաքանչյուր բառ ազգային է: ը) Նոր թյուրքերենի հիմքում դրվում են «Ստամբուլի թյուրքերենի» հնչյունաբանությունը, ձևաբանությունը ու լեքսիկան, ուստի այլ «թյուրքական բարբառ-խոսվածքներից» (իմա՝ ոչ միայն այսպես կոչված «անատոլիական» կամ «բալկանյան» թյուրքերենի բարբառներից, այլ նաև ուրիշ թյուրքական լեզուներից) բառեր կամ քերականական ձևեր հնարավոր չէ փոխառնել (միաժամանակ կարևորվում է դրանց խոր «համեմատական» ուսումնասիրությունը): թ) Վերոհիշյալ սկզբունքներով պետք է կազմել նոր թյուրքերենի բառարանն ու «քերականությունը» և այս գրքերում նոր թյուրքերեն մտած արաբապարսկական փոխառությունների կազմության մասին տեղեկատվությունը ներկայացնել ոչ թե լեզվի «բնախոսության» բաժնում, այլ «հնէաբանության ու ծագումնաբանության» հավելվածում<sup>35</sup>:

\* \* \*

Արձանագրելով, որ «թյուրքական» միասնական լեզու և գրականություն չձևավորելու պատճառը (թյուրքալեզու) երկրների և

<sup>35</sup> Տե՛ս «Türkçülüğün Esasları», էջ 94-96: Գյոքալփի երազած «թրքությունը» (Türklük) ենթադրում էր «միասնական խիղճ» (իմա՝ ոգեղեն միասնականություն, հավաքական ինքնագիտակցություն), կրոն, հայրենիք և ամենակարևորը՝ լեզու: Այս գաղափարն արտացոլված է նաև հեղինակի «Լեզու» (“Lisan”) ծրագրային հայտնի բանաստեղծության մեջ. «Գեղեցիկ լեզուն մեզ համար թյուրքերենն է, / Ուրիշ լեզուն մեզ համար [խավար] գիշեր է / Մտամբուլյան խոսվածքը / Ամենապարզը, ամենանրբագեղն է մեզ համար... Մի՛ խոնարհվիր արաբերենի առջև, / Իրան էլ ամենևին մի՛ գնա, / Թեջվիդը (արաբ.՝ Ղուրանի ընթերցանության կանոնները, նաև՝ ճիշտ (անթերի) խոսք-Ա. Ս.) սովորի՛ր ժողովրդից, / Նրբագեղ-բաձրառճ խոսողներին մի՛ լսիր .... Թուրանն ունի մեկ ժողովուրդ / Եվ ունի մեկ լեզու, / «Ուրիշ լեզու կա» ասողն / Ուրիշ մի նպատակ ունի .... Թրքությունն ունի մեկ խիղճ, / Մեկ հավատ, մեկ հայրենիք, / Մակայն բոլորը կգատվեն-կմեկուսանան, / Եթե չլինի լեզուն միասնական»: Ziya Gökalp, Hayatı – Sanatı – Eseri (Hazırlayan: Ali Nüzhet Göksel), Beşinci Basılış, Varlık Yayınevi, İstanbul, 1968, s. 108-109.

տարածքների անջրպետվածությունն էր՝ Գյոքալիը առնվազն մինչև Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության ջախջախումը, և «Թյուրքականության հիմունքների» տեքստի կոնկրետ վերլուծությունից ելնելով՝ նույնիսկ դրանից հետո էլ հնարավոր էր համարում թուրքերենի ստամբուլյան խոսվածքի ու նրա հենքի վրա ձևավորված գրականության ընդունումը բոլոր «թուրքերի» (իմա՝ թյուրքական ժողովուրդների) կողմից՝ որպես միասնական մշակույթի ձևավորման գործոն՝ հենց սա դիտարկելով որպես թյուրքականության կարևորագույն սկզբունք<sup>36</sup>: Նախկինում, ըստ Գյոքալիի, քոչվոր ցեղերի մշտական տեղաշարժը ու տարբեր ցեղերի հաճախակի շփումն է նպաստել լեզվամշակութային մերձեցմանը, սակայն XX դ. սկզբին թուրքերին այլևս չէր սպառնում լեզվական խզումը, որովհետև անընդհատ ավելի լայն տարածում էին ստանում երկաթուղիները, փոստը, հեռագիրն ու հեռախոսը: Միաժամանակ Գյոքալիը բազմիցս ընդգծում էր, որ թուրքերի լեզվական մերձեցումն ուներ երեք թշնամի, որոնցից առաջինը ազգային յուրաքանչյուր դրսևորման թշնամի հանդիսացող սոցիալիզմն էր. «Հյուսիսային թուրքերի» (իմա՝ «Կազանի» թաթարների – Ա. Ս.) շրջանում հենց սոցիալիզմի գաղափարի տարածումն է խթան հանդիսացել նրանց «տարածքային–տեղական» գրականության ձևավորման համար, մինչդեռ ցանկացած լեզու ունի ժողովրդական խոսվածքներ, և թուրքերի ազգային միասնականությանը հույժ վտանգ է սպառնում տարածքային խոսվածքների (բարբառների) վերածումը գրական լեզվի և դրանց հենքի վրա տարբեր գրականությունների ստեղծումը<sup>37</sup>: Գյոքալիը հետևողականորեն հանդես էր գալիս մասնավորապես թաթարական ուրույն մշակույթի դեմ՝ այն պարզապես համարելով զատման–առանձնացման–մեկուսացման դրսևորում ու «թաթար» անվանումն իսկ արհեստածին էր համարում Պոլվոլժիեյի թաթարների համար՝ սկզբունքորեն նախընտրելով նրանց անվանել «հյուսիսային թուրքեր» (“Şimal Türkleri”): Այսուհանդերձ «մեծահոգաբար» հնարավոր համարելով պատմական իրադարձությունների նաև այնպիսի հաջորդականությունը, ըստ որի թաթարները, ուզբեկները, կիրգիզները (ղազախները) կարող են ձևավորել առանձին, ուրույն մշակույթ ու կայանալ որպես առանձին ազգեր՝ կոչվելով միայն սեփական անվամբ՝ Գյոքալիը կարևորում էր «այս հին ազգականներին»

<sup>36</sup> Sté u Ziya Gökalp, Türkleşmek, İslamlaşmak, Muâsırlaşmak, İstanbul, 2004, էջ 88–90:

<sup>37</sup> Р. Мухамметдинов, Зарождение и эволюция тюркизма, Казань, 1966, с. 152.



որպես էթնիկ-ցեղային հանրություն-ամբողջականություն միավորող անվանումը, և ըստ «պանթուրքիզմի մեծ տեսաբանի»<sup>38</sup> «Ահա այդ ընդհանուր անվանումը «Թուրան» բառն է»<sup>39</sup>:

Համաձայն «Թյուրքականության հիմունքների» հեղինակի պնդման՝ թուրքերի մյուս թշնամին ռուսական կառավարության միջոցառումներն էին՝ ուղղված «թուրքերի» (թյուրքական ժողովուրդների) կրթական-մշակութային կապերն արգելելուն: Ըստ Գյոքալփի՝ Ռուսաստանում չարակամորեն տարածվում էր այն գաղափարը, որ յուրաքանչյուր տարածաշրջանում տեղական բնակչության՝ գյոքալփյան եզրաբանությամբ՝ բարբառը պետք է դառնա կրթության լեզու, ինչի նպատակը «միասնական թուրք ազգը» առանձին ժողովուրդների տարանջատելն էր, քանզի ազգի ոչնչացման համար պետք է նրա լեզուն մասնատել մի քանի առանձին լեզուների: Ռուսաստանյան «թուրքերի» (թյուրքերի) շրջանում առկա երկու ուղղություններից առաջինը փորձում էր զարգացնել-մշակել ժողովրդական խոսվածքները, որոնց հիման վրա ի հայտ էին գալիս տարբեր գրականություններ, իսկ երկրորդը ձգտում էր որպես ազգային լեզու ընդունել (Օսմանյան կայսրության) թուրքերենը. Գյոքալփն անշուշտ տարիներ շարունակ աներկբա պաշտպանում էր երկրորդ ուղղությունը՝ երազելով բոլոր «թուրքերին» (այսինքն՝ թյուրքալեզու ժողովուրդներին) որպես ազգային ու գրական լեզու պարտադրել Ստամբուլում խոսվող թուրքերենը, ինչը հիմնավորվում էր արհեստականորեն համընդհանուր թուրքերենի ստեղծման անհնարինությամբ (բոլոր գրական և ազգային լեզուները ստեղծվել են որևէ մեկ բարբառի հենքի վրա), ինչպես նաև Ստամբուլի՝ տվյալ ժամանակաշրջանում դեռևս միակ ինքնիշխան թյուրքական պետության՝ Օսմանյան կայսրության մայրաքաղաքը, իսկ մինչև քեմալականների կողմից խալիֆաթի վերացումը՝ նաև նրա կենտրոնը հանդիսանալու փաստարկով: Կարծում ենք, նույնիսկ Գյոքալփի նկատմամբ

<sup>38</sup> Բնութագրումը Լ. Ռաշնայիինն է («Pantürkizmin büyük nazariyatçısı Ziya Gökalp idi»): Տե՛ս Prof. Dr. La'şzlo' Rásonyi, Tarihte Türklük, Üçüncü Baskı, Türk Kültürünü Araştırma Enstitüsü Yayınları: 126, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1993, էջ 258: Գյոքալփի ու նրա հետևորդների նկատմամբ անթաքույց համակրանքով տոգորված հունգարացի այս արևելագետը, վերլուծելով գյոքալփյան «Թուրանի» ըմբռումը և, ըստ ամենայնի, այն համարելով «չափավոր», հատուկ ընդգծում է, որ ի տարբերություն հունգարական «թուրանականների», ում «չափազանցված» ընկալմամբ ֆինների, հունգարների, մոնղոլների և այլ ժողովուրդների ամբողջականության իմաստն է արտահայտում «Թուրանը», գյոքալփյանը վերաբերում է միայն «թուրքերին» (թյուրքերին): Տե՛ս նույն տեղում, էջ 259:

<sup>39</sup> Տե՛ս «Türkçülüğün Esasları», էջ 19:

անթաքույց համակրանք տաժող հետազոտողները անկարող են չարձանագրել հասարակության և ազգի կյանքում լեզվի դերի գյոքավիյան բացահայտ «Ֆետիշացումը» և որպես մի ինչ-որ ինքնաբավ ուժի մասին պատկերացումը, XX դարի սկզբին անգամ բուն Ստամբուլում դեռևս հիմնավորապես գրական լեզվի կարգավիճակ չստացած ստամբուլյան բարբառի պարտադրումը թյուրքալեզու մյուս ժողովուրդներին, թյուրքականության գաղափարախոսի դատողությունների սխեմատիզմը, թյուրքական տարբեր ժողովուրդների և նրանց լեզուների զարգացումը պայմանավորող պատմական կոնկրետ գործոնների միտումնավոր անտեսումը<sup>40</sup>:

Հարկ է նշել, որ առնվազն մինչև XIX դարի երկրորդ կեսը «թաթարերեն» (татарский язык), «թյուրքերեն» (тюркский язык) ու «թուրքերեն» (турецкий язык) անվանումներն օգտագործվել են զուգահեռաբար<sup>41</sup> Ռուսաստանի կայսրության բազմաթիվ թյուրքական ժողովուրդների լեզուների համար, իսկ XIX դարի վերջից «թաթարներ» անվանումը պահպանվեց որպես Ոսկե Հորդայի փլուզման արդյունքում ստեղծված նախկին խանությունների տարածքի թյուրքալեզու բնակչության անվանում, հետագայում, ի տարբերություն Ղրիմի թաթարների լեզվի («крымско-татарский язык»), կազանյան, աստրախանյան ու սիբիրյան թաթարների լեզուն սկսեց պարզապես կոչվել «թաթարերեն», թեև մինչև XIX դարի վերջը թաթար գրողներն ու գիտնականները իրենց կոչում էին «բուլղ(գ)արներ»՝ իրենց անվանն ավելացնելով «Բուլգարի» մականունը: Խոսակցական թաթարերենը, ըստ Ն. Ա. Բասկակովի, «ձևավորվել է բուլղարական ու դիչչադյան ցեղային լեզուների

<sup>40</sup> St' u P. Мухамметдинов, նշվ. աշխ., էջ 154, Л. Салахнева, Эволюция концепции тюркизма Зии Гекальпа, Современные проблемы и перспективы развития исламоведения, востоковедения и тюркологии, Нижний Новгород, 2007, с. 188–190. Հատկանշական է, որ դեռևս Մահմուդ Կաշգարիի «Դիվանում» ընդգծվում է, որ կիրգիզները, դիչչաղները, օդուզները, բաշկուրսուները և թյուրքական այլ ցեղեր խոսում են թյուրքերեն, բայց ունեն իրենց բարբառները (տե՛ս u Mahmud Kasgarlı, Divanı Lüğat-it-Türk, Çeviren B. Atalay, С. 1, Ankara, 1939, s. 29–30): Ս. Գ. Կլյաշտորնին նշում է, որ Մահմուդ Կաշգարիի հակադրում է «Խականիյա» կոչված պետական լեզուն այլ ցեղային լեզուների: St' u С. Кляшторный, Эпоха Махмуда Кашгарского, “Советская тюркология”, 1972, № 1, с. 18–23, ինչպես նաև В. У. Махпиров, Имена далеких предков (Источники формирования и особенности функционирования древнетюркской ономастики), Алматы, 1977, с. 85:

<sup>41</sup> Մանրամասն տե՛ս u Г. Благова, Варинатные заимствования турок–тюрк и их лексическое обособление в русском языке (К становлению обобщающего имени тюркоязычных народов),– «Тюркологический сборник», Москва, 1973, с. 93–140:

փոխազդեցության արդյունքում» և հետագայում զարգացել Ոսկե Հորդայի դարաշրջանում<sup>42</sup>, իսկ Կազանի խանության ժամանակաշրջանում (XV–XVII դդ.) այն արդեն վերջնականապես ձևավորվել էր որպես ժողովրդախոսակցական լեզու՝ տարբեր տարածքային դրսևորումներով: XIX դարում սկսում է ձևավորվել ազգային–գրական թաթարերենը, այս շրջանում թաթար լուսավորիչները ձգտում էին գրական լեզուն մոտեցնել խոսակցականին, ի հայտ են գալիս «մերձվոլգյան թաթարերենի» քերականությունները: Ժամանակակից գրական թաթարերենի հիմնադիրներից է գրող, ֆոլկլորիստ, լեզվաբան ու մանկավարժ Կայում (Գաբդելկայում) Նասիրին: Թաթարերենն իսկապես նախ դասավանդվել է ռուսական ուսումնական հաստատություններում: Սանկտ–Պետերբուրգում է հրատարակվել Իոսիֆ Գիգանովի թաթարերենի քերականությունը: XIX դարում տպագրվում են Ի. Խալֆինի, Ա. Կազեմբեկի, Մ. Իվանովի, Գ. Մախմուտովի աշխատությունները: 1887 թ. հրատարակվում է Գ. Ֆեիզխանովի համառոտ ձևաբանությունը (թաթարերեն): Առաջին ռուսական հեղափոխությունից հետո թաթարերենն ազատորեն դասավանդվում էր թաթարական դպրոցներում, տասնյակ դասագրքեր ու բառարաններ էին ստեղծվում ռուս, ֆրանսիացի, արաբ գիտնականների աշխատությունների ազդեցությամբ: 1919 թ. Ջամալ Վալիդին արդեն ստեղծել էր թաթարերենի առաջին բուհական դասագիրքը<sup>43</sup>:

«Թյուրքականության հիմունքներում» հեղինակը գրում է, որ «հյուսիսային թուրքերից (ինա՝ թաթարներից – Ա. Ս.) մի խումբ երիտասարդների»՝ թաթարերենի և թաթարական մշակույթի ստեղծման ջանքերը կհանգեն նրան, որ թուրքերն ու թաթարները կհամարվեն տարբեր ազգեր: Կիրգիզների և ուզբեկների՝ ինքնուրույն լեզու ու գրականություն, առանձին մշակույթ ձևավորելու ուղղությամբ գնալու դեպքում «թուրք ազգի սահմանն էլ ավելի կենդանա»<sup>44</sup>: Զիյա Գյոքալիին ավելի դժվար էր թվում յակուտ–

<sup>42</sup> Н. Баскаков, Тюрские языки, Москва, 1960, с. 160.

<sup>43</sup> Sté u M. Закиев, Татарский язык, Языки народов СССР, т. II (Тюрские языки), Москва, 1966, с. 139–141, 153–154, նաև՝ М. Закиев, Казанская школа тюркологов и грамматики на татарском языке (конец XIX и начало XX в.), – TURCOLOGICA (К семидесятилетию академика А. Н. Кононова), Ленинград, 1976, с. 73–79, տե՛ս և հիմնտ. նաև՝ La szlo' Ra' sonyi, Tarihte Türklük, s. 276–279:

<sup>44</sup> Sté u “Türkçülügün Esasları”, էջ 17: Հունգարացի թուրքամետ արևելագետ պրոֆ. Լ. Ռաշնային նույնպես ակնհայտ ավստասնքով է արձանագրում, որ 1905 թ–ից (այսինքն՝ առաջին ռուսական հեղափոխությունից) հետո Ռուսաստանում ապրող «թուրքերի» (թյուրքալեզու ժողովուրդների) հոգևոր–մշակութային ասպարեզում առաջնորդումը «անցավ Կազանցիների ձեռքը»,

ներին և «Ալթայի թուրքերին» (Հեռավոր Արևելքի թուրքալեզու ժողովուրդներին ու ցեղերին) «Թուրքիայի թուրքերի» մշակույթի շրջանակում ընդգրկելու խնդիրը «նրանց ավելի հեռու գտնվելու պատճառով»<sup>45</sup>: Թեև պանթուրքիզմի գաղափարախոսն ազգը բնորոշում էր որպես լեզվական, կրոնական, բարոյական ու գեղագիտական ընդհանրությամբ, այսինքն՝ միևնույն դաստիարակությունը ստացած անհատների համախմբում՝ գրելով, որ մարդը արյունակիցների հետ ապրելուց գերադասում է ապրել իր լեզվով խոսող և իր կրոնը դավանող մարդկանց հետ, «քանզի մեր մարդկային անհատականությունը ոչ թե մարմնականի, այլ հոգեկանի մեջ է»<sup>46</sup>, սակայն հետևողականորեն շրջանցում էր մասնավորապես չուվաշների, յակուտների, գագաուզների՝ նախկին Ռուսաստանի կայսրության ուղղափառ քրիստոնյա թուրքալեզու ժողովուրդների հետ ռուսների ունեցած կրոնական ու բազմադարյան մշակութային ընդհանրությունների փաստը<sup>47</sup>, կիրգիզների (ղազախների), կարակալպակների, ուզբեկների, թուրքմենների ծագումնաբանության ու լեզվամշակութային առանձնահատկությունների թեման<sup>48</sup>, արհամարհում արդեն 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին ղազախերեն («ղիչաղերեն») գրքերի ու պարբերականների հրատարակության փաստը, անտեսում թուրքմենական գրականության դասական Մահթումկուլի-Ֆրագիի (18-րդ դար)<sup>49</sup>, ղազախ մեծ լուսավորիչներ Չոքան Վալիխա-

նրտեղ տեղական բարբառը զարգացավ որպես գրական լեզու: Միաժամանակ նա ստիպված էր փաստել, որ արաբական տառերի օգտագործումն էր տևականորեն սքողում «թուրքական բարբառների» (իրականում՝ թուրքական տարբեր լեզուների) միջև առկա տարբերությունը: St' u Prof. Dr. La szlô Ra sonyi, Tarihte Türklük, s. 276:

<sup>45</sup> St' u “Türkçülügün Esasları”, էջ 17–18:

<sup>46</sup> St' u “Türkçülügün Esasları”, էջ 16:

<sup>47</sup> St' u և հմմտ. “Türkçülügün Esasları”, էջ 13–18:

<sup>48</sup> Հին թուրքերի էթնոմշակութային պատմության փուլերի, Türk, Uyğur, Qyrğyz, Qyrçaq, Qarluq, Başkırt, Tatar և մի շարք այլ թուրքական էթնոխմբիների մասին հսկայածավալ գրականությունից մասնավորապես տե՛ս և B. Бартольд, Сочинения в 9 томах, Том V, Москва–Ленинград, с. 560, А. Кононов, Опыт анализа термина “тюрк”, СЭ, 1949, № 1, с. 40–47, նույնը՝ Родословная Туркмен, Сочинения Абул-Гази, Хана Хивинского, Москва–Ленинград, 1958, с. 84, В. Махпиров, Имена далеких предков, с. 25–64, 93–106, տե՛ս նաև գրականության ցանկը, նույն տեղում, էջ 279–299:

<sup>49</sup> Աշխարհահռչակ թուրքագետ Վ. Բարտոլդը հետևողականորեն պնդում էր, որ «սեփական ազգային բանաստեղծ ունեցող միակ թուրքական ժողովուրդը թուրքմեններն են», և այդ բանաստեղծը Մահթումկուլի է: St' u B. Бартольд. Из истории тюрков. Петроград, 1917, с.12–13; Сочинения, том V (Работы по истории и филологии тюркских и монгольских народов), Москва, с. 187, 227, 465, 574: St' u և հմմտ. նաև Annagurban Aşyrow, Magtumlunyň

նովի (1835–1865), Իբրայ Ալթինսարինի (1841–1889), Աբայ Կունանբակի (1845–1904), ուզբեկական գրականության դասական Համգա Հաքիմ–գադեի (1889–1919) և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների այլ ականավոր գրողների ու դեմոկրատ մտավորականների ազգանվեր ու բացառիկ արգասաբեր գործունեությունը<sup>50</sup>: Այսօր Գյոքալփի ապրած ժամանակաշրջանից շուրջ հարյուր տարի անց, դազախերենը, ուզբեկերենը, կիրգիզերենը (ղրղզերենը), թուրքմեներենը արդեն առնվազն երկու տասնամյակ է, ինչ ոչ միայն դե յուրե, այլև դե ֆակտո ինքնիշխան երկրների սահմանադրությամբ ամրագրված պետական լեզուներ են, և նրանց՝ բարբառ թե լեզու որակելու հարցադրումն իսկ, անշուշտ, անհեթեթ կամ վիրավորական է հնչում նույնիսկ այն դազախ, ուզբեկ, կիրգիզ (ղրղզ), թուրքմեն մտավորականների համար, ովքեր առանձնահատուկ համակրանք են տաժում դեպի Թուրքիան և ակտիվորեն հանդես գալիս համաթյուրքական մշակութային արժեքների վերհանման ջատագովությամբ... Մասնավորապես լեզվի պատմության դազախ մասնագետների տարակարծությունը գեթ այն հարցում է, թե արդյոք դազախերեն գրական լեզուն ձևավորվել է նրա գրավոր ձևի կայացումից շատ ավելի վաղ՝ դազախ ժիրաունների և աքընների հարուստ բանավոր–բանաստեղծական ստեղծագործության հիմքի վրա (Ե. Ժուբանով, Ա. Իբաթով), թե գոյություն ունեցող գրական լեզուն ստացել է իր զարգացման գրական ձևը, կայացել հիրավի ժողովրդական հենքի վրա մեծ բանաստեղծ ու մտածող Աբայի ստեղծագոր-

Golýazmalarynyň Derňewi, Aşgabat, Türkmen döwlet neşirýat gullugy, 2014, ինչպես նաև՝ Աննակուրբան Աշիրովի վերջաբանը, Մահթունկուլի Ֆրագի, Հատընտիք (կազմ. և խմբ.՝ Վ. Խաստուր և Ա. Սաֆարյան), Եր., 2014, էջ 164–177:

<sup>50</sup> Մասնավորապես տե՛ս Н. Баскаков, Введение в изучение тюрских языков, Москва, «Высшая школа», 1962, с., 227–267, Ж. Сыздыкова, Особенности цивилизационного фактора и роль исторического наследия в Центрально-Азиатском регионе, Meuerian, т. 2 (Сборник статей , посвященный 70-летию М. С. Мейера, ИСАА при МГУ им. М. В. Ломоносова, Академия гуманитарных исследований), Москва, 2006, с. 199–221: Կարծում ենք, հիշարժան է Ղազախստանի հռչակավոր ազգայնական բանաստեղծ Մադժան Ժումաբակի (1893–1938)՝ յուրաքանչյուր դազախ մտավորականին քաջածանոթ «Қазақтың тілі» բանաստեղծությունը, որն ակնհայտորեն վկայում է, որ դազախերենը ալթայյան թյուրքերի փառքը ոգեկոչող հեղինակի համար էլ լեզու էր (тіл), այլ ոչ թե «բարբառ» կամ «խոսվածք»: Մադժան Ժումաբակի մասին տե՛ս Мурат Султанбеков, Поэтическое вдохновение: Абай, Шакарим и Мухтар. Книга о трех классиках, Семипалатинск, 2007, с. 307–308, Б. Канапьянов, Великий поэт мировой культуры (Макжан Жумабаев), Весы (Этюды, очерки, статьи), Алматы, «Жибек Жолы», 2008, с. 152–161.

ծության բարեբեր ազդեցությամբ (Ռ. Գ. Սըզդըլկ և ուրիշներ)<sup>51</sup>: Այսպիսով՝ թուրքերենի և դազախերենի (ինչպես նաև այլ թյուրքական լեզուների)՝ առնվազն 20-րդ դարի սկզբին արդեն միանգամայն տարբեր գրական լեզուներ, այլ ոչ թե «բարբառներ» կամ «խոսվածքներ» հանդիսանալը ժամանակակից դազախ (ինչպես նաև Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու այլ երկրների) լեզվաբանների, գրականագետների և մշակութաբանների համար էլ նույնքան ակնհայտ իրողություն է, որքան վերոհիշյալ լեզուների ծագումնաբանական թյուրքական ընդհանրության փաստը<sup>52</sup>:

Ակնհայտ է, որ նույնիսկ «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսով երկրորդ թուրքական պետականություն հռչակվելու հավակնորդ Ադրբեջանի Հանրապետության սահմանադրության մեջ<sup>53</sup>՝ ուլտրապանթուրքիստների պնդմամբ ամրագրվելիք պետական լեզուն՝ կոմպրոմիսային ձևակերպմամբ «Ադրբեջանական թուրքերեն» իսկ իրականում վաղուց արդեն անշրջելիորեն գրականի կարգավիճակ ստացած, թեև թուրքական բառարաններում «ադրբեջանական բարբառ» (Azeri lehçesi) կոչվողն է<sup>54</sup>: Այսուհանդերձ, հարկ է փաստել, որ Թուրքիայում ամբողջ 20-րդ դարի ընթացքում շարունակվել, և ներկայումս էլ շարունակվում է «lehçe» (diyalekt – բարբառ, խոսվածք, խոսակցական լեզու) կամ «şive» (խոսվածք) եզրերի համառ կիրառությունը ոչ միայն ադրբեջաներենի, այլև թյուրքական մյուս բոլոր լեզուների համար, ինչն, իհարկե, «Թյուրքական աշխարհի» համար հատուկ ծրագ-

<sup>51</sup> А. Байтуова, Основные этапы формирования и становления литературных норм в казакском и турецком языках, «Тюрский мир: история и современность». Сборник статей международного тюркологического симпозиума, Астана, 28-29 апреля 2011г., с. 76-80.

<sup>52</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 80: Հատկանշական է, որ Ա. Բայտուովան նաև արձանագրում է, որ դազախերենի և թուրքերենի գրական նորմերը ձևավորվել ու կայացել են մոտավորապես միևնույն պատմական դարաշրջանում՝ միջին դարերում և այդ երկու լեզուներից յուրաքանչյուրի էթնոլինգվիստիկ հենքը կազմել է տոհմերի և ցեղերի որոշակի խումբ՝ կոնսոլիդացված մեկ էթնիկական հանրության մեջ՝ շնորհիվ վարչատարածքային, բնական-աշխարհագրական, մշակութային-ավանդութային ու լեզվական ընդհանրության:

<sup>53</sup> Ադրբեջանի Հանրապետության սահմանադրության 21-րդ հոդվածի (Պետական լեզուն / Dövlət dili) առաջին կետում ամրագրված է. «Azərbaycan Respublikasının dövlət dili Azərbaycan dilidir»: «Ադրբեջանի Հանրապետության պետական լեզուն ադրբեջաներենն է», իսկ լեզվի զարգացման ապահովող-երաշխավորը՝ ադրբեջանական պետականությունը: Տե՛ս [www.ajb.az/site/konstitusiyaya.pdf](http://www.ajb.az/site/konstitusiyaya.pdf):

<sup>54</sup> Kemal Demiryi, Temel Türkçe Sözlük, 3. Baskı, İnkılâp Kitabevi, İstanbul, 1994, s. 539:

րավորված լեզվամշակութային քաղաքականության ծիրում է<sup>55</sup>: Միաժամանակ Թուրքիայի հանրապետությունում պետական լեզու հռչակված թուրքերենը (Türkiye Türkçesi) «ամբողջ Թուրքական աշխարհում» (“bütün Türk dünyasında”) դասավանդելու, թյուրքալեզու պետությունների ու ժողովուրդների համար համատեղ, ընդհանուր հաղորդակցության միջոց ու միասնական «ինքնության» (“Türk üst kimliği”) հենք դարձնելու լեզվամշակութային ու քաղաքական խնդիր է դրվում<sup>56</sup>: «Համաթյուրքական» վերոհիշյալ նպատակին հասնելու համար նախկին Խորհրդային Միության փլուզումից հետո բացառիկ կարևորվում են «Թուրքական աշխարհի յուրաքանչյուր տարածաշրջանում» (“Türk dünyasının her bölgesinde”) թուրքերենի դասընթացների կազմակերպմանը նպատակաուղղված մշակութային հատուկ կենտրոնների բացումը, Թուրքիայի Հանրապետության հեռուստաընկերությունների (թուրքերեն) հաղորդումների՝ «ամբողջ Թուրքական աշխարհում» հեռարձակման հնարավորություն ստեղծելուն նպատակաուղղված միջոցառումները, թյուրքալեզու երկրների ու ժողովուրդների երիտասարդությանը Թուրքիայում կրթություն ստանալու ավելի լայն հնարավորություններ ընձեռելը, ինչպես նաև վերոհիշյալ

<sup>55</sup> Մասնավորապես տե՛ս Abdullah Battal Taymas, *Kazan Türkçesinde Atasözleri ve Deyimler. Açıklamalar–Düşünceler–Sözlük–Örnekler–Bir Ek*, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1968, 151 s., *Türk Dil Kurumu Yayınları (1932–1974)*, Ankara Üniversitesi Basımevi, 1974, 57 s., Ankara Üniversitesi, Dil ve Tarih Coğrafya Fakültesi (Öğrenci rehberi), Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1999, s. 111–133, տե՛ս և հմտ. “Lehçe” բառահոդվածը հետևյալ տեղեկատուներում *AnaBritanica (Genel Kültür Ansiklopedisi)*, Cilt 20, Ana Yayıncılık A. Ş. ve *Enciklopedia Britannica, Inc.*, İstanbul, 1994, s. 310–311, Mustafa Öner, *Bugünkü Kıpçak Türkçesi (Tatar, Kazak ve Kırgız Lehçeleri Karşılaştırmalı Grameri)*, Atatürk Kültür, Dil ve Tarih Yüksek Kurumu Türk Dil Kurumu Yayınları; 703, Ankara, 1998, s. X–XLIX, 268–270: Հիշյալ գրքի առաջաբանում հեղինակը հանդես է գալիս ուսաստանյան ու նախկին Խորհրդային Միության թյուրքալեզու հանրապետություններում ձևավորված թյուրքագիտական–լեզվաբանական դպրոցի սուր քննադատությամբ: Տե՛ս և նույն տեղում, էջ X–XIV: Հմտ., *Исследования по сравнительной грамматике тюркских языков*. Под ред. Н. Дмитриева, т. I, Москва, 1955, т. II, Москва, 1956, А. Щербак, *Сравнительная фонетика тюркских языков*, Москва–Ленинград, 1970, *Очерки по сравнительной морфологии тюркских языков*, (ИМЯ) Ленинград, 1977, Н. З. Гаджиева, *Основные пути развития синтаксической структуры тюркских языков*, Москва, 1973, (նաև նույնի հետևյալ բովանդակն ձեռնարկը. *Сравнительно–историческая грамматика тюркских языков*, Баку, 1979):

<sup>56</sup> Prof. Dr. Ahmet B. Ercilasun, *Yirmi Birinci Yüzyıla Girerken Millî Kimlik Oluşturmada Dilin Önemi, “Türk Dili”* (Dil ve Edebiya Dergisi), Ankara Üniversitesi Basım Evi, Ankara, 2000/I. Sayı: 579. Mart 2000, s. 206–207.

երկրներում թուրքական տարաբնույթ ուսումնական հաստատությունների և նրանց մասնաճյուղերի լայն ցանց հիմնելը<sup>57</sup>:

Գյոքալիը վերոհիշյալ «Թյուրքականություն և թուրանականություն» գլխում առավել հնարավոր է համարում «օղուզ-թուրքերի» (Oğuz Türkleri)՝ իր բնորոշմամբ «Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի և Խորեզմի թուրքերի» (այսինքն՝ թյուրքական լեզվաընտանիքի արևմտա-խունական ճյուղի օղուզական խմբին պատկանող ժողովուրդների) «օղուզական» կամ «թուրքմենական» մշակութային միասնականացման նպատակի կենսագործումը՝ հայտարարելով, որ տվյալ ժամանակաշրջանում քաղաքական միավորումը դեռևս անհնար է<sup>58</sup>: Գյոքալին ու նրա հետևորդները (այդ թվում նաև որոշ նորոյա ուլտրապանթուրքիստներ) փորձելու էին համառորեն «աչք փակել» նաև այն ակնհայտ իրողության վրա, որ ժամանակակից ադրբեջաներեն գրական լեզվի ձևավորման՝ իրականում անշրջելի գործընթացը նույնպես սկսվել էր դեռևս XIX դարում՝ Բաքվի և Շամախիի բարբառների հիման վրա, իսկ թյուրքական լեզուների պատմության մասնագետների (այդ թվում՝ ադրբեջանցի լեզվաբանների) ճնշող մեծամասնության կարծիքով ադրբեջաներենը ռուսաստանյան (Հոկտեմբերյան) հեղափոխության շրջանում, փաստորեն, ձևավորվել էր որպես «ազգային գրական լեզու»<sup>59</sup>:

\* \* \*

Փաստ է, որ 1906 թ. Կազանում կայացած համառուսաստանյան մուսուլմանական երրորդ համագումարում քննարկվել էր ռուսաստանյան բոլոր «թյուրք-թաթարների» համար ընդհանուր գրական լեզվի հարցը, և որոշում էր ընդունվել, որ այդպիսի լեզու պետք է դառնար «կոստանդնուպոլսյան թուրքերի» լեզուն: Համագումարում քննարկվել էր նաև թյուրքալեզու ժողովուրդների համար ընդհանուր այբուբենի հիմնահարցը<sup>60</sup>: Ակնհայտ

<sup>57</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>58</sup> Տե՛ս «Türkçülügün Esasları», 6. Baskı, s. 18:

<sup>59</sup> Տե՛ս Կ. Գադժիևա, *Азербайджанский язык, Язык народа СССР, т. II (тюркские языки)*, Москва, 1966, с. 66–67: «Թյուրքականության հիմունքներում» Զիյա Գյոքալին էլ չէր կարող չարձանագրել, որ Միրզա Ֆաթալի Ախունդովի ինքնատիպ կատակերգությունները, որոնք թարգմանվել են բոլոր եվրոպական լեզուներով, իրականում գրվել են «ադրբեջանական թուրքերենով»: Տե՛ս «Türkçülügün Esasları», s. 8:

<sup>60</sup> Տե՛ս Զարեվանդ, *Турция и пантуранизм*, Париж, 1930, с. 47–48, 96, Аршаруни А., *Габидуллин Х., Очерки панисламызма и пантюркизма в России*, Москва, 1931, с. 116, Вахидов Х., *Просветительная идеология в Туркестане*, Ташкент,



է, որ թյուրքալեզու տարբեր ժողովուրդների ներկայացուցիչները հրականում կարող էին կարգալ արաբատառ միննույն տեքստերը՝ արտաբերելով բառերը սեփական լեզվի հնչյունաբանական ու ձևաբանական առանձնահատկությունների համաձայն (արաբական գրաֆիկայի «վարագույրը» սքողում էր լեզվական տարբերությունները)<sup>61</sup>: Փաստ է նաև, որ դեռևս «թաթարական լրագրության հայր» Իսմաիլ Գասպրինսկու<sup>62</sup> Օսմանյան կայսրության «թուրքերի» հետ լեզվական ու գաղափարական միասնականության պրոպագանդայի նպատակով հրատարակած դրիմյան «Թերջիման» («Թարգման») թերթի՝ Վ. Գորդլևսկու

1979, с. 80, Демоян Г., Культурно–образовательный пантюркизм: история и современность, Востокоевдний сборник, выпуск четвертый, Москва, 2002, с. 35–36: Ջիյա Գյոքալփը նույնիսկ «Թյուրքականության հիմունքներում» հանդես էր գալիս արաբական գրերը (որպես իսլամական աշխարհի միասնականության գործոն) պահպանելու անհրաժեշտության դիրքերից: Նրա մահից մի քանի տարի հետո (1928 թ. օգոստոսին՝ թուրքական գրերը արաբատառից լատինատառի փոխելու մասին օրենքի գործողության մեջ մտցնելու օրերին) Մուստաֆա Քեմալը, խոսելով «թուրքական գրերի հեղափոխության» (“Türk Yazı İnkılabı”) մասին ու ներկայացնելով «ճշմարիտ, իսկական, իրական (hakiki) թուրքերեն բառերով», «թուրքական տառերով» իր գրառումները, կոչ արեց հանրապետական Թուրքիայի ընտրանուն ջանք չինայելու հնարավոր ամենակարճ ժամանակահատվածում նոր այբուբենը ժողովրդական ամենալայն զանգվածների սեփականությունը դարձնելու գործընթացում, շտապ սովորելու ու հայրենակցին սովորեցնելու նոր թուրքական տառերը՝ որպես ազգասիրական պարտք, ապացուցելու, որ թուրք ազգը իր գրերով ու մտածելակերպով «ամբողջ քաղաքակիրթ աշխարհի կողքին է»: Տե՛ս Ataturkün Söylev ve Demeçleri, II (1906–1938), էջ 251–253:

<sup>61</sup> Տե՛ս М. Богданова, Предисловие, История литератур народов Средней Азии и Казахстана, Издательство Московского Университета, Москва, 1960, с. 10:

<sup>62</sup> Gasprali (Gasprinsky), İsmail (1851–1914) – Ջիյա Գյոքալփի գնահատմամբ՝ պանթուրքիզմի հայրերից՝ «Ռուսաստանում երկու մեծ թյուրքյուններից» մեկը, տե՛ս “Türkçülüşün Esasları”, էջ 9–10: Թուրք գրականագետները հատուկ ընդգծում են, որ Գյոքալփի և Գասպրինսկու մոտեցումները ստամբուլյան թուրքերենը ամբողջ «թուրքական աշխարհի» լեզու դարձնելու հարցին շատ մոտ են: Տե՛ս Seyit Kemal Karaalioglu, Resimli Türk Edebiyatçılar Sözlüğü, էջ 226: Տե՛ս նաև В. Надеин –Раевский, Пантюркистская доктрина и ее неофашистские наследники, «Արևելագիտության հարցեր», Պրակ 3–4 (խմբ.՝ Ջ. Ս. Կիրակոսյան), Եր., 1987, էջ 36–37, Modern Türkiye’de Siyasal Düşünce. Cilt 4., Milliyetçilik, İstanbul, 2002, ss. 72, 219, 225, 269, 270, 271, 392, 394, 404, 488, 496, 506, 586, 588, 591, 874, Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, էջ 237–238, 241–242: Հատկանշական է, որ ներկայումս Իսմաիլ Գասպրինսկու «մշակութային» գործունեության յուրօրինակ «արդարացման» (խորհրդային շրջանում նրան՝ որպես պանթուրքիստի տրված որակումների վերանայման) ակտիվ փորձեր են կատարվում: Մասնավորապես տե՛ս և և հմմտ. С. Ф. Орешкова, Некоторые размышления о развитии тюркологии и османистики. Turgica et Ottomanica: Сборник статей в честь 70–летия М. С. Мейера, Москва 2006, с. 15–16:

ձևակերպմամբ «կիսաարհեստական, ի դեպ, օսմաներենին մոտ լեզվուն», պարզապես չէր կարող ներթափանցել «թաթարական ժողովրդական միջավայր ու տարածվում էր միայն ուսյալ դասի շրջանում»<sup>63</sup>:

Ռուսաստանի կայսրության թյուրքալեզու ժողովուրդների մտավորականության շրջանում պանթուրքիստական քարոզչությանը հակազդելու խոսուն վկայություններ են պահպանվել՝ կապված ականավոր թաթար բանաստեղծ, մանկագիր, թարգմանիչ, երգիծաբան, դեմոկրատ-հրապարակախոս Տուկայի<sup>64</sup> անվան հետ, ով հետևողականորեն հանդես էր գալիս ուրույն թաթարական մշակույթի, մայրենի թաթարերենի պաշտպանությամբ ու պանթուրքիստների համարձակ քննադատությամբ և ասում էր. «Նրանք (պանթուրքիստները – Ա. Ս.) ուզում էին մեր վզին փաթաթել թուրքերենը. ցանկանում էին թուրքացնել մեզ՝ թաթարներիս»<sup>65</sup>:

Եթե դեռևս 1906 թ. հրատարակված իր հոդվածում Տուկայը, պնդելով հանդերձ, որ «Թերջիման» թերթի՝ «ղրիմյան» (իմա՝ Ղրիմի թաթարների) լեզուն միանգամայն խորթ է իրենց (իմա՝ Կազանի թաթարներին), միաժամանակ կարող էր կոչ անել բաժանորդագրվելու ստամբուլյան թերթերին<sup>66</sup>, ապա ընդամենը

<sup>63</sup> Տե՛ս՝ В. Гордлевский, 10-летие татарской печати,–Избранные сочинения, Том IV, (Этнография, история востоковедения, рецензии), Москва, 1968, с. 180:

<sup>64</sup> Տուկայ (Թուրքա, Գարդուլլա Սուհամեդգարիֆովիչ Թուրքան, 1886–1913): Տուկայի ու նրա հակապանթուրքիստական հայացքների մասին մասնավորապես տե՛ս՝ Р. Ганиева, Сатирическое творчество Г. Тукая, Издательство Казанского университета, Казань, 1964, с. 20–27, Я. Агишев, Творчество Габдуллы Тукая, Казань, 1948, Г. Халий, Тукай и его современники, Казань, 1966, Габдулла Тукай (сборник статей), Казань, 1968.

<sup>65</sup> Տե՛ս՝ В. Гордлевский, Г. Тукай и русская литература,–Избранные сочинения, т. II, Москва, 1961, с. 524, Я. Агишев, Творчество Габдуллы Тукая, Казань, 1948, Г. Халий, Тукай и его современники, Казань, 1966, Габдулла Тукай (сборник статей), Казань, 1968.

<sup>66</sup> Г. Тукай, Отношение «Терджимана» к татарам.– Избранное в двух томах, том второй, с. 26–27. Հայտնի է, որ իր ստեղծագործական ուղու վաղ շրջանում Տուկայը փորձել է օգտագործել հին թաթարերենը և նույնիսկ (Օսմանյան կայսրության) թուրքերենը, սակայն 1905 թվականից հետո մշակել է սեփական լեզվական կոնցեպցիան՝ զեթ հազվադեպ գրելով հին թաթարերեն: Գրական լեզվի դեմոկրատացման գործընթացում Տուկայը կողմնակից էր ժողովրդախոսակցական թաթարերենի բառակազմի և ձևաբանական միջոցների ու հին թաթարերենի շարահյուսական կառուցվածքի օրգանական միահյուսմանը՝ հետևողականորեն մերժելով թե՛ օսմաներենը բոլոր թյուրքական ժողովրդների և պարտադրելու, թե՛ հին թյուրքական մոռացված բառաֆոնդը ետ բերելու փորձերը: Տե՛ս՝ М. Закиев, Тукай и татарский литературный язык, Слово о Тукае (Писатели и ученые о татарском народном поэте), Казань, 1986, с. 340–343:

մի քանի տարի անց՝ 1910 թ., տպագրված «Ժողովրդական գրականություն» գրքույկում ոչ միայն պնդում էր, որ «Թերջիմանում» չկա ոչ մի թաթարերեն բառ, չկա թաթարական ոգի, այլև սուր ծաղրի էր ենթարկում թուրքերեն գրել ու խոսել ջանացողներին, իրենց «օսմանցի» ներկայացնողներին, անսքող հպարտությամբ էր արձանագրում, որ այլևս «գրքերը և բրոշյուրները հրատարակվում են թաթարերեն: Մենք թաթարներ էինք և մնացել ենք թաթարներ: Թուրքերը Ստամբուլում են, իսկ մենք՝ այստեղ: Բարի երթ»<sup>67</sup>: Այնուհետև թաթարական գրականության դասականը հավելում էր. «Մեր ժողովրդական երգերն են հանդիսանում իրապես ազգային, ազատ ամեն կողմնակի (արաբական, թուրքական, ուզբեկական)<sup>68</sup> ազդեցությունից, այդ պատճառով եմ ես նրանց պատմական նշանակություն տալիս, սիրում դրանք...»<sup>69</sup>:

\* \* \*

Ակնհայտ է, որ արդեն Չիյա Գյոքալփի ապրած ժամանակ գիտականորեն հարկ էր խոսել (և եվրոպական արևելագիտության մեջ խոսվում էր) ոչ միայն թյուրքական ժողովուրդների լեզվական ու մշակութային, առավել ևս՝ կրոնական ընդհանրությունների, այլև ուրույն գրական լեզուների ու մշակութային ավանդույթների, կրոնական-դավանական տարբերությունների ու նաև դրանցով պայմանավորված դարավոր հակասությունների մասին: Անշուշտ, պատմական իրականությունից միանգամայն կտրված էին Գյոքալփի ու պանթուրքիզմի մյուս ջատագովների՝ թյուրքական այլ ժողովուրդներին «սեփական» գրական լեզուն պարտադրելու փորձերը, նամանավանդ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ, ինչպես իրավացիորեն նշել է ադրբեջանական հետազոտող Էսմերալդա Հասանովան, «միասնական ազգային լեզվի բացակայությունը» արգելակում էր հենց թուրք ազգի կոնսոլիդացիայի գործընթացը<sup>70</sup>:

<sup>67</sup> Г. Тукай, Избранное в двух томах, том второй, (Публицистика, критика, фельетоны, автобиографические очерки и заметки, избранные письма), Казань, 1961, с. 19–20.

<sup>68</sup> Ուզբեկ և այլ ժողովուրդների նկատմամբ հարգանք տաճող Տուկայը այստեղ ակնհայտորեն նկատի է ունեցել մեծած չաղաթայերենը, որի արհեստական կենդանացման փորձերը քննադատվել է նաև ուզբեկական դեմոկրատական մտավորականության կողմից: История литератур народов Средней Азии и Казахстана, с. 154–157.

<sup>69</sup> Г. Тукай, Избранное в двух томах, том второй, с. 19–20.

<sup>70</sup> Э. Гасанова, Идеология буржуазного национализма в Турции, с. 65.

Օսմանյան կայսրության մայրամուտի, առավել ևս հանրապետական Թուրքիայի կայացման տարիներին լեզվական բարեփոխումները հիրավի ժամանակի հրամայական պահանջն էին: Այսուհանդերձ, Ստամբուլի խոսակցական թուրքերենը և նրա հենքի վրա ձևավորվող գրականությունը՝ որպես «համաթյուրքական լեզու» և «համաթյուրքական գրականություն», բոլոր «թուրքերին» (իմա՝ թյուրքական ժողովուրդներին) պարտադրելու գյոքալիյան և այլոց պանթուրքիստական սխեմատիկ գաղափարները բացարձակապես անհրականանալի էին ոչ միայն այն պատճառով, որ բախվելու էին պանթուրքիզմին թշնամական՝ «ռուսական» կամ «սոցիալիզմի» գործոններին, այլև միտումնավոր կերպով անտեսվող թյուրքական տարբեր ժողովուրդների արդեն ձևավորված ազգային ինքնագիտակցությանը, նրանց՝ հարուստ գրական ավանդույթներ ունեցող լեզուների<sup>71</sup> և ուրույն մշակույթների պատմական զարգացման ակնհայտ իրողություններին...

---

<sup>71</sup> Sî' u Tekin Talât M. , Pantürkizm Ülküsü ve Dilde Birlik "İddiası", "Türk Dili"(Aylık Dil ve Yazın Dergisi), Yıl 27, Cilt XXXVI, Sayı 310, 1 Temmuz 1977, s. 15-18:

## ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ (2007–2014 ԹԹ.)

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության խնդիրը որոշակի տեղ ունի թուրքական քաղաքական և գիտական օրակարգերում, ընդ որում՝ «գիտական» շրջանակները, մեծ մասամբ, աշխատում են պետության կողմից իջեցված պատվերին համահունչ: Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման դեմ, բնականաբար, առավել ակտիվ է Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը, սակայն սրան զուգահեռ պետական այլ գերատեսչություններում ևս ցեղասպանության դեմ պայքարի ուղղությամբ գործում են որոշակի կառույցներ:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովն այն հարթակներից է, որտեղ պատգամավորները (որոնց շարքում կան նաև նախկին դիվանագետներ) ուղղակի կրկնում են պաշտոնական միօրինակ և կեղծիքներից բաղկացած թեզերը, ինչպես նաև խորհրդարանը հովանավորում և տարածում է ցեղասպանությունը ժխտող «գիտական» գրականություն: Հատկապես 2000–ական թվականների սկզբներից խորհրդարանական դիսկուրսում նկատվեց հայկական թեմատիկայի որոշակի ակտիվացում, որի դրսևորումներից կարելի է համարել այն, որ 2005 թ. ապրիլին թուրքական խորհրդարանում քննարկվեց ու հավանության արժանացավ կառավարության առաջարկը հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որին հետևեց վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին<sup>1</sup>: Սրանով փորձ արվեց տպավորություն ստեղծելու, որ

<sup>1</sup> Ռ. Մաֆրասայան, Ռ. Մելքոնյան, Ա. Դումանյան, Վ. Տեր-Մաթոսյան, Հ. Չաքրյան, Ա. Հովհաննիսյան, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 351:

պատմաբանների հանձնաժողովի գաղափարը պաշտպանվում է ոչ միայն Թուրքիայի իշխող կուսակցության, այլ ամբողջ քաղաքական դաշտի կողմից:

Սկսած 2007 թվականից՝ Թուրքիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումներում ավելացել է նոր տարր, որը որոշակիորեն փոխել է նախկին միապաղաղ մթնոլորտը: Դա հիմնականում կապված է քրդական ընդդիմադիր ժողովրդավարական հասարակություն կուսակցության (ներկայումս՝ Խաղաղություն և ժողովրդավարություն կուսակցություն) հետ, որի մի խումբ անդամներ, ընտրվելով պատգամավոր, սկսեցին արտահայտել իշխանական տեսակետներից երբեմն տարբերվող մտքեր: Հիմնականում Թուրքիայի արևելյան շրջաններից ընտրված քուրդ պատգամավորները բավական լավ ծանոթ են Արևմտյան Հայաստանի տարածքներում նաև իրենց նախնիների կողմից կատարված ցեղասպանությանը: ԹԱՄԺ-ում Հայոց ցեղասպանության հետ կապված առաջին հայտարարություններից մեկը 2008 թվականին արեց Սղերթի պատգամավոր Օսման Օզչելիքը, ով իրենց խմբակցության անունից ելույթ ունենալիս նախ կիրառեց «հայերի կոտորած» տերմինը և նշեց. «Ցավալի է, որ անմեղ հայերը կոտորվեցին և իմ մանկությունը անցել է այդ մասին պատմություններ լսելով»<sup>2</sup>: Պատգամավորը հավելել է, որ անհրաժեշտ է ներողություն խնդրել հայերից, ինչից հետո ԹԱՄԺ-ում ստեղծվել է լարված իրավիճակ, քանի որ իշխող կուսակցության պատգամավորները ուղղակի հարձակվել են Օզչելիքի վրա և նախագահողը ստիպված է եղել ընդմիջել նիստը:

ԹԱՄԺ-ում Հայոց ցեղասպանության հարցը բավական ակտիվ քննարկման թեմա դարձավ 2009 թ. հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումից հետո: Ինչպես և սպասելի էր, արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն փորձում էր ներկայացնել, թե իբր արձանագրություններով նախատեսվող պատմական հարթության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովը քննարկելու է Հայոց ցեղասպանության խնդիրը: Սակայն հենց այդ նույն նիստի ժամանակ ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական և Ազգայնական շարժում կուսակցությունները քննադատեցին կառավարությանը՝ նշելով, որ հիշատակված ենթահանձնաժողովի գործառույթը այն չէ, ինչ ներկայացնում է Դավութօղլուն և Հայոց ցեղասպանության հարցը այնտեղ չի քննարկվելու: 2009 թ. հոկտեմբերի 21-ի Թուրքիայի

<sup>2</sup> DTP'li Özçelik'ten Ermeni iddialarına destek, Hurriyet, 21, 12, 2008.

Ազգային մեծ ժողովի նիստում ցեղասպանության փաստը ժխտող թուրքական քաղաքական ուժերի փոխադարձ մեղադրանքներից առավել շատ հետաքրքիր էր ընդդիմադիր քրդական ժողովրդավարական հասարակություն կուսակցության պատգամավոր Սելահեթին Դեմիրթաշի ելույթը, որում նա արտահայտում էր իր կուսակցության տեսակետները: Խորհրդարանի ամբիոնից նա կատարեց մի շարք ուշագրավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող ԱԶԿ-ի, ինչպես նաև ընդդիմադիր ԺՀԿ-ի, ԱՇԿ-ի կոշտ քննադատությանը: Այսպես, ըստ Դեմիրթաշի՝ «Հայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմական խնդիր: 1915–1916 թթ. այդ ժամանակվա երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով սիստեմատիկ ձևով կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն»<sup>3</sup>: Անդրադառնալով հանրապետական Թուրքիայում ձևավորված ժխտողական քաղաքականությանը՝ քուրդ պատգամավորը շեշտել է. «Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածները ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել: Այսպիսով՝ հակահայկական թշնամանք է սերմանվել այս երկրում»<sup>4</sup>: Արձանագրելով այս իրողությունները՝ Դեմիրթաշը փաստում է, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ ստեղծվել է քաղաքական և գաղափարախոսական կարծրացած ընկալում և ընդգծել. «Մեր պարտականությունն է այս ամբիոնից հայտարարել մեր իմացած իրողությունների մասին»<sup>5</sup>:

Վերոնշյալ հայտարարություններին հաջորդեցին այլ քուրդ պատգամավորների համարձակ ելույթներն ու կարծիքները Հայոց ցեղասպանության վերաբերյալ և դրանք, ըստ էության, սկսեցին կազմել խորհրդարանական դիսկուրսի, թեկուզ փոքր, սակայն, այնուամենայնիվ, մի բաղկացուցիչ մաս: 2011 թ. հոկտեմբերին քրդական Խաղաղություն և ժողովրդավարություն կուսակցության Դիարբեքրի պատգամավոր Ալթան Թանը Մարդինում տեղի ունեցած մի գիտաժողովի ժամանակ հայտարարել է. «1915 թվականին տեղի է ունեցել Հայոց ցեղասպանությունը: Ես որպես քաղաքական գործիչ եմ կիրառում «ցեղասպանություն»

<sup>3</sup> Ռ. Մելքոնյան, Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, Հանրապետական, թիվ 10, Եր., 2011, էջ 8–9:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>5</sup> Նույն տեղում:

բառը, թող գրանցվի»<sup>6</sup>: Իր ելույթում նա անդրադարձել է նաև ցեղասպանության կազմակերպիչների և իրագործողների խնդրին՝ նշելով. «1915–ի հիմնական պատասխանատուները երիտթուրքերն են, սակայն բազմաթիվ քրդեր ևս մասնակցել են ցեղասպանությանը: Չի կարելի ասել, որ ամբողջ քուրդ ժողովուրդը զինված մասնակցել է Հայոց ցեղասպանությանը, սակայն քուրդ ղեկավարները լուրջ պատասխանատվություն ունեն ցեղասպանության հարցում»<sup>7</sup>: Ավելորդ չէ նկատել, որ Թանը նախկինում եղել է կրոնամետ Բարօրություն կուսակցության անդամ, սակայն իր խոսքում նա մեղադրել է նաև մուսուլման հոգևորականությանը Հայոց ցեղասպանության հարցում ունեցած դիրքորոշման համար:

Որոշ ժամանակ անց նմանատիպ մի հայտարարություն արեց Սարդիինից ընտրված քուրդ պատգամավոր Ահմեթ Թուրքը՝ նշելով. «1915–ին հայերը մեծ տառապանքներ են կրել. սրանում քրդերն էլ իրենց մեղքի բաժինն ունեն: Տեղի տալով օսմանյան քարոզչությանը՝ քրդերը հայ ժողովրդի նկատմամբ բռնություններ են իրականացրել»<sup>8</sup>: Նա շեշտում է, որ իրենց պապերը օգտագործվել են հայերի, ասորիների և եզդիների դեմ՝ մասնակցելով նրանց կոտորածներին և «նրանց ձեռքերն արյունոտ են, մենք սա խոստովանում ենք»<sup>9</sup>: Քուրդ պատգամավորը նաև շեշտում է, որ իրենք որպես թոռներ ներողություն են խնդրում իրենց պապերի արարքների համար, որոնք «իրենց կամքին հակառակ օգտագործվել են»: Այս մտքերը բարձրաձայնելուց հետո Ահմեթ Թուրքը կոչ է անում նաև Թուրքիա պետությանը ևս ներողություն խնդրելու հայերից:

Հետզհետե Հայոց ցեղասպանության խնդիրը դարձավ ընդդիմադիր պատգամավորների հռետորաբանության մի բաղկացուցիչ մաս: Սա մի կողմից՝ դարձավ թուրքական հասարակության մի որոշակի հատվածում նրանց հեղինակության բարձրամանը խթանող հանգամանք, մյուս կողմից՝ իշխող կուսակցու-

<sup>6</sup> BDP'li Tan'dan Şok Sözciler!, <http://gundem.bugun.com.tr/bdpli-tandan-sok-sozler-haberi/172530>

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Ahmet Türk: Dedelerimizin eli kanlı özür dilerim, <http://t24.com.tr/haber/ahmet-turk-dedelerimizin-eli-kanli-ozur-dilerim/222931>; տե՛ս նաև 'Biz Ermenilerden özür diliyoruz, Türkler de dilesin' <http://www.agos.com.tr/haber.php?seo=biz-ermenilerden-ozur-diliyoruz-turkler-de-dilesin&haberid=4235>

<sup>9</sup> Ahmet Türk: Dedelerimizin eli kanlı özür dilerim, <http://t24.com.tr/haber/ahmet-turk-dedelerimizin-eli-kanli-ozur-dilerim/222931>



թյան պատգամավորների հետ առճակատման և իշխանություն-  
ընդդիմություն պայքարի թեմաներից մեկը:

Թեմայի զարգացմանը զուգընթաց քուրդ պատգամավորնե-  
րը իրենց քաղաքական հայտարարություններին փորձեցին տալ  
նաև իրավական ձևակերպում: Այսպես, դեռևս 2012 թ. ապրիլին  
Խաղաղություն և Ժողովրդավարություն կուսակցության պատ-  
գամավոր Սըրրը Սուրեյա Օնդերը հայտարարել էր, որ օրինա-  
գիժ է ներկայացնելու ԹԱՄԺ, որով առաջարկելու է ապրիլի 24-ը  
Թուրքիայում հայտարարել «Հայ ժողովրդի ազգային սուգը և  
ցավերը կիսելու օր»<sup>10</sup>: Բացի այդ՝ պատգամավորը կիրառում է  
ցեղասպանություն տերմինը, մասնակցում Ստամբուլում ապրիլի  
24-ին տեղի ունեցող հիշատակի միջոցառումներին: Նույն թվա-  
կանի հունիսին Խաղաղություն և Ժողովրդավարություն կուսակ-  
ցության մեկ այլ պատգամավոր՝ Հասիփ Քափլանը հայ լրագրող-  
ների հետ ԹԱՄԺ-ում հանդիպման ժամանակ նշել է, որ իրենց  
խմբակցությունը պատրաստվում է մի օրինագիժ ներկայացնել,  
որի մեջ ներառելու են Թուրքիայում տեղի ունեցած մի շարք ող-  
բերությունների, այդ թվում և Հայոց ցեղասպանության դատա-  
պարտումը: Սակայն մինչույն ժամանակ քուրդ պատգամավորը  
հայտնել է, որ իրենք գիտակցում են, որ նման օրինագիժը շան-  
սեր չունի հաստատվելու՝ հաշվի առնելով ԹԱՄԺ-ում քաղաքա-  
կան ուժերի առկա ներկայացվածությունը<sup>11</sup>: Քափլանը ընդունել  
է, որ իրենց «պապերը ժամանակին սխալներ են թույլ տվել» և  
հավելել, որ այժմ էլ «Թուրքիայի խորհրդարանում Հայոց ցեղաս-  
պանությունից խոսելը շատ ռիսկային է»<sup>12</sup>:

Քուրդ պատգամավորները ժամանակակից Թուրքիայում  
հայերի նկատմամբ իրականացված բռնություններին անդրա-  
դառնալիս կրկին զուգահեռներ են տանում Հայոց ցեղասպա-  
նության հետ: Այսպես, Խաղաղություն և Ժողովրդավարություն  
կուսակցության համանախագահ տիկին Գյուլթեն Քըշանաքը,  
կուսակցության խորհրդարանական խմբակցության նիստում  
անդրադառնալով Ստամբուլում տարեց հայ կանանց վրա իրա-  
կանացված հարձակումներին, նշել է. «Մենք գիտենք, թե ինչպես

<sup>10</sup> ‘Ermenilerin acılarını paylaşmak istiyoruz’, [http://www.radikal.com.tr/politika/ermenilerin\\_acilarini\\_paylasmak\\_istiyoruz-1086096](http://www.radikal.com.tr/politika/ermenilerin_acilarini_paylasmak_istiyoruz-1086096)

<sup>11</sup> Հայ լրագրողները Թուրքիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության թե-  
ման են քննարկել, <http://news.am/arm/news/107586.html>

<sup>12</sup> Նույն տեղում:

են ցանկացել հայերին այս տարածքներից ջնջել, ինչպես են ենթարկել կոտորածների»<sup>13</sup>:

Հետաքրքիր է դիտարկել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ստանդարտ ձևակերպումներից տարբերվող մտքերի երբեմն կարելի է հանդիպել նաև իշխող ԱԶԿ-ի, ինչպես նաև անկախ պատգամավորների հայտարարություններում, ելույթներում և հարցազրույցներում ևս: Այսպես, 2012 թ. ապրիլի 25-ին Հայոց ցեղասպանության խնդրին անդրադարձել և անգամ «անձամբ իր անունից» ներողություն է խնդրել իշխող ԱԶԿ-ի հիմնադիր անդամներից և Ստամբուլի պատգամավոր Իսմեթ Ուզման, ով մասնավորապես հայտարարել է. «Այդ տառապանքները Միություն և առաջադիմություն կուսակցությունն է պատճառել, այդ շրջանում և՛ հայերին, և՛ թուրքերին տառապանքները պատճառողը երիտթուրքերն են: Նրանց գործողություններում ընդունելի որևիցե բան չկա: Այդ ամենի պատասխանատուն մենք չենք, երիտթուրքերն են, սակայն մենք պետք է կարողանանք ասել. «Անցյալում տեղի ունեցած որոշ դեպքերի համար մենք ձեզնից ներողություն ենք խնդրում»: Այդ ներողությունը ես անձամբ իմ անունից ասում եմ ցեղի աքսորի համար»<sup>14</sup>: Ուշագրավ է պատգամավոր Ուզմայի կիրառած տերմինը՝ ցեղի աքսոր, որը թուրքական քաղաքական հռետորաբանության մեջ գրեթե չի հանդիպում:

Հայոց ցեղասպանության թեման որոշակի տեղ էր գրավել նաև 2014 թ. Թուրքիայի նախագահական ընտրությունների քարոզարշավի ժամանակ: Իհարկե, խոսքը առավելապես քուրդ թեկնածու Սելահեթթին Դեմիրթաշի մասին է, ով հանդիպումներից մեկի ժամանակ նշել է. «Ես մեծացել եմ Դիարբեքիում, որտեղ իմ մանկության տարիներին «հայ» բառը գործածվում էր որպես հայիոյանք, իսկ այժմ էլ մեր երկրում «հայ» բառը կիրառվում է որպես վիրավորանք: Մենք՝ թուրքերս և քրդերս, հայերի առջև պարտք ունենք և մինչև այդ պարտքը չտանք, հայ ժողովրդի աչքերին չենք կարող հանգիստ խղճով նայել»<sup>15</sup>:

Մի քանի տարի շարունակ քուրդ պատգամավորների հնչեցրած հայտարարությունները Հայոց ցեղասպանության հարցը

<sup>13</sup> BDP Eş Genel Bşk. Gülten Kışanak: Ermenilerin, nasıl katliamlara uğradıklarını biliyoruz, <http://news.am/tur/news/137858.html>

<sup>14</sup> Ermenilerden özür diledi! <http://haber.gazetevatan.com/ermenilerden-ozur-diledi/446036/9/Siyaset>

<sup>15</sup> Selahattin Demirtaş: Ermenilere karşı Türkler ve Kürtler olarak borcumuz var, <http://t24.com.tr/haber/demirtas-kurtlere-sorulsa-cogu-ayri-devlet-istiyorum-diyecek/221016>

իրավական դաշտ տեղափոխելու վերաբերյալ, ամփոփվեցին 2014 թ. նոյեմբերին, երբ «Ժողովուրդների ժողովրդավարական կուսակցության» Ստամբուլի պատգամավոր Սաբահաթ Թունջելը ԹԱՄԺ-ին ներկայացրեց մի օրինագիծ, որի հիմնավորման մեջ կին պատգամավորը առաջ է քաշում Թուրքիայում հասարակական բարեկամության ձևավորման կարևորությունը և «պետություն-հասարակություն» համաձայնագրի ձեռք բերումը: Հասարակական խաղաղության հաստատման համար, ըստ Թունջելի, կան մի շարք խոչընդոտներ. «Բացի Դերսիմից՝ կան մարդկության դեմ իրագործված այլ հանցանքներ ևս, ինչպիսիք են Մարաշի, Սեբաստիայի կոտորածները, Հայոց ցեղասպանությունը, սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո ընդդիմության նկատմամբ իրականացված պետական ահաբեկչությունը»<sup>16</sup>: Օրենքի նախագծի համաձայն՝ Թուրքիայի նախագահը պետք է ներողություն խնդրի այդ ամենի համար, իսկ հաջորդ օրը հենց դեպքի վայրում ևս մեկ անգամ պետք է կարդա ներողության հայտարարության տեքստը, չնայած Հայոց ցեղասպանության պարագայում մի փոքր անհասկանալի է, թե որտեղ է «դեպքի վայրը»: Բացի այդ՝ առաջարկվում է այդ դեպքերի օրը հայտարարել «ազգային սգո օր»<sup>17</sup>: Օրինագծում թերևս առաջին անգամ, սակայն ոչ հստակ և առավելապես դեկլարատիվ բնույթի ակնարկ կա նաև ֆինանսական ու բարոյական փոխհատուցման հնարավորության վերաբերյալ: Թունջելը առաջարկում է նաև ստեղծել խորհրդարանական հանձնաժողով, որը կուսումնասիրի դեպքերը և պետությունը պետք է պարտավորվի բացել բոլոր արխիվները: Նկատենք, որ արխիվներ բացելու հանգամանքը միզուցե կարևորություն ունի Մարաշի, Սեբաստիայի և այլ ողբերգությունների ուսումնասիրության համար, սակայն Հայոց ցեղասպանության պարագայում դա թուրքական կեղծարարական հռետորաբանության մի մասն է կազմում և, ըստ էության, ցեղասպանությանը վերաբերող արխիվային նյութերի մեծ մասը փակ է<sup>18</sup>: Նման օրինագիծը, ինչ խոսք, նոր երևույթ է Թուրքիայի խորհրդարանական պատմության մեջ, սակայն փաստելով այս ամենի դրական կողմերը չենք կարող չնկատել և չշեշտել, որ օրինագծում, ըստ էության, Հայոց ցեղասպանության հարցը թվարկվում է ի շարս այլ ողբերգությունների, որոնք ո՛չ ծավալով,

<sup>16</sup> HDP'den olay yaratacak 'Ermeni' teklifi!, Milliyet, 26, 11, 2014.

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> 'Açık' denilen arşive girmesi yasak, Agos, 31, 12, 2014; Tarihçiler 'açık' arşivleri anlatıyor, Agos, 19, 05, 2014.

ոչ հետևանքներով համեմատվելու որևէ եզր չունեն Հայոց ցեղասպանության հետ: Սրանով նաև անտեսվում է Հայոց ցեղասպանության բացառիկությունը և նաև այդ հարցի հետ անմիջականորեն կապված Հայոց հայրենագրկության խնդիրը:

Այդ նույն համատեքստում կարևոր է նկատել, որ քուրդ պատգամավորների և քաղաքական գործիչների հայտարարությունները ինչքան էլ որ նոր են թուրքական քաղաքական դաշտում և հռետորաբանության մեջ, սակայն, այնուամենայնիվ, մեզ համար դրանցում կան անընդունելի կարևոր կետեր: Այսպես, նախկին պատգամավոր և ներկայումս Մարդինի քաղաքապետ Ահմեթ Թուրքը, որը, ինչպես նշվեց վերևում, քանիցս անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին, վերջերս Ստոքհոլմում հայտարարություն է արել, որում կան ինչպես օբյեկտիվ կետեր, այնպես էլ պատմական ճշմարտությանը որոշակիորեն չհամապատասխանող դրույթներ: Նա հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ որոշ քրդական աշիրեթներ նույնպես մասնակցել են սպանդին և այնուհետ ներողություն խնդրել ասորիներից, հայերից և եզդիներից. «Մենք այսօր որպես որդիներ և թոռներ ցավ ենք ապրում այն բանի համար, որ մեր պապերը, հայերը մասնակցել են այդ կոտորածներին: Մենք երբեք չենք մոռանալու մեր եղբայրական ազգերի կրած ցավերը: Ասորի, հայ ժողովուրդներից և մեր եզդի եղբայրներից խնդրում են, որ մեզ ներեն»<sup>19</sup>: Ահմեթ Թուրքը իր ելույթում չի նշել Հայոց ցեղասպանություն եզրը, այլ 1915-ի ցեղասպանություն՝ դրա մեջ ներառելով հայերի, ասորիների, եզդիների, հույների ցեղասպանությունները, այսինքն՝ սրանով ստվերվում և անտեսվում է Հայոց ցեղասպանության բացառիկությունը: Այնուհետ քուրդ քաղաքական գործիչը նշել է, որ «Քուրդիստանի» իրական տերերը հայերը, ասորիները և եզդիներն են, և «Քուրդիստանը» քրդերի հետ հավասար նաև նրանց հողն է<sup>20</sup>: Փաստորեն չի տրվում այդ տարածքների իրական անվանումը՝ Հայաստան, և երկրորդ համահավասարեցման նշան է դրվում հայերի, ասորիների ու եզդիների կրած զրկանքների միջև: Ճիշտ է, ցավերը հնարավոր չէ համեմատել, սակայն հստակ պետք է նշել, որ հայերը ցեղասպանության հետևանքով նաև հայրենագրկվել են, կորցրել են իրենց հայրենիքի զգալի մասը, որն այսօր անվանում են Քուրդիստան:

<sup>19</sup> 1915 yaklaşırken Ahmet Türk özü diledi: “Süryani, Ermeni ve Ezidilerden bizleri bağışlamalarını diliyoruz”, <http://marksist.org/ahmet-turk-suryani-ermeni-ve-ezidilerden-bizleri-bagislamarini-diliyoruz.html>

<sup>20</sup> Նույն տեղում:

Այնուամենայնիվ, ներկայումս թուրքական քաղաքական և մասնավորապես խորհրդարանական օրակարգում Հայոց ցեղասպանության խնդրի ներառումը մեծապես կապված է քուրդ քաղաքական գործիչների հետ և արժևորելով հանդերձ նրանց ջանքերը՝ չպետք է անտեսել այն կարևոր պատմագիտական և քաղաքագիտական շեղումներն ու անճշտությունները, որոնք երբեմն տեղ են գտնում նրանց ելույթներում: Միևնույն ժամանակ կարող ենք փաստել, որ Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում շարունակվում են զարգացումներ, որոնք մի կողմից՝ ցույց են տալիս թուրքական քաղաքական մեքենայի մշակված և հետևողական պայքարը ցեղասպանության փաստի ճանաչման դեմ, իսկ մյուս կողմից՝ ապացուցում կեղծիքի վրա հիմնված այդ քաղաքականության սնանկությունը:

**ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԸ ԵՎ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՆ.  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ**

Առաջին համաշխարհային և 1919–1922 թթ. հույն–թուրքական պատերազմների տարիներին Օսմանյան կայսրության հույն բնակչության նկատմամբ իրագործվեց զանգվածային տեղահանությունների և կոտորածների քաղաքականություն, որի հետևանքով Փոքր Ասիան զրկվեց հույն բնակչությունից: Չնայած այն փաստին, որ հարյուր հազարավոր հույներ բռնի տեղահանվեցին և կոտորվեցին, այնուամենայնիվ, Հունաստան արտաքսվածների թիվն ավելի մեծ էր: 1920–ական թթ. առաջին կեսից սկսած փրկություն գտած փոքրասիական հույների առջև նոր խնդիրներ երևան եկան՝ կապված նրանց՝ հունաստանյան հասարակությանն ադապտացվելու և ինտեգրվելու հետ, որոնք ունեին սոցիալ–տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ առանձնահատկություններ: Աղետից փրկված փոքրասիական հեյլենիզմն ամենևին էլ միասեռ զանգված չէր. Հունաստանում էին հաստատվել հոնիացիներ, կապադովկիացիներ, պոնտոսցիներ և այլն:

Այս հողվածում քննության ենք առնելու պոնտոսցի գաղթականների՝ Հունաստանում հաստատված երկրորդ և երրորդ սերունդների պատմական հիշողության դրսևորման մի քանի կարևոր առանձնահատկություններ: Փորձելու ենք հասկանալ, թե XX դարի սկզբին տեղի ունեցած աղետը հետագա տասնամյակների ընթացքում ինչ հետադարձ դրսևորումներ է ունեցել փոքրասիական հույների՝ բացառապես մեկ խմբի մոտ: Լինելով բարդ և միևնույն ժամանակ բազմատարր՝ այս երևույթն ունի ու–

սումնասիրության մի քանի շերտեր՝ փրկություն և վերականգնում, երկարաժամկետ ռեֆլեքսիա-արտացոլում և յուրատեսակ վերածնունդ:

### ՊՈՆՏՈՍԻ ՀՈՅՆԵՐ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հայտնի է, որ «Պոնտոս» հասկացությունն ունի հիմնականում աշխարհագրական և պատմական նշանակություն: Պոնտոսը Փոքր Ասիայի պատմական մարզերից մեկն է, որտեղ հույների ներկայությունն ունի 2700–2800 տարվա պատմություն: Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցնելուց հետո՝ պոնտոսցիները կորցրեցին անկախ պետականությունը և փոքրասիական մյուս ու բալկանյան հույների նման հայտնվեցին դարավոր լծի տակ:

Առաջին աշխարհամարտի տարիներին Տրապիզոնի վիլայեթում հայերի բնաջնջմանը հաջորդեցին հույների զանգվածային կոտորածները: Պատերազմի ավարտից հետո պոնտոսցի հույների մոտ սկսվեց պայքար սեփական իրավունքների պաշտպանության համար: Դա մեծապես պայմանավորված էր նաև Փարիզի հաշտության վեհաժողովի ժամանակ հունական պատվիրակության ղեկավար Է. Վենիզելոսի՝ տվյալ հարցում ունեցած դիրքորոշմամբ<sup>2</sup>: Չնայած 1918–1920 թթ. Պոնտոսի հարցի հետ կապ-

<sup>1</sup> Մ. թ. ա. 3-րդ դարում ստեղծված Պոնտական պետությունն անկում ապրեց մ. թ. ա. 1-ին դարում՝ ընկնելով հռոմեական տիրապետության տակ: 395 թ. կայսրության բաժանումից հետո Պոնտոսն անցավ Արևելյան բյուզանդական մասին: 1204 թ. խաչակիրների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավումից ու թալանից հետո այս տարածքում առաջացել էր առանձին ու անկախ հունական պետություն Տրապիզոնի կայսրությունը, որը գոյատևեց շուրջ 2,5 դար: Կ. Պոլսի գրավումից ութ տարի անց՝ 1461 թ., օսմանյան թուրքերը գրավեցին ու վերջ դրեցին նաև Տրապիզոնի հունական պետության գոյությանը: Հունական Պոնտոսը Փոքր Ասիայում ուներ 71500 քառ. կմ տարածություն, որից Տրապիզոնի վիլայեթին (չհաշված Ջանիքի սանջակը) բաժին էր հասնում 31300 քառ. կիլոմետրը (տե՛ս Economides D. E., The Pontus and the Right Claims of its Greek Population: Topographical, Ethnographical and Historical Study: With Two Maps and Various Statistics, Constantinople, 1920, p. 6): Համաձայն հունական աղբյուրների՝ օսմանյան վարչական միավորներից Պոնտոսը ներառում էր ա) Տրապիզոնի վիլայեթը, բ) Ջանիքի առանձնացված սանջակը, գ) Կաստամունուի վիլայեթի Մինոպի սանջակը, դ) Մեքաստիայի վիլայեթի Ամասիայի, Շապին Գարահիսարի ու Թոքրատի (Եվրոկիա) սանջակները: Այս տարածքն իր հերթին Կ. Պոլսի Հունաց պատրիարքարանը բաժանել էր Պոնտոսի 6 միտրոպոլիտոսների: Դրանք էին Տրապիզոն, Ռոդոպոլիս (Ջեվիզլիկ), Խաղիա (Գյումուշխանե), Կոլոնիա (Նիկոպոլիս – Շ. Գարահիսար), Նեոկեսարիա (Նիքսար), Ամասիա:

<sup>2</sup> 1919 թ. փետրվարի 3-ին և 4-ին Փարիզի հաշտության վեհաժողովում հունական պահանջները ներկայացնելիս վարչապետ Է. Վենիզելոսը ընդգծել էր,

ված զարգացումներին<sup>3</sup> և դրա՝ պոնտոսցիների համար ցանկալի լուծման ակնկալիքներին՝ այնուամենայնիվ, Ազգայնական (Քեմալական) շարժման ծավալմանը զուգահեռ տեղի հույները հայտնվեցին չափազանց դժվար դրության մեջ: Այն, որ քեմալականների համար Պոնտոսի հույն բնակչությունը հիմնական թիրախներից էր, մեկ անգամ ևս հաստատվում է Էրզրումի կամ Սվազի կոնգրեսները դիտարկելիս: Ազգայնականների կողմից մշտապես ընդգծվել է հույների՝ իրենց համար վտանգ ներկայացնելու գործոնը<sup>4</sup>: Հույն-թուրքական պատերազմի ընթացքում՝ 1921 թ. սկսած, հունական բանակի անհաջողությունները, նույն թվականի ֆրանս-թուրքական պայմանագիրը, բուլղարիկների շարունակական օժանդակությունը ազգայնականներին և Մոսկվայի պայմանագիրը վերջնականապես ազատ արձակեցին քեմալականների ձեռքերը<sup>5</sup>: Այլ խոսքերով՝ փրկության հույսից զրկված պոնտոսցիների վերջին բեկորները կոտորվեցին, իսլամացվեցին կամ արտաքսվեցին Հունաստան:

որ Տրապիզոնի նահանգը պետք է ընդգրկվի Հայաստանի կազմի մեջ, չնայած որ այնտեղի հույները հայերից շատ են: Տե՛ս Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Հատոր I, Առաջին տարի, 1918–1919 (խմբ.՝ Ա. Խատատյան), Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 304: Անշուշտ, նման դիրքորոշումը կապված էր Վենիզելոսի կողմից պատմական իրադրության սթափ գնահատմամբ, քանի որ նման կարևոր պահին հայ-հունական հնարավոր հակասությունների դեպքում կուժեղանար դաշնակիցների ճնշումը, ինչից կշահեր Թուրքիան:

<sup>3</sup> Պոնտոսցի հույները սկզբնական շրջանում մեծ հույսեր էին կապում Փարիզի հաշտության վեհաժողովի հետ: Դրանով է պայմանավորված նաև առանձին հուշագրի ներկայացումը վեհաժողովին, որտեղ ամփոփված էին նրանց պահանջները (տե՛ս [National Delegation of the Euxine Pontus], Memorandum Submitted to the Peace Conference, Manchester: Norbury, Natzio & Co. Ltd., 1919): Դրանից կարճ ժամանակ անց Տրապիզոնի միտրոպոլիտ Խրիսանթոսը Երևանում բանակցություններ է սկսում Հայաստանի կառավարության հետ: Այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին Առաջին հանրապետության շրջանում (1918–1920), թարգմանությունը հունարենից՝ Հ. Բարթիկյանի, Եր., Հեղինակային հրատ., 1998:

<sup>4</sup> Տե՛ս Մ. Кемаль, Путь новой Турции 1919–1927, т. 1, Первые шаги национально-освободительного движения 1919, Москва: Литгиздат, 1929, с. 6, 199, 350, 419.

<sup>5</sup> Պատահական չէ, որ 1921 թ. հույների զանգվածային տեղահանություններն ու կոտորածները սաստկացան: Այս ժամանակահատվածում էր, որ թուրք ազգայնականները հաշվեհարդար տեսան նաև Պոնտոսի հույն մշակութային, քաղաքական գործիչների և գործարարների հետ: Տե՛ս Գ. Վարդանյան, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914–1923 թթ.), Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012, էջ 121–122:



### ՀՈՒՅՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԼՈՉԱՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

Հույն ժողովրդի նորագույն պատմության ուսումնասիրության տեսանկյունից բացառիկ նշանակություն ունի Լոզանի վեհաժողովը և դրա շրջանակներում 1923 թ. հունվարի 30-ին ստորագրված «Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագիրը: Պայմանագրի էության մասին թերևս դժվար է գտնել ավելի դիպուկ բնութագիր, քան հունական պատվիրակության ղեկավար Է. Վենիզելոսի կողմից տրվածն է: Ըստ նրա՝ պայմանագրի անվանումը կեղծ է, քանի որ մինչև պայմանագրի ստորագրումը Թուրքիայի տարածքից արդեն արտաքսվել էր մոտավորապես մեկ միլիոն փախստական: Նման անվանումը պայմանավորված էր Թուրքիայի ճնշմամբ և հատկապես Փոքր Ասիայում մնացած շուրջ երկու հարյուր հազար հույն բնակչության ճակատագրի նկատմամբ եղած մտահոգությամբ<sup>6</sup>: Ուստի հունական կողմը պարզապես ստիպված է եղել համաձայնել նման անվանմանը<sup>7</sup>: Ընդհանուր առմամբ այս պայմանագրով փաստորեն օրինականացվում էին թուրքահպատակ հույների արտաքսումները:

Զանգվածային բռնագաղթի անմիջական հետևանքը Հունաստանի տարածքում մոտ 1,5 միլիոն<sup>8</sup> փախստականների հաստատումն էր: Հոնիայից, Կապադովկիայից, Պոնտոսից և Փոքր Ասիայի մյուս շրջաններից հույն բնակչության տեղաշարժերի հետ կապված՝ Էգեյան տարածաշրջանում առաջացան քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական նոր փոփոխություններ: Այդ գործընթացն առնչվում էր բազմապիսի խնդիրների հետ, որոնց լուծման անհրաժեշտությունն իր ողջ բարդությամբ

<sup>6</sup> Ակցոլլու Յ., Անիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անատոլիայի հելլենականության մեթոդավորված բնաջնջման գործընթացի իրար հաջորդող փուլերը (Հուն. թարգմ.՝ Լ. Վարդանյան, Խմբ.՝ Ս. Գրքաշարյան), Եր., Ճարտարագետ, 2007:

<sup>7</sup> Ստեղծված անբարենպաստ պայմաններն առաջին հերթին պայմանավորված էին 1919–1922 թթ. հույն–թուրքական պատերազմում Հունաստանի պարտությամբ:

<sup>8</sup> Տե՛ս u Marriott J. A. R., The Eastern Question, A Historical Study in European Diplomacy, Oxford: Clarendon Press, 1951, p. 409: Այս տվյալը հիմնված է այն փաստի վրա, որ մինչև «Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագրի ստորագրումը Հունաստան էր բռնագաղթվել 1000000–125000 հույն (տե՛ս, օրինակ, Housepian M., Smyrna 1922, The Destruction of a City, New York: Harcourt Brace Jovanovich, Inc., 1971, p. 219; Walker Chr., Armenia: The Survival of a Nation, New York: St. Martin's Press 1980, p. 350), իսկ դրանից հետո ևս 189916–ը (մեկ այլ տվյալի համաձայն՝ 192356): Տե՛ս u Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 153:

դրվեց Հունաստանի կառավարության առջև: Գլխավորը փոքրասիական գաղթականների՝ հունաստանյան հասարակությանը հարմարվելու և դրա մի մասը դառնալու խնդիրն էր<sup>9</sup>:

Գաղթականների ինտեգրման առաջին լուրջ դժվարությունը կապված էր նրանց՝ սոցիալ-մշակութային նոր միջավայրին հարմարվելու հետ (տնտեսական խնդիրների հետ միասին): Փոքրասիական հույների բոլոր խմբերի մոտ այս գործընթացը պայմանավորված է եղել երեք կարևորագույն գործոնով՝ անցյալ, հիշողություն և հիշողության արտացոլում: Անցյալի ընկալումը նույնացվում էր ծննդյան վայրի, կորուսյալ հայրենիքի գաղափարի հետ: Առաջինի հետ սերտորեն առնչվում էր երկրորդը՝ հիշողությունը՝ կապված կոտորածների, արտաքսման, հայրենիքի կորստի հետ: Պետք է ընդգծել այն իրողությունը, որ հետլուզանյան հունական հասարակության մեջ առաջին երկու գործոնների արտացոլման հիմքում մեծ տեղ էր զբաղեցնում «ծննդյան վայրի» գաղափարը: Այսինքն՝ գաղթականները ոչ միայն Բալկանյան թերակղզու բնակիչներից, այլ նաև փոքրասիական հույների մյուս խմբերից միմյանց առանձնացնում էին՝ համաձայն իրենց ծննդավայրի: «Վայրի» գաղափարը բովանդակային առումով դարձավ գաղթական յուրաքանչյուր խմբի ինքնության «վկայական», տարբերակիչ հատկանիշ: Իսկ արտացոլման ձևի տեսանկյունից դա դրսևորվեց նոր բնակավայրերը կամ թաղամասերը փոքրասիական տեղանուններով անվանակոչելու միջոցով<sup>10</sup>: Անշուշտ, սեփական ինքնության առանձնացումն ուներ էական այլ բաղադրիչներ ևս, ինչպես, օրինակ՝ լեզուն (բարբառ): Այս կամ այն գործոնի արտացոլումը գաղթական բոլոր խմբերի մոտ ուներ ավելի շատ ընդհանրություններ, քան տարբերություններ: Այնուամենայնիվ, արտացոլման գործընթացը դրանցից ոչ մեկի մոտ այնպիսի աստիճանի չհասավ և այնպիսի դրսևորումներ չունեցավ, ինչպես կատարվեց պոնտոսցի գաղթականների դեպքում:

<sup>9</sup> Այս առումով 1920-ական թթ. Հունաստանի կառավարությունն իրականացրել է լայնածավալ աշխատանքներ: Տե՛ս Գ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 155:

<sup>10</sup> Նման օրինակները շատ են: Այսպես, գմյուռնիացի գաղթականները հիմնեցին Նոր Զմյուռնիա (Նեա Սմիրնի) թաղամասն Աթենքի հարավում, իսկ պոնտոսցի գաղթականները կենտրոնական Մակեդոնիայի Վոլովոս բնակավայրը վերանվանեցին Նոր Սանտա:

**«ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՆՔ» ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՊՈՆՏՈՍՑԻՆԵՐԻ  
ՅՈՐԱՏԵՍԱԿ ՎԵՐԱԾՆՈՆԴԸ**

Հունաստանում հաստատված պոնտոսցիների նկատմամբ Հունաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը նույնն էր, ինչ որ մյուս հույների նկատմամբ: Իշխանություններն արեցին հնարավոր ամեն բան, որպեսզի փոքրասիական հույները կարողանան նոր պայմաններում վերագնտել իրենց: Հունաստանյան հասարակության մեջ, այնուամենայնիվ, ինչպես պոնտոսցիների, այնպես էլ մյուսների՝ որպես «գաղթականի» կամ «փախստականի» ընկալումն ունեցել է որոշակի առանձնահատկություններ: Մակեդոնիայի համալսարանի (Սալոնիկ) դասախոս, պատմաբան Է. Վուտիրան, ուսումնասիրելով հիմնախնդիրը, առանձնացրել է երեք կարևոր գործոն՝ ա) գաղթականների ներկայությունը Հունաստանում չի դիտվել որպես ժամանակավոր երևույթ, քանի որ Լոզանի պայմանագրի համաձայն՝ նրանք չէին կարող հետ վերադառնալ Թուրքիա, բ) գաղթականները Հունաստանում չեն դիտվել որպես «ուրիշներ», գ) Մեծ է Է. Վենիզելոսի խարիզմատիկ կերպարի դերը: Չնայած պատերազմում կրած պարտությանը և Փոքրասիական աղետի սարսափելի հետևանքներին՝ գաղթականների՝ Հունաստանում հաստատվելու և նրանց վերածննդի գործը սկսեց ընկալվել որպես ազգային պայքար, ավելին՝ հաղթանակ<sup>11</sup>: «Գաղթական» հասկացության դրական իմաստով ընկալման փաստի առկայությունը կարելի է գտնել նաև պոնտոսցիների մոտ: Այս առումով բնութագրական են Հունաստանի խորհրդարանի պատգամավորներից մեկի՝ պոնտոսյան արմատներ ունեցող Լ. Յասոնիդեսի ժամանակին հնչեցրած ելույթի շեշտադրումները, որոնց համաձայն՝ «գաղթական»-ը հարգանքի, պատվի հասկացություն է, և որ ոչ միայն իրենք են իսկական գաղթականներ, այլ նաև իրենց երեխաներն ու թոռները<sup>12</sup>: Համաձայնելով Վուտիրայի առաջադրած փաստարկներին՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ «գաղթական»-ի ընկալումները պետության և բուն գաղթականների կողմից զգալիորեն տարբերվել են: Անգամ վերոհիշյալ պատգամավորի խոսքի երկրորդ մասում նշվում էր հետագա սերունդների՝ «իսկական գաղթական» մնալու մասին: Քննարկվող օրինակն իրականում

<sup>11</sup> E. Voutira, When Greeks Meet Other Greeks: Settlement Policy Issues in the Contemporary Greek Context, in "Crossing the Aegean, An Appraisal of the 1923 Compulsory Population Exchange between Greece and Turkey", (Edited by Renée Hirschon), New York-Oxford: Berghahn Books, 2006, p. 148.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 149:

ունի խորքային այլ տարրեր. մասնավորապես «գաղթական» բառը պոնտոսցիների համար ժամանակի ընթացքում ընկալվել է նաև սեփական՝ առանձին «ազգային ինքնության» հիմնական բնորոշիչ: Այսինքն՝ անկախ ամեն ինչից միայն պոնտոսցիների մոտ սկսվեց առավել ակնհայտ դրսևորումներ ստանալ պոնտոսյան «ազգային Ես-ը» համահունական ընդհանուր Ես-ից առանձնացնելու գործընթաց<sup>13</sup>: Իհարկե, այս ամենը չպետք է ընկալվել որպես կտրուկ սահմանաբաժանում, հունական ինքնությունից հեռանալու փորձ կամ պոնտոսցի հույն շեշտադրված հակադրություն: Այնուամենայնիվ, պայմանավորված մի շարք գործոններով, գաղթականների հենց պոնտոսյան խմբի մոտ տասնամյակների ընթացքում եղան մի շարք զարգացումներ, որոնք դարձան բնորոշ միայն նրանց համար: Մեր խորին համոզմամբ դրանցից առաջինը և գլխավորը պոնտոսցիների՝ Հունաստանում առավել մեկուսացված գաղթականական խումբ լինելու հանգամանքն է, երկրորդը՝ պոնտոսցի լրբբիստների կողմից տարված աշխատանքը՝ այլ կերպ ասած՝ պատմական հիշողության նրանց ընկալման և «ներկայացման ձևի» իրողությունը:

1960-ական թթ. սկսած պոնտոսցի հույների երկրորդ և երրորդ սերնդի «ձուլմանը» զուգընթաց և հատկապես 1970-ական թթ., երբ պետությունն անցում էր կատարում ժողովրդավարական ռեժիմի, երկրի սոցիալ-տնտեսական աճը, քաղաքակենտրոնացման (ուրբանիզացիայի) տեմպերի արագացումը ստեղծեցին յուրօրինակ իրավիճակ: Դա այն ժամանակահատվածն էր, երբ գաղթական-տեղացի սահմանազատումը նվազագույնի հասավ կամ գրեթե վերացավ: Մեծացել էր նոր սերունդ, որը չէր տեսել Փոքրասիական աղետը, այլ դրա մասին լսել էր միայն բանավոր պատմություններ: Եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Հունաստանում Ռազմական խունտայի իշխանության տարիներին (1967-1974 թթ.) փակվել էին պոնտոսցի հույների՝ մշակութային ուղղվածություն ունեցող բազմաթիվ կազմակերպություններ, ապա պատկերն առավել ամբողջական է դառնում: 1974 թ. հետո այդ կազմակերպությունները ոչ միայն վերաբացվեցին, այլև դրանց թիվն ավելի աճեց: Ասվածը միայն պոնտոսցիներին հատուկ երևույթ չէր. դա մեծապես դրսևորվել է նաև գաղթական մյուս խմբերի մոտ: Սակայն այստեղ գլխավոր տարբերակիչ գիծն այն է, որ պոնտոսցի մտավորականները փորձում էին կասեցնել

<sup>13</sup> Ընդհանուր առմամբ, դա ուներ նաև պատմական ակունքներ: Փոքրասիական հույներից միայն պոնտոսցիներն էին, որ երբևէ ունեցել էին առանձին պետականություն:

հունաստանցիների հետ պոնտոսցի հույների «միաձուլման» գործընթացը, վերականգնել անհետացող պոնտոսյան բարբառը<sup>14</sup>: Ավագ սերնդի կողմից երիտասարդության «վերապոնտացումը» հանգեցնում էր նրանց՝ սոցիալական մեկուսացվածության խորացմանը:

1970–ական թթ. երկրորդ կեսին Հունաստանում ստեղծված քաղաքական իրադրությունն ընդհանուր առմամբ նպաստեց այս գործընթացին: Դա կարելի է բնորոշել որպես սեփական պատմության վերարժևորմանն ուղղված «ներհամայնքային» մղում՝ դրսևորված սեփական ինքնության և արմատների որոնման մեջ: Բովանդակայինից զատ այն ուներ նաև դրսևորման որոշակի ձև՝ հետաքրքրության աճ պոնտոսյան ֆոլկ մշակույթի նկատմամբ: Բնականաբար, այս երևույթին իր ներքին պատճառահետևանքային կապով առնչվում էր փոքրասիական հույների հավաքական փորձառությանը հատուկ ուշադրության հատկացմանը: Իսկ մեծ հաշվով ինչ էր այդ փորձառությունը. իհարկե պատմություն և հիշողություն հալածանքի, բռնագաղթի, կոտորածի, ողբերգական ճակատագրի մասին: 1960–1970–ական թթ. պոնտոսյան այս վերածնունդն ի վերջո 1980–ական թթ. հանգեցրեց հիշողության յուրատեսակ պաշտամունքի:

Այս ամենի անմիջական արդյունքը դարձավ 1985 թ. Աթենքում Պոնտոսյան ուսումնասիրությունների կենտրոնի՝ ԿԵՊՈՄԵ–ի (Κέντρο Ποντιακών Μελετών (ΚΕ.ΠΟ.ΜΕ)) հիմնադրումը, իսկ մեկ տարի անց նաև դրա մասնաճյուղի բացումը Սալոնիկում՝ պոնտոսցի գաղթականների գլխավոր կենտրոնում: Այդ կազմակերպության առաքելությունը դարձավ պոնտոսյան [ազգային] ինքնության և ինքնագիտակցության ուսումնասիրությունը, զարգացումն ու տարածումը<sup>15</sup>: Խնդրո առարկա հիմնահարցի հետազոտության առումով ԿԵՊՈՄԵ–ի հիմնադրման և զործունեության հետ կապված մանրամասներն ունեն անկյունաքարային

<sup>14</sup> Պատահական չէ, որ «պոնտիերենը» կամ հունարենի պոնտոսյան բարբառը մտել է «Վտանգված լեզուների ՅՈՒՆԵՍԿՕ–ի կարմիր գրքի» մեջ: Տե՛ս UNESCO Red Book on Endangered Languages: Europe, [http://www.helsinki.fi/~tasalmin/europe\\_report.html#Polabian](http://www.helsinki.fi/~tasalmin/europe_report.html#Polabian)

<sup>15</sup> Այս առումով մեծ դերակատարություն էր վերապահված դրա հետ համագործակցող մշակութային կազմակերպություններին, որոնցից կարելի է առանձնացնել «Պանագիա Սումելա» և «Էվքսինոս լեսիսի» ընկերությունները: 1980–ական թթ. սկզբին նրանց գործունեությունը չէր սահմանափակվում միայն մշակութայինով, այլ ակտիվություն էր նկատվում նաև քաղաքական դաշտում, ուր նրանք քարոզչություն էին տանում PASOK–ի՝ Համահունակական սոցիալիստական շարժում կուսակցության օգտին:

նշանակություն: 1987 թ. հիշյալ կենտրոնի կողմից հրատարակվեց Մ. Խարալամպիդիսի և Կ. Ֆոտիադիսի համահեղինակությամբ գրված «Պոնտոսցիներ. Հիշողության իրավունք» խորագրով գիրքը<sup>16</sup>: Այս հրատարակության կարևորությունն այն է, որ դրանում շարադրված են պոնտոսցիների պայքարի բովանդակությունն ու հիմնական ուղղությունները:

Գրքի վերնագիրը պատահական չէր ընտրված. «Հիշողության իրավունք» բառակապակցությունն ինքնին արտացոլում էր պոնտոսյան գաղթականների մի քանի սերունդների շրջանում սեփական պատմության ընկալման առանձնահատկությունները: Ըստ գրքի հեղինակների՝ «հիշողության իրավունքը» պոնտոսցիների՝ «հիշելու» իրավունքն էր, այլ խոսքերով ասած՝ սեփական պատմության իմացության, այսինքն՝ այն քաղաքական և պատմական պատճառների, որոնք հույն ժողովրդի այդ հատվածի համար կանխորոշեցին ներկա իրադրությունը: Գրքում «հիշելը» դիտվում էր որպես պոնտոսցիների գոյության առաջին և հիմնական նախապայման<sup>17</sup>: Սա հիշողության սրբացման ակնհայտ դրսևորում էր, անգամ առաջին հայացքից փոքր-ինչ տարօրինակ ձևակերպում: Ինչի մասին է խոսքը: Նման ձևակերպման տրամաբանությունը «թաքնված» է պոնտոսյան խնդրի՝ ԿԵՊՈՄԵ-ի տեսաբանների ընկալման մեջ:

Գրքում Պոնտոսի խնդրի էության մեկնաբանության մեջ նշվում է, որ ԿԵՊՈՄԵ-ն, հակասության մեջ չմտնելով այլ կազմակերպությունների հետ, իր առջև խնդիր է դնում միավորելու Հունաստանում և արտասահմանում գործող պոնտոսցիների կազմակերպությունները, ծավալելու մշակութային, գիտահետազոտական և քաղաքական պայքար, որի գլխավոր նպատակն է դառնալու միջազգային հանրության կողմից պոնտոսցի ժողովրդի ցեղասպանության ճանաչումը, ինչպես նաև այն իրագործելու համար Թուրքիայի Հանրապետության դատապարտումը, որը Օսմանյան կայսրության ժառանգորդն ու իրավահաջորդն է<sup>18</sup>: ԿԵՊՈՄԵ-ի տեսաբանները, փաստորեն, ընդգծում էին, որ պոնտոսցիների գոյության երկրորդ հիմնական նախապայմանը

<sup>16</sup> Φωτιάδης, Κωνσταντίνος Ε.; Χαράλαμπίδης, Μιχάλης, Πόντιοι: Δικαίωμα στη μνήμη, Θεσσαλονίκη: Κέντρο Ποντιακών Μελετών, 1987. Նույնը քուլտերեն թարգմանությամբ՝ М. Харалампидис, К. Фотиадис, Понтийцы, Право на память, Салоники: Изд. «КЕПОМЕ», 2004.

<sup>17</sup> М. Харалампидис, К. Фотиадис, Понтийцы, Право на память, с. 6.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 7-8:

նրանց ցեղասպանության փաստի՝ միջազգային հանրության կողմից ճանաչումն է<sup>19</sup>:

«Հիշողության իրավունք» կոչվող շարժման բովանդակությունը, սակայն, շատ ավելի խոր և բաղադրյալ կառուցվածք ունի: Վերոնշյալն արտացոլում էր միայն այդ պայքարի առաջին շերտը: Պոնտոսցիների ներկա դրության բացատրությունն ու հարցերի պատասխանները կապվում էին Հունաստանի նորագույն պատմության մեջ արձանագրված երկու կարևոր իրադարձության հետ, որոնք կանխորոշեցին Պոնտոսի հույների ապագան: Դրանք են.

- 1930 թ. Հույն-թուրքական պայմանագիրը,
- Հունաստանի մուտքը ՆԱՏՕ, և «դրան հետևած «Թուրքիայի ամբողջականության» դոկտրինի ընդունումը»<sup>20</sup>:

Իհարկե, առանձին ուշադրություն է դարձվում Լոզանի պայմանագրին և դրա շրջանակներում ստորագրված «Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման վերաբերյալ» պայմանագրին: Այլ կերպ ասած՝ ընդգծվում էր այն փաստը, որ պոնտոսցիների շահերը հաշվի չեն առնվել Հունաստանի՝ վերոնշյալ ձեռնարկների ժամանակ, որ պոնտոսցի հույների խնդիրը դուրս է մնացել «մեծ քաղաքականությունից»: Այսինքն՝ պատմության վերաբերման մեջ ԿԵՊՈՄԵ-ի տեսաբաններն առաջարկում էին նաև Հունաստանի դերի վերաբերյալ ունենալ խիստ քննական մոտեցում: Պոնտոսցիները, փաստորեն, մեղադրում էին ոչ միայն Թուրքիային, այլև առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում այս հարցում Հունաստանի քաղաքականության քննադատությանը, որը հանգում էր հետևյալ կետերին.

- Հունաստանի արտաքին քաղաքականությամբ և վերոնշյալ պայմանագրերի հետ պայմանավորված «պատմության մոռացության» մոտեցումը,
- պոնտոսյան ինքնության աղավաղում և դրա դերի թերագնահատում, հետաքրքրության բացակայություն, թե ինչպես պահպանել նրանց մշակութային առանձնահատկությունը և իրավունքները,
- Հունաստանին՝ որպես կախյալ պետություն դիտարկելը, որն ամեն դեպքում չի ներկայացնում պոնտոսցիների շահերը: Որպես այս դրույթի հիմնավորում՝ նշվում էր, որ տասնամյակներ շարունակ Հունաստանի դպրոցներում

<sup>19</sup> М. Харалампидис, К. Фотиадис, Понтийцы, Право на память, с. 8.

<sup>20</sup> Ձևակերպումը տրվում է ըստ գրքի հեղինակների: Տե՛ս М. Харалампидис, К. Фотиадис, նշվ. աշխ., էջ 13:

պատմության դասագրքերում բացակայել է Փոքր Ասիայի հույների, այդ թվում՝ պոնտոսցիների պատմության ներկայացումը, որի դասավանդումը սկսվել է միայն 1986–1987 թթ. ուսումնական տարվանից<sup>21</sup>:

Ընդհանուր առմամբ, պոնտոսցի տեսաբանների և լոբբիստների քարոզարշավն առավել պարզունակ բնորոշելու դեպքում կարելի է այն համարել Պոնտոսի հույների՝ ցեղասպանության ճանաչմանն ուղղված պայքար, որի առաջին փուլը պատմության վերաարժևորումն էր: Այնուամենայնիվ, այս գործընթացը, կամ ինչպես ընդունված է ասել «Պոնտոսյան վերածնունդն» ուներ նաև արտաքին ազդեցությամբ պայմանավորված կողմ: Առաջին հերթին դա հունաստանյան ներքաղաքական հարմար իրադրությունն էր: 1981 թ. Հունաստանում «Համահունական սոցիալիստական շարժում» (հուն.՝ Πανελλήνιο Σοσιαλιστικό Κίνημα – ΠΑ.ΣΟ.Κ.) կուսակցության իշխանության գալուց և Անդրեաս Պապանդրեուի վարչապետ դառնալուց հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Այս կուսակցությունն ուներ ձախ կողմնորոշում, իսկ Անդրեաս Պապանդրուն աչքի էր ընկնում իր հակաամերիկյան և հակաթուրքական հայացքներով, իսկ որ ամենակարևորն է՝ այդ կուսակցության շարքերում բավական մեծ էր պոնտոսցի հույների թիվը: Այս հանգամանքն իր հերթին նպաստել է «Պոնտոսյան վերածննդին» և դրա գաղափարների տարածմանը: Այնուամենայնիվ, 1970–ական թթ. վերջին և 1980–ական թթ. «Պոնտոսյան վերածննդի» վրա մեծ ազդեցություն թողեց երկու կարևոր հանգամանք:

Այն նույն ժամանակ, երբ պոնտոսցիների մտավորական շրջանները խորհում էին պատմության վերարժևորման շուրջ, Հյուսիսային Ամերիկայում և Արևմտյան Եվրոպայում հրեաների Հոլոքոստի նկատմամբ հետաքրքրության նոր աճ էր նկատվում ինչպես գիտական դաշտում, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցների և մշակութային անդրադարձի առումով: Ասվածը մեծապես պայմանավորված էր այն փաստով, որ 1978 թ. ԱՄՆ-ի նախագահ Ջիմի Քարտերը ստեղծեց հանձնաժողով, որով ճանապարհի հարթվեց Միացյալ Նահանգներում Հոլոքոստի հուշային թանգարանի ստեղծման համար: Սա կարևոր ազդակ էր պոնտոսցի հույների համար, ովքեր տեսնում էին, թե ինչպես էին հրեաները իրենց ողբերգության միջազգայնացման հարցում մեծ հաջողություններ գրանցում:

<sup>21</sup> Տե՛ս M. Харалампидис, К. Фотиадис, նշվ. աշխ., էջ 23:



Երկրորդ և թերևս ավելի կարևոր հանգամանք է դարձել 1980–ական թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ակտիվացումը<sup>22</sup>: Առհասարակ Հայոց ցեղասպանության թեման միշտ գտնվել է պոնտոսցի լոբբիստների ուշադրության կենտրոնում: Չնայած Հոլոքոստի թեմայի միջազգայնացման փորձի՝ պոնտոսցիների համար ներկայացրած հետաքրքրությանը, այնուամենայնիվ, նրանց ուշադրությունն առավել քան ուղղված է եղել դեպի հայերի օրինակը: Այստեղ կարևորագույն հանգամանքն այն է, որ երկու ժողովուրդների փորձառությունն ավելի շատ ընդհանրություններ ուներ: Եվ պատահական չէ, որ պոնտոսցի տեսաբանները միշտ մատնանշել են հայերի փորձառությունը:

«Հայերի օրինակը» պետք է դիտարկել երկու ձևաչափով՝ ցեղասպանության գիտական ուսումնասիրություն և հարցի միջազգայնացում: ԿԵՊՈՄԵ–ի տեսաբանները հասկացան, որ նախ անհրաժեշտ է ապահովել հիմնահարցի ակադեմիական հենքը: Այս առումով մեծ աշխատանք կատարեց Սալոնիկի Արիստոտելի համալսարանի հույն ժողովրդի նոր պատմության մասնագետ Կոստանդին Ֆոտիադիսը՝ հեղինակելով «Պոնտոսի հույների ցեղասպանությունը» 14 հատորանոց աշխատությունը<sup>23</sup>: Այս ուսումնասիրությունն իսկապես կարելի է համարել Պոնտոսի հույների ցեղասպանության թեմայի վերաբերյալ առաջին հիմնարար աշխատությունը: Հետագայում լույս տեսան մի շարք այլ ուսումնասիրություններ<sup>24</sup>:

ԿԵՊՈՄԵ–ի տեսաբաններն ակտիվ պայքար սկսեցին նաև ցեղասպանության միջազգային ճանաչման առումով: Այդ ճանապարհին առաջին նվաճումը նախ «ներքին» ճանաչումն էր: 1994 թ. փետրվարի 24–ին Հունաստանի խորհրդարանը որոշում ընդունեց, որի համաձայն՝ ճանաչում էր Պոնտոսի հույների ցեղասպանությունը, իսկ մայիսի 19–ը հռչակվեց «Պոնտոսի հույների ցեղասպանության հիշատակի օր»<sup>25</sup>: Օրինագիծն առաջ քաշվեց

<sup>22</sup> Այս առումով կարևոր է հատկապես 1987 թ. հունիսի 18–ի Եվրախորհրդարանի որոշումը, [http://www.armenian-genocide.org/Affirmation.152/current\\_category.7/affirmation\\_detail.html](http://www.armenian-genocide.org/Affirmation.152/current_category.7/affirmation_detail.html)

<sup>23</sup> Աշխատությունը գրվել է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բուլղարիայի, Ռուսաստանի և Հունաստանի արխիվներում բազմամյա ուսումնասիրությունների արդյունքում (Փωτιάδης Κ. Η γενοκτονία των Ελλήνων τω Πόντου, 14 τόμοι. Θεσσαλονίκη: Ηρόδοτος 2002–2006):

<sup>24</sup> Տե՛ս, օրինակ, Μακρίδης Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Λευκωσία: Εκδόσεις Αιγαίον, 2010:

<sup>25</sup> Bruneau, Michel & Kyriakos Papoulidis, “La memoire des ‘patries inoubliables’: la

պոնտոսյան ծագում ունեցող պատգամավորների կողմից՝ ստանալով ծայների բացարձակ մեծամասնությունը<sup>26</sup>: Իհարկե, նման հաջողությունը պայմանավորված էր նաև ՊԱՍՈԿ–ի իշխանության գտնվելու փաստի հետ<sup>27</sup>:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում պոնտոսցի լոբբիստները շարունակում են իրենց գործունեությունը Պոնտոսի հույների ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Այստեղ, սակայն, պետք է ընդգծել այն փաստը, որ այս գործընթացում հույներն օգտվել և շարունակում են օգտվել հայկական փորձից: Այս հանգամանքը լավագույնս փաստում է Կե–ՊՈՄԵ–ի տեսաբաններից Մ. Խարալամբիդիսի դիտարկումը, որի համաձայն՝ հայկական սփյուռքի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված պայքարը մեծապես ոգեշնչել է և քաջալերել է պոնտոսցիներին, որ մայիսի 19–ն իրենց ապրիլի 24–ն է, իրենց հիշատակի օրը. դա իր հերթին նման ոգևորություն է առաջացրել նաև զմյուռնիացի հույների և ասորիների մոտ<sup>28</sup>:

Չնայած թեմայի վերաբերյալ հունարենով առկա հսկայական գրականությանը՝ այնուամենայնիվ, արևմտյան գիտական շրջաններում լեզվական խնդիրների պատճառով դա հասանելի է քչերին: Ուստի պոնտոսցի լոբբիստները սկսել են մեծ ուշադրություն դարձնել արևմուտքում անգլիալեզու հրատարակություններին զարկ տալուն: Վերջին տարիներին նկատվում է Պոնտոսի հույների տեղահանությունների և կոտորածների թեմայի ուսումնասիրության նոր ակտիվացում, որի համար մեծ աշխատանք են տանում ԱՄՆ–ի հունական կազմակերպությունները: Այս առումով ակտիվ է հատկապես ԱՄՆ–ի Չիկագո քաղաքի «Փոքրասիական և պոնտոսյան ուսումնասիրությունների հունական կենտրոնը»: Արդեն մի քանի տարի է, ինչ կազմակերպվում են

construction de monuments par les refugies d’Asie Mineure en Grece”, Vingtième Siècle. Revue d’histoire, 78, 2003, p. 40.

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Չնայած պոնտոսցի լոբբիստների ջանքերին՝ Պոնտոսի հույների ցեղասպանության ճանաչման խնդիրն այդպես էլ չմտավ Հունաստանի արտաքին քաղաքականության օրակարգ: 1998 թ. Հունաստանի խորհրդարանը նոր որոշում ընդունեց, որի համաձայն՝ սեպտեմբերի 14–ը հռչակվեց որպես Թուրքական պետության կողմից Փոքր Ասիայի հույների ցեղասպանության հիշատակի ազգային օր: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ փորձ էր արվում ուղղում մտցնելու և ճանաչման մեջ ներառելու նաև Փոքր Ասիայի հույներին: St u Bruneau, Michel & Kyriakos Papoulidis, “La memoire des ‘patries inoubliables’...”, p. 40:

<sup>28</sup> Փωτιάδης, Κωνσταντίνος Ε.; Χαράλαμπίδης, Μιχάλης, Πόντιοι: Δικαίωμα στη μνήμη, Αθήνα: Γόρδιος, 2003, σ. 141–142.

միջազգային գիտաժողովներ, որոնցից շատ կարևոր էր 2010 թ. Ռոուսմոնտի (Իլինոյս, ԱՄՆ) միջազգային գիտաժողովը: Այստեղ ուրվագծվեցին ակադեմիական մարտավարության հիմնական ուղղությունները՝ հետազոտական կենտրոնի ստեղծում, Փոքր Ասիայի՝ 1908–1923 թթ. պատմությանն առնչվող կարևոր գրքերի վերատպում, կարևորագույն փաստաթղթերի և գրքերի՝ հունարեն–նից անգլերեն թարգմանություն, նոր գրադարանի հիմնում, որտեղ կպահվեն թեմային առնչվող կարևորագույն գրականություն և Չիկագոյի հայկական շրջանների հետ համագործակցություն<sup>29</sup>: 2012 թ. լույս տեսավ գիտաժողովի զեկուցումների (հոդվածների տեսքով) ժողովածուն, որը ներառում է ցեղասպանագիտության անվանի մի շարք մասնագետների հետազոտություններ: Կարևոր է ընդգծել այն փաստը, որ այս ժողովածուն Հույների ցեղասպանության վերաբերյալ անգլերեն առաջին խոշոր հատորն է<sup>30</sup>: Դրան զուգահեռ Չիկագոյի «Փոքրասիական և պոնտոսյան հետազոտությունների հունական կենտրոնը» վերջին երեք տարվա ընթացքում հրատարակել է մի քանի գիրք ևս<sup>31</sup>: 2013 թ. մայիսին Չիկագոյի Սկոկի արվարձանում տեղի ունեցավ հերթական գիտաժողովը, որն ուներ ավելի ներկայացուցչական կազմ: Այդ անգամ ևս ընդգծվել է ինչպես հայկական, այնպես էլ ասորական կազմակերպությունների հետ համագործակցելու անհրաժեշտությունը<sup>32</sup>:

Այսպիսով՝ Հունաստանի պոնտոսցի գաղթականների վերածնունդը, 1980–ական թթ. հստակեցնելով իր պայքարի նպատակները և ուղղությունները, մասնավորապես հույների ցեղաս-

<sup>29</sup> Տե՛ս [http://www.pontiangreeks.org/images/stories/Nov\\_2010\\_conference\\_report11.pdf](http://www.pontiangreeks.org/images/stories/Nov_2010_conference_report11.pdf)

<sup>30</sup> The Asia Minor Catastrophe and the Ottoman Greek Genocide: Essays on Asia Minor, Pontos, and Eastern Thrace, 1913–1923, edited by George N. Shirinian, Bloomington, IL: The Asia Minor and Pontos Hellenic Research Center, Inc., 2012. Գրքի գրախոսականը տե՛ս <http://www.hellenicresearchcenter.org/index.php/historical-books/book-review-by-elaine-thomopoulos>

<sup>31</sup> Դրանց մի մասը կարևոր գրքերի թարգմանություն կամ վերատպություն է: Տե՛ս, օրինակ, Harry J. Psomiades, Fridtjof Nansen and the Greek Refugee Crisis 1922–1924: A Study on the Politics of International Humanitarian Intervention and the Greek–Turkish Obligatory Population Exchange Agreement, Chicago: The Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2011; Edward Hale Bierstadt, The Great Betrayal: Economic Imperialism and the Destruction of Christian Communities in Asia Minor. Chicago: Pontian Greek Society of Chicago, 2008. (Reprinted by The Pontian Greek Society of Chicago. First published in 1924).

<sup>32</sup> Գիտաժողովի մասին ավելի մանրամասն տե՛ս [http://hellenicresearchcenter.org/images/International\\_Conference\\_Press\\_Release\\_2.pdf](http://hellenicresearchcenter.org/images/International_Conference_Press_Release_2.pdf)

պանության միջազգային ճանաչման հարցում, այսօր արդեն արձանագրել է մի շարք նվաճումներ:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՊՈՆՏՈՍԻ ԽՆԴԻՐԸ»**

Լոզանի պայմանագրի ստորագրումից սկսած մինչև մեր օրերը Հունաստան–Թուրքիա հարաբերությունները ժամանակ առ ժամանակ սրվել են երկու պետությունների միջև առկա բազմաթիվ հարցերի կապակցությամբ<sup>33</sup>: Սակայն Պոնտոսի հարցը երբեք չի ներառվել այդ վիճահարույց հարցերի մեջ: Դա, թերևս, բացատրվում է Հունաստանի կողմից՝ Պոնտոսի հույների կոտորածները ցեղասպանություն որակելու պահանջի բացակայությամբ:

Չնայած Հունաստանի՝ հարցի վերաբերյալ ունեցած պաշտոնական դիրքորոշմանը՝ վերջին երկու տասնամյակների ընթացքում նկատվում է պոնտոսցի լրբբիստների կողմից Թուրքիայի վրա ճնշում գործադրելուն ուղղված ակնհայտ քայլեր, որոնք լուրջ անհանգստություն են պատճառում թուրքական կառավարող շրջաններին: Չնայած այդ պայքարն ուղղորդվում և ղեկավարվում է Հունաստանում գործող կազմակերպությունների կողմից, սակայն աշխատանքների զգալի մասը կատարվում է հունական սփյուռքում: Գլխավոր թիրախը Հույների ցեղասպանության ճանաչումն ու պահանջատիրությունն է: Դրան զուգահեռ կան նաև այլ խնդիրներ, մասնավորապես Թուրքիայում իսլամացված հույների<sup>34</sup> և հունական մշակութային ժառանգության հարցը: Այս առումով հատկանշական են Տրապիզոնի շրջանի Սումելա վանքի հետ կապված վերջին զարգացումները. 2010 թ. Թուրքիայի կառավարությունը թույլ տվեց Տիեզերական պատրիարքարանին պատարագ մատուցել նշված վանքում: Չնայած թուրքական մի շարք կուսակցությունների կողմից բացասական արձագանքների<sup>35</sup> այնուամենայնիվ, ինչպես այս, այնպես էլ Ախթամարի

<sup>33</sup> Այդ խնդիրներից պետք է առանձնացնել 1955 թ. Կ. Պոլսի հույների պոգրոմը, 1974 թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային հատվածի բռնազավթումը, «Էզեյան վեճը» և այլն:

<sup>34</sup> Առաջին աշխարհամարտի տարիներին բազմաթիվ հույներ հայերի նման կրոնափոխ եղան, որպեսզի փրկվեն: Այս երևույթը մեծ չափերով է դրսևորվել Պոնտոսում և հատկապես Կոլոնիա–Նիկոպոլիս հատվածում (Մեքսատիայի նախկին վիլայեթի Շապին Գարահիսարի շրջան): Տե՛ս Μακρίδης Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Λευκωσία: Εκδόσεις Αιγάζιον, 2010, σελ. 199:

<sup>35</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Պատարագի թույլտվություն Սյումելա վանքում, <http://akunq.net/am/?p=2942>

Սուրբ Խաչ եկեղեցու հետ կապված գործընթացը Թուրքիայի իշխող կուսակցության կողմից կազմակերպված ներկայացում էր<sup>36</sup>, նաև իրենց «բարի կամքն ու հանդուրժողականությունն» արտաքին աշխարհին ցույց տալու փորձ<sup>37</sup>: Սակայն, մեծ հաշվով, քննարկվող հիմնահարցի տեսանկյունից այն դժվար է ներկայացնել որպես նշանակալի երևույթ:

Թուրքական իշխանությունները պաշտոնական մակարդակով ժամանակ առ ժամանակ ցուցադրում են իրենց խիստ բացասական վերաբերմունքը Պոնտոսի խնդրի առնչությամբ: Բնութագրական է 2006 թ. վարչապետ Ռ. Թ. Էրդողանի կոշտ արձագանքը՝ կապված Սալոնիկում պոնտոսցի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի բացման հետ, կամ 2007 թ. հունվարին այն ժամանակվա արտգործնախարար Ա. Գյուլի հայտարարությունը, որով պոնտոսյան ժողովրդական պարերը համարում էր թուրքական<sup>38</sup>:

Թուրքիային անհանգստացնում է հույների կոտորածները ցեղասպանություն որակելուն ուղղված պոնտոսցիների շարունակական հաջողությունները<sup>39</sup>: Այս առումով առանցքային նշանակություն ունեցավ Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության կողմից 2007 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված բանաձևը, որում մասնավորապես նշվում էր, որ Թուրքիայում 1914–1923 թթ. հայերի, ասորիների, Պոնտոսի և Անատոլիայի հույների դեմ իրագործված քաղաքականությունը որակվում է որպես ցեղասպանություն<sup>40</sup>: Դրան հետևեց Շվեդիայի խորհրդարանի կողմից ճանաչումը (հայերի և ասորիների ցեղասպանությունների հետ միասին)<sup>41</sup>: Թուրքիայի կոշտ արձագանքը չուշա-

<sup>36</sup> Հայերը չպետք է մասնակցեն Ախթամար կղզու թուրքական շոուին, <http://www.panarmenian.net/arm/news/52492/>

<sup>37</sup> Չնայած այս իրողությանը՝ Հունաստանի Արտաքին գործերի նախարարության կայքէջում հույն-թուրքական հարաբերություններին և պոնտոսյան հույներին նվիրված հաղորդման մեջ թուրքական իշխանությունների այս քայլը գնահատվում է որպես դրական զարգացում կրոնական ազատությունները հարգելու տեսանկյունից, <http://www.mfa.gr/en/issues-of-greek-turkish-relations/relevant-documents/the-greek-minority-and-its-foundations-in-istanbul-gokceada-imvros-and-bozcaada-tenedos.html?page=4>

<sup>38</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Malkidis Th., *The Greeks of Euxinus Pontus (Bleak Sea). History and Genocide*, Stockholm: Greek Culture Center in Sweden, 2009, p. 27:

<sup>39</sup> Խոսքը վերաբերում է ԱՄՆ-ի մի շարք նահանգային և քաղաքային իշխանությունների կողմից ճանաչմանը:

<sup>40</sup> <http://www.aina.org/news/20071215131949.htm>

<sup>41</sup> [http://www.genocide-museum.am/eng/Sweden\\_Parliament\\_Resolution.php](http://www.genocide-museum.am/eng/Sweden_Parliament_Resolution.php)

ցավ. վարչապետ Ռեջեփ Թաիբ Էրդողանը չեղյալ հայտարարեց իր այցը Ստոկհոլմ, ավելին՝ թուրքական դեսպանը հետ կանչվեց Ստամբուլ<sup>42</sup>: Այս երկու ճանաչումների առանձնահատկությունն այն է, որ եթե նախկինում Թուրքիան ստիպված էր պայքարել միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ, ապա դրան ավելացավ նաև հույների և ասորիների խնդիրը:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի համար խնդիրը բարդանում է նաև նրանով, որ արտասահմանում գործող հունական լուր-բիստական կազմակերպություններն ակտիվ համագործակցում են հայկական և ասորական կազմակերպությունների հետ: Այս առումով ամենավերջին զարգացումն Ավստրալիայում էր: 2013 թ. մայիսին Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանը ճանաչեց հույների և ասորիների ցեղասպանությունները (հայերինը ճանաչվել էր դեռևս 1997 թ.)<sup>43</sup>: Չնայած հնչեցված սպառնալիքներին՝ կապված այն բանի հետ, որ կարգելի ավստրալիացի պատգամավորներին մասնակցել ԱՆՁԱԿ-ի<sup>44</sup> հիշատակի օրվա միջոցառումներին, Թուրքիան կանգնած էր փաստի առջև: Այն, որ նշված իրադարձություններին Թուրքիայի կողմից տրվող նշանակությունը մեծ է, ևս մեկ անգամ երևաց 2013 թ. երկրորդ կեսին: Չհաշտվելով ավստրալական «մարտադաշտում» կրած պարտության հետ՝ թուրքական իշխանությունները փորձեցին ակտիվացնել արևմտյան ակադեմիական շրջանների՝ իրենց համար աշխատող մասնագետներից Ջասթին Մրքքարթիին: Աշնանն ուղևորվելով Ավստրալիա (այցելու պրոֆեսոր)՝ Մրքքարթին փորձեց հանրային դասախոսությունների միջոցով ավստրալական հանրությանը ներկայացնել պատմության թուրքական վարկածը: Այսպես, նոյեմբերի կեսին Մելբուռնի համալսարանում նախատեսված էր հանդիպում-սեմինար, որը կրելու էր «Ինչ է

<sup>42</sup> <http://www.thelondondailynews.com/turkey-goes-into-dark-ages-mode-following-armenian-expulsion-threat-p-3904.html>

<sup>43</sup> NSW parliament recognises Greek genocide, <http://neoskosmos.com/news/en/NSW-parliament-recognises-Greek-genocide>

<sup>44</sup> ANZAC – Australian and New Zealand Army Corps, Ավստրալական և նորզելանդական բանակային կորպուս): 1915 թ. ապրիլի 25-ին ԱՆՁԱԿ-ի ուժերը ափ իջան Գալիպոլի Բրիտանական հրամանատարության ներքո մասնակցելու ռազմական գործողություններին: Չնայած ունեցած մեծ կորուստներին դա դարձավ նրանց մարտական մկրտությունը: Իր հերթին այդ իրադարձություններին մեծ նշանակություն է տրվում նաև Թուրքիայում: Ամեն տարի Ավստրալիայից և Նոր Զելանդիայից բազմաթիվ մարդիկ են գալիս Թուրքիա մասնակցելու հիշատակի արարողությանը: ԱՆՁԱԿ-ի օրվա հիշատակումը դարձել է ավստրալացիների և նորզելանդացիների պատմական հիշողության անքակտելի մասը:

տեղի ունեցել 1915–1923 թթ.» խորագիրը, իսկ երկրորդ դասախոսությունը պետք է տեղի ունենար Նոր Հարավային Ուելսի Գեղարվեստի թանգարանում (Սիդնեյ): Սակայն երկու միջոցառումներն էլ չեղյալ հայտարարվեցին այդ հաստատությունների ղեկավարությունների կողմից տրված տարբեր պատճառաբանություններով<sup>45</sup>: Այստեղ, իհարկե, ակնհայտ էր ինչպես հայկական, այնպես էլ հունական և ասորական լրբիստական կազմակերպությունների աշխատանքը: Ի վերջո Մըքքարթին հաջողացրեց հանդիպում ունենալ Ավստրալիայի Դաշնային խորհրդարանի պալատներից մեկում: Չնայած հրավիրյալների մեծ թվին՝ հանդիպմանը ներկա են եղել խիստ սահմանափակ թվով մարդիկ, այն էլ Ավստրալիայի թուրքական սփյուռքի ներկայացուցիչներ, Թուրքիայի դեսպանն ու դեսպանատան աշխատակիցներ<sup>46</sup>:

Այն, որ Պոնտոսի հույների խնդրի արձարծումը տարեցտարի նոր մարտահրավերներ է նետում Թուրքիայի Հանրապետությանը, արդեն վաղուց իրողություն է: Իրականում թուրքական իշխանությունները վաղուց են հասկացել դրանում ամփոփված վտանգները<sup>47</sup>: Թերևս դրանով կարելի է բացատրել դեռ տա-

<sup>45</sup> Two Events Featuring Genocide Denier Canceled In Australia <http://asbarez.com/116413/two-events-featuring-genocide-denier-canceled-in-australia/>

<sup>46</sup> Այս միջոցառումների կազմակերպման գործում մեծ դեր ունեւր Ավստրալիայի թուրքական իրավապաշտպան միությունը: <http://www.ata-a.org.au/search/label/Prof%20Justin%20McCarthy>

<sup>47</sup> Պոնտոսի հույների խնդիրը Թուրքիայում միշտ էլ «զգայուն» է ընկալվել: Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներ փաստում են, որ Միություն և առաջադիմություն կուսակցությունը և կառավարող վերնախավը նպատակ են ունեցել հայերից հետո հաշվեհարդար տեսնելու հույների հետ: Մասնավորապես, ըստ գերմանացի հոգևորական Յ. Լեփսիուսի՝ Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի անդամները հաճախ են հրապարակայնորեն հայտարարել, որ «օտարականները պետք է աներեւոյթ ըլլան Թուրքիայէն, նախ Հայերը, յետոյ Յոյները, յետոյ Հրեաները և ամենէն վերջը Եւրոպացիները» (տե՛ս Ե. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր. Հայաստանի ջարդերը (թարգմ. Մ. Շամտանճեան), Կ. Պոլիս, 1919, էջ 242–243): Դրա օգտին է խոսում նաև Ա. Անտոնյանի հրապարակած՝ երիտթուրքերի կենտրոնական կոմիտեից Ադանայի վիլայեթում կուսակցության պատասխանատու ներկայացուցչին ուղղված երկրորդ նամակը՝ թվագրված 1915 թ. մարտի 25–ով: Ըստ Անտոնյանի՝ դա կրկնությունն է առաջին՝ փետրվարի 18–ի նամակի, սակայն այն տարբերությամբ, որ ցույց է տալիս՝ հայերից հետո երիտթուրքերը պետք է զբաղվեին հպատակ մյուս ժողովուրդների՝ հույների, սիրիացիների բնաջնջմամբ (տե՛ս Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Եր., 1990, էջ 134–137): Պետք է ընդգծել, որ Պոնտոսի հույների թեման դեռևս այդ տարիներին արդեն մեծ արձագանքներ էր ստացել Արևմուտքում, հատկապես ԱՄՆ–ում: Ուշագրավ է Յուբայի նահանգը ներկայացնող սենատոր Ուիլյամ Քինգի՝ 1921 թ. դեկտեմբերի ելույթը ԱՄՆ–ի Սենատում, որի ժամանակ նա բոլորի ուշադրությունը հրավիրեց այն

րիներ առաջ Աթաթյուրքի հետազոտական ինստիտուտի կողմից անգլերեն հրատարակված «Պոնտոսի հարցը և Հունաստանի քաղաքականությունը» հատորը<sup>48</sup>: Գիրքը կազմվել է պետական պատվերով և ընդհանուր առմամբ արտահայտում է Թուրքիայի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը: Ավելին, դրանում ամփոփված հիմնական դրույթները տեղ են գտել Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում<sup>49</sup>:

Գրքում Պոնտոսի հույների խնդիրը մեկնաբանվում է կողմնակալ և աղավաղված: Այսպես, Պոնտոսի խնդրի ծագումը կապվում է գլխավորապես Կիպրոսի հարցի հետ՝ ընդգծելով այն փաստը, որ դրանով Հունաստանը փորձում է դիպչել Թուրքիայի տարածքային ամբողջականությանը: Ավելին, նշվում է, որ իբր Պոնտոսի հարցը Հունաստանն օգտագործում է Աթաթյուրքի կերպարը վարկաբեկելու, միջազգային հանրությանը մոլորության մեջ գցելու և հակաթուրքական տրամադրություններ տարածելու համար: Հունաստանը մեղադրվում է Քրդական բանվորական կուսակցության ահաբեկչական գործունեության նկատմամբ կողմնակալ դիրքորոշում ունենալու մեջ, այն է՝ դա ներկայացնել որպես ազգային ազատագրական պայքար, անգամ համագործակցել քրդերի հետ և այլն<sup>50</sup>: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ եթե անգամ հաշվի չառնենք բոլոր իրադարձությունների միակողմանի դիտարկումը (կարելի է առանձնացնել այն իրողությունը, որ հույների կոտորածները ներկայացվում է որպես թուրքերի կոտորածներ), թուրքական կողմն այս ամենի գլխավոր մեղավոր համարում է Հունաստանին: Պոնտոսի խնդրի

---

բանի վրա, թե ինչ աղետալի վիճակում են հայերն ու հույները (ավելի մանրամասն տե՛ս King W. H., Turkish Atrocities in Asia Minor, Washington: United States Government Printing Office, 1992): Պոնտոսի խնդրի վերաբերյալ այդ տարիներին ԱՄՆ-ում տեղի ունեցած արձագանքների մասին ավելի մանրամասն տե՛ս Stavros T. Stavridis, From Smyrna to Mudania September–October 1922: Greek Reactions in U.S. and Greece <http://www.helleniccomserve.com/stavridisgreekreaction.html>

<sup>48</sup> Դրանում ամփոփված են պատմագիտության դոկտորներ Յուսուֆ Սարընայի, Համիդ Փեհլիվանըի, Աբդուլահ Սալդամի աշխատանքները, որոնք նվիրված են Պոնտոսի խնդրի հետ կապված որոշ հիմնահարցերի ուսումնասիրությանը: Տե՛ս The Pontus issue and the policy of Greece (pub. and prep. by Berna Türkdogan), Ankara: Atatürk Research Center, 2000:

<sup>49</sup> Setting The Record Straight On Pontus Propaganda Against Turkey, <http://www.mfa.gov.tr/setting-the-record-straight-on-pontus-propaganda-against-turkey.en.mfa>

<sup>50</sup> Նույն տեղում:



հետ կապված բոլոր զարգացումները մեկնաբանվում են Հունաստանի քաղաքականության տեսանկյունից, ինչն ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը: Հաշվի չեն առնվում Պոնտոսի խնդրի ներքին՝ բովանդակային կողմը, դրա առաջացման օբյեկտիվ պատճառները և այլ կարևոր հանգամանքներ:

Այսպիսով՝ Հունաստանում հաստատված պոնտոսցի գաղթականների սերունդների շրջանում XX դարի 60-ական թթ. սկսված սեփական պատմության վերաբժևորման, պատմական արդարության վերականգնման համար մղված շարժումն այսօր լուրջ խնդիր է դարձել Թուրքիայի արտաքին քաղաքականության համար: Պոնտոսյան վերածննդի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև դրա սկզբնավորումն ու ծավալումը, ունենալով որոշակի ներքին սուբյեկտիվ առանձնահատկություններ, այնուամենայնիվ, կրում է խոր պատմական հենք և մեծ հաշվով դարասկզբին տեղի ունեցած Փոքրասիական աղետի՝ հետագա սերունդների պատմական հիշողության արտացոլումն է: Պայքարի գլխավոր նպատակակետ դարձնելով Պոնտոսի հույների ցեղասպանության միջազգային ճանաչումը, Թուրքիայի պատասխանատվությունը և պատմական արդարության վերականգնումը, պոնտոսյան լրբբիստական կազմակերպությունները համագործակցում են հայկական և ասորական կառույցների հետ՝ Թուրքիայի համար առաջացնելով նոր մարտահրավերներ: Եթե նախկինում Թուրքիայի պայքարը «մեկ ճակատում» էր՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ, ապա վերջին շրջանում դրան ավելացել է նաև «երկրորդ»՝ պոնտոսյան և անգամ «երրորդ»՝ ասորական խնդիրները:

**«ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» (TİKA).  
ՍՏԵՂՃՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ**

1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումն առաջացրեց աշխարհաքաղաքական նոր իրադրություն, որի պայմաններում Թուրքիան սկսեց ակտիվ քաղաքականություն վարել՝ նպատակադրվելով ազդեցության հասնել հետխորհրդային տարածաշրջանում: Թուրքիայի դեկավարությունը նախաձեռնություն ցուցաբերեց բազմակողմանի համագործակցություն հաստատել հետխորհրդային թյուրքախոս երկրների հետ, ուստի համապատասխան գործառույթներ տրվեցին պետական հաստատություններին, այդ թվում՝ դրանց կից հատուկ նպատակով ստեղծված մարմիններին: Վերջինները նույնպես պետք է նպաստեին Թուրքիայի տնտեսական, քաղաքական և մշակութային ծրագրերի իրականացմանը: Այդպիսի կազմակերպություններից էր 1992 թ. հունվարի 27-ին Արտաքին գործերի նախարարությանը կից հիմնադրված «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալությունը» (Türk İşbirliği ve Kalkınma Ajansı-TİKA)<sup>1</sup>:

TİKA-ի հիմնադրման օրվանից նրան վերապահվեց կարևոր դեր՝ այն պետք է նպաստեր հետխորհրդային, բալկանյան, մերձավորարևելյան և աֆրիկյան տարածաշրջաններում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, որով կբարձրանար նրա նշանակությունը և կընդգծվեր կարևորությունն Արևմուտքի համար: Չնայան որ TİKA-ն մտնում էր ԱԳՆ-ի կազմի մեջ, սակայն ուներ իրավաբանական անձի կարգավիճակ և ինքնուրույն բյուջե: Իսկ

<sup>1</sup> Resmi Gazete, 27 Ocak 1992.

2001 թ. մայիսի 10-ից TİKA-ն մտավ նոր ձևավորված Թյուրքական համագործակցության ու զարգացման ղեկավարման վարչության (Türk İşbirliği ve Kalkınma İdaresi Başkanlığı) կազմի մեջ<sup>2</sup>, որին էլ կից ստեղծվեց Տնտեսական կոորդինացիոն խորհուրդը: Վերջինիս հիմնական խնդիրն էր Թուրքիայի տնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը կենտրոնասիական, կովկասյան և մյուս տարածաշրջաններում: Պետք է նշել, որ խորհրդի աշխատանքներին մասնակցում են երկրի տնտեսական հարցերով զբաղվող պետական մարմիններն ու նախարարությունները, այդ թվում՝ բանկերը:

TİKA-ն ֆինանսավորվում է հիմնականում թուրքական կառավարությունից, բանկերից և միջազգային կազմակերպություններից: Վերջինների շարքում ամենամեծ ներդրողը համարվում է Էքսիմբանկը: 1990-ական թթ. սկզբին կազմակերպությունն իր կենտրոններն ուներ հիմնականում թյուրքալեզու երկրներում, սակայն հետագայում նրա աշխարհագրությունն ընդլայնվեց՝ ընդգրկելով Բալկանների, Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի որոշ երկրներ: Նշված տարածաշրջաններում TİKA-ն ներկայումս ունի 40 ներկայացուցչություններ<sup>3</sup>, իսկ ավելի քան 100 երկրներում իրականացրել է տարաբնույթ ծրագրեր: TİKA-ն իր կենտրոնների ու ներկայացուցչությունների միջոցով տեղեցրում կազմակերպում և իրականացնում է մի շարք ծրագրեր ու միջոցառումներ, որոնք ընդգրկում են ամենատարբեր բնագավառները: Ըստ այդմ, TİKA-ն հիմնականում գործունեություն է ծավալում կրթության, մշակույթի, առողջապահության, ծառայությունների, գյուղատնտեսության, էներգետիկայի, զբոսաշրջության, ֆինանսական, բանկային և այլ բնագավառներում<sup>4</sup>: Կազմակերպության ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում կրթության ու մշակույթի բնագավառներին, հատկապես թյուրքախոս երկրների հետ համագործակցության համատեքստում:

Թուրքական կառավարությունը 1990-ական թթ. սկզբին TİKA-ի առջև դրել էր երկու հիմնական խնդիր. առաջին՝ նպաստել հնարավորինս սերտ համագործակցության (ներառյալ հու-

<sup>2</sup> Resmi Gazete, 12 Mayıs 2001.

<sup>3</sup> Ասիայի, Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի երկրներում TİKA-ի կենտրոնների ու ներկայացուցչությունների ընդհանուր ցանկը տե՛ս գործակալության պաշտոնական կայքէջում, <http://www.tika.gov.tr/tr/koordinatordlukler>, 2014-11-10.

<sup>4</sup> [www.tika.gov.tr/faaliyet-alanlari/2](http://www.tika.gov.tr/faaliyet-alanlari/2), 2014-11-25.

մանիտար և այլ բնույթի օգնությունը) հաստատմանն ու զարգացմանը հետխորհրդային թյուրքախոս երկրների, նաև Ռուսաստանի ինքնավար շրջանների, Մոլդովայի, Ուկրանիայի և հարևան երկրների հետ, երկրորդ՝ ակտիվորեն մասնակցել Կովկասի ու Կենտրոնական Ասիայի երկրների հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունների հաստատմանը, այս ճանապարհով նպաստել այդ երկրների արագ ինտեգրմանն արևմտյան համակարգին և միջազգային կազմակերպություններին: Նպատակն էր խրախուսել, որ Թուրքիայի միջնորդությամբ այս երկրները համագործակցեն Արևմուտքի հետ, ինչն էլ իր հերթին ենթադրում էր Թուրքիային վերածել կամուրջ երկրի՝ կապելով Արևմուտքն ու Արևելքը<sup>5</sup>: Փաստորեն TİKA-ի հիմնական խնդիրն էր աջակցել հետխորհրդային երկրների հետ տարբեր բնագավառներում համագործակցության զարգացմանը՝ ներառյալ տարբեր չափերի օգնության տրամադրումը:

TİKA-ն ուշադրություն դարձրեց տնտեսական ու սոցիալական բնագավառներին՝ մեծ տեղ հատկացնելով տեխնիկական աջակցությանը: Այսպես՝ 1999 թ. վերջին TİKA-ն տեխնիկական օգնության և համագործակցության ավելի քան՝ 270 ծրագրեր իրականացրեց տարբեր երկրներում, այդ թվում Կովկասի և Կենտրոնական Ասիայի<sup>6</sup>: TİKA-ն իր տնտեսական գործունեությամբ փորձում է նպաստել ազատ շուկայական տնտեսության զարգացմանը, հատկապես հետխորհրդային և աֆրիկյան երկրներում: Այդ նպատակով էլ կազմակերպությունն աջակցում է տարբեր ոլորտների մասնագետների վերապատրաստմանը՝ ցույց տալով անհրաժեշտ իրավաբանական օգնություն: Սա ենթադրում էր ոչ միայն այդ երկրներից երիտասարդների կրթության կազմակերպումը թուրքական բուհերում, այլև վերապատրաստման տարբեր ծրագրերի իրականացում: Մեծ ուշադրություն դարձվեց փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծմանը՝ նկատի ունենալով դրանց տնտեսական ու սոցիալական կարևոր դերը: Պաշտոնական տվյալներով 1992–2003 թթ. TİKA-ի վերապատրաստման ծրագրերի շրջանակներում Թուրքիայի կրթական տարբեր հաստատություններում ընդհանուր և մասնագի-

<sup>5</sup> Е. Уразова, "Турецкое агентство по сотрудничеству и развитию (TİKA): новые задачи", Турция накануне и после парламентских и президентских выборов 2007, М., 2008, с. 182.

<sup>6</sup> O. Baskın, Türk Dış Politikası, Cilt II. 1980–2001, İstanbul, İletişim Yayınları, 2001, s. 382.

տական կրթություն են ստացել 18 հազար մարդ, այդ թվում՝ ընդհանուր կրթություն է ստացել 10 հազար, իսկ մասնագիտական՝ 8 հազար մարդ: Մասնակիցների հիմնական մասը եկել է կենտրոնասիական, կովկասյան և բալկանյան երկրներից<sup>7</sup>:

TİKA-ի ղեկավարությունը, փորձելով նպաստել ազատ շուկայական տնտեսության կազմակերպմանը, ուշադրություն դարձրեց ֆինանսաբանկային համակարգի զարգացման խնդիրներին: Այդ նպատակով 1993 թ. նշված ոլորտի մասնագետների համար սկսեց կազմակերպել հատուկ մասնագիտական դասընթացներ: Բարձր մակարդակն ապահովելու համար մասնագետներ հրավիրվեցին Ճապոնիայից: 1993–2000 թթ. ընթացքում վերոնշյալ դասընթացներին մասնակցեցին ֆինանսաբանկային ոլորտի հարյուրավոր աշխատողներ, այդ թվում՝ 168–ը՝ Ադրբեյջանից, 136–ը՝ Թուրքմենստանից, 80–ը՝ Ուզբեկստանից, 76–ը՝ Ղազախստանից, 59–ը՝ Ղրղզստանից և այլն<sup>8</sup>: TİKA-ն ֆինանսական և բանկային հարցերով ավելի ակտիվ է հետխորհրդային թյուրքալեզու երկրներում, որտեղ քայլեր ձեռնարկեց ֆինանսական համակարգի ձևավորման ուղղությամբ<sup>9</sup>: Այս առումով ավելի լայն գործունեություն է իրականացնում 1993 թ. TİKA-ի կողմից ստեղծված Մասնավոր սեկտորի զարգացման կենտրոնը, որի աշխատանքներին աջակցում է Թուրքիայի ֆինանսների նախարարությունը: Կենտրոնի հիմնական նպատակն է տնտեսության մեջ աջակցել մասնավոր հատվածի և ազատ շուկայական տնտեսության զարգացմանը, ուստի այս նպատակով իրականացնում է մասնագետների վերապատրաստման ծրագրեր: Կենտրոնի ծավալած գործունեության մասին փաստում են հետևյալ տվյալները՝ 1994–2005 թթ. ընթացքում վերապատրաստման ծրագրերին մասնակցել է 3404 մարդ Կենտրոնական Ասիայի, Կովկասի, Բալկանների, Մերձավոր ու Միջին Արևելքի, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի ավելի քան 25 երկրներից և Ռուսաստանից<sup>10</sup>: Նման խոշոր կենտրոններից է համարվում նաև TİKA-ի կողմից 1993 թ. հիմնադրված Անկարայի հարկային կենտրոնը, որտեղ ուսուցանվում են հարկային համակարգի և քաղաքակա-

<sup>7</sup> TİKA 2004 Falliyet Raporu, Ankara, 2005, s. 26.

<sup>8</sup> Eurasian Studies. Special issue on the 10<sup>th</sup> Anniversary of Turkish Republics, Summer 2001, p. 43.

<sup>9</sup> Е. Уразова, Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, М., «АСТИ-ИЗДАТ», 2003, с. 65–66.

<sup>10</sup> TİKA 2005 Falliyet Raporu, Ankara, 2006, s. 194.

նության հետ կապված հարցեր: 1993–2005 թթ. ընթացքում վերոնշյալ տարածաշրջանների երկրներից Կենտրոնի կազմակերպած դասընթացներին մասնակցել են 3220 մարդ<sup>11</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, TIKA-ն իր ծրագրերում հիմնական տեղը հատկացնում է կրթական ու մշակութային բնագավառներին: Ընդհանուր և մասնագիտական կրթության կազմակերպման նպատակով TIKA-ն իրականացրել է մի շարք մասշտաբային ծրագրեր: Կարելի է առանձնացնել ուսուցիչների համար կազմակերպած ծրագրերը, որոնք իրականացվում էին Թուրքիայի կրթության նախարարության հետ համատեղ: Նման ծրագրեր ձեռնարկվեցին նաև դիվանագետների համար՝ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության աջակցությամբ<sup>12</sup>: Ընդհանրապես Թուրքիայում խրախուսում էին կենտրոնասիական թյուրքախոս երկրներից երիտասարդների կրթության կազմակերպումը թյուրքական ուսումնական հաստատություններում: Այսպես, 1990-ական թթ. ընթացքում տարբեր ծրագրեր հնարավորություն էին տալիս Կենտրոնական Ասիայից մոտ 7000 ուսանողների ամեն տարի սովորելու թյուրքական համալսարաններում<sup>13</sup>: Բացի այդ՝ TIKA-ն Կենտրոնական Ասիայում աջակցում էր կրթական համակարգի կազմակերպմանը՝ խրախուսելով թյուրքական դպրոցների ու համալսարանների հիմնադրմանը: Այս տեսանկյունից էլ TIKA-ն մեծ ուշադրություն էր դարձնում թյուրքերենի ուսուցմանը<sup>14</sup>: Ըստ էության՝ TIKA-ն նման գործողություններով փորձում էր տարածել թյուրքական մշակութային ու գաղափարական ազդեցությունը՝ առաջին հերթին հետխորհրդային տարածաշրջանում, որի առաջնային նպատակներից էր կրճատել ռուսական ազդեցությունը: TIKA-ն ծրագրեր է իրականացնում նաև գյուղատնտեսության, տրանսպորտի, զբոսաշրջության, ծառայությունների և այլ բնագավառներում:

TIKA-ի կարգավիճակի և գործունեության մեջ զգալի փոփոխություններ կատարվեց, երբ 2002 թ. Թուրքիայում իշխանության երկավ Արդարություն և զարգացում կուսակցությունը: Կազմա-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>12</sup> Avrasya Dosyası, Ekim 1998, Special issue, p. 3.

<sup>13</sup> Onis Ziya, “Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power Influence”, MERIA, vol. 5, no. 2, June, 2001, p. 68.

<sup>14</sup> Ն. Մինայան, «Կրթամշակութային հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև (1990-ական թթ.)», Մերձավոր Արևելք, հատ. 8, Եր., 2012, էջ 288–296:

կերպության աշխատանքներում կարևոր փոփոխությունն այն էր, որ Թուրքիան միջազգային համակարգում ընդգրկվեց որպես դոնոր երկիր, այսինքն՝ աջակցում էր զարգացման ծրագրերին, որը գլխավորում էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organisation for Economic Co-operation and Development-OECD) շրջանակներում գործող Զարգացմանն աջակցող կոմիտեն: Սակայն պետք է նշել, որ նման դոնոր երկրները շարունակում են օգնություն ստանալ զարգացած երկրներից, որոնց շարքում է դասվում նաև Թուրքիան: Վերոնշյալ գործառույթը հիմնականում հանձնվեց TİKA-ին, ուստի վերջինս ավելի հստակեցրեց իր առջև դրված խնդիրները<sup>15</sup>: 2003–2004 թթ. TİKA-ն վերանայում ու հստակեցնում է իր կողմից իրականացվող օգնության ծրագրերի նպատակները, սակայն իրականում նրա գործողություններն ու նպատակները սկզբունքային փոփոխության չեն ենթարկվում: Այսպես, 2005 թ. TİKA-ի գործունեության վերաբերյալ զեկույցում նշվում է, Թուրքիան ջանքեր է գործադրում օգնություն տրամադրելու կենտրոնասիական, կովկասյան, բալկանյան, մերձավորարևելյան և աֆրիկյան տարածաշրջանների երկրներին՝ միաժամանակ նրանց հետ հաստատելով երկկողմ հարաբերություններ: Մյուս կողմից՝ հաշվի են առնվում նաև մշակութային ու աշխարհագրական գործոնները՝ չանտեսելով Թուրքիայի ավանդական դերը, նրան վերապահելով սերտ համագործակցության դեպքում աշխարհաքաղաքական կամրջի գործառույթը<sup>16</sup>: Փաստորեն ԱԶԿ-ի աջակցությամբ TİKA-ի գործունեությունն ակտիվացավ: Նա սկսեց կատարել ներդրումներ և իրականացնել հիմնականում կրթամշակութային ծրագրեր<sup>17</sup>: Բացի այդ, երբ TİKA-ն ընդգրկվեց զարգացմանն աջակցող ծրագրերի միջազգային համակարգում նրա բյուջեում նկատվեց պետական հատկացումների ավելացում, ինչի մասին վկայում են 1990–ական թթ. հետ համեմատած 21–րդ դարի սկզբի թվական տվյալները: Այսպես, եթե 2001 թ. TİKA-ի բյուջեում պետական հատկացումները կազմում էին 64,1 մլն դոլար, ապա 2002–ին դրանք հասնում են 79,9 մլնի, 2003–ին կրճատվում են՝ հասնելով

<sup>15</sup> M. Kulaklikaya and R. Nurdun, Turkey as a New Player in Development Cooperation, Insight Turkey, vol. 12, no. 4, 2010, p. 131–145.

<sup>16</sup> TİKA 2005 Falliyet Raporu, Ankara, s. 3.

<sup>17</sup> Denizhan Emrah, Türkiye'nin Kafkasya ve Orta Asya Politikası ve TİKA, Sosyal ve Beşeri Bilimler Dergisi, Cilt 2, Sayı 1, 2010, s. 22.

66,6 մլն<sup>18</sup>, իսկ 2004 թ. սկսած TIKA-ի բյուջեում հատկացումները տարեկան մեկ միլիարդ դոլարից անցնում են<sup>19</sup>: Չնայած որ TIKA-ի գրասենյակները գործում են Մերձավոր ու Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրներում, սակայն նրա ծրագրերում գլխավոր տեղը հատկացվում է Կենտրոնական Ասիայի երկրներին: Այս մասին TIKA-ի 2005 թ. աշխատանքների ամփոփման վերաբերյալ զեկույցում նշել է Թուրքիայի պետնախարար Բ. Աթալայը. «Չնայած մենք ներկայացուցչություններ ունենք նաև Մերձավոր ու Միջին Արևելքում և Աֆրիկայում, թյուրքական հանրապետությունները նախկինի պես մեր օգնության ծրագրերում գլխավոր տեղում են: TIKA-ի համար այս տարածաշրջանը համարվում է ամենակարևոր տարածքը»<sup>20</sup>:

Այսպիսով՝ թուրքական կառավարության կողմից TIKA-ին հատկացված կարևոր դերի մասին վկայում է այն փաստը, որ կազմակերպությունը ստեղծվեց ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո: Ուստի կարող ենք եզրակացնել, որ կազմակերպության հիմնական նպատակներից էր աջակցել Թուրքիայի ազդեցության տարածմանը հետխորհրդային տարածաշրջանում: Մյուս կողմից՝ TIKA-ին թուրքական կառավարությունը կարևոր նշանակություն տվեց թյուրքական ու մուսուլմանական երկրների հետ բազմակողմանի համագործակցության զարգացման տեսանկյունից, որտեղ կարևորվում էին քաղաքական և գաղափարական գործոնները: Այսինքն՝ կազմակերպության ծավալած լայն գործունեությամբ Թուրքիան նախևառաջ փորձում է բարձրացնել իր հեղինակությունը թյուրքախոս երկրներում: TIKA-ի հիմնական նպատակներից է աջակցել Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացմանը և հնարավորինս նպաստել նրա դիրքերի ամրապնդմանը: Այս տեսանկյունից էլ ընտրված են նրա գործունեության բնագավառները, որոնց շարքում առաջնային տեղը հատկացվում է կրթական ու մշակութային բնագավառներին: Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության գալով TIKA-ն ավելի ակտիվ գործունեություն սկսեց ծավալել՝ իրականացնելով օգնության տարբեր ծրագրեր: Թեև TIKA-ն ծրագրեր է իրականացնում տարբեր երկրներում, սակայն առաջին տեղում են գտնվում թյուրքախոս երկրները: Վերջիններիս հետ համա-

<sup>18</sup> Eurasian Bulletin, no. 53, December 2006, p. 21.

<sup>19</sup> TIKA 2005 Falliyet Raporu, Ankara, s. 2.

<sup>20</sup> Eurasian Bulletin, no. 53, December 2006, p. 24.



գործակցության համատեքստում ընդգծվում են պատմական, էթնիկական, լեզվական և մշակութային ընդհանրությունները, ուստի իրականացվող միջոցառումների ու ծրագրերի հիմքում դրված են այս գաղափարները: Փաստորեն TIKA-ն իր գործունեությամբ աջակցում է Թուրքիայի տնտեսական, քաղաքական ու գաղափարական ազդեցության տարածմանը:

---

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

### **Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող է և Հայաստանի ամերիկյան համալսարանի ավագ դասախոս: Չբաղվում է Թուրքիայի նորագույն պատմության և տարածաշրջանային անվտանգության խնդիրներով:

### **Անուշ Հովհաննիսյան**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Չբաղվում է Թուրքիայի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրներով, տարածաշրջանային քաղաքականությամբ, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հարցերով:

### **Լևոն Հովսեփյան, պ. գ. թ.**

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող է: Ուսումնասիրությունների ոլորտներն ընդգրկում են Թուրքիայի պաշտպանության ու անվտանգության, ինչպես նաև արտաքին քաղաքական խնդիրները:

### **Ալեքսանդր Սաֆարյան, պ. գ. թ., պրոֆեսոր**

Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի վարիչն է, ԵՊՀ ՀՀԻ ավագ գիտաշխատող: Չբաղվում է թյուրքագիտության, օսմանագիտության, հայ-թյուրքական լեզվական ու պատմամշակութային առնչությունների, արևելագիտության պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

### **Ռուբեն Մելքոնյան, բ. գ. թ., դոցենտ**

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալն է և թյուրքագիտության ամբիոնի դոցենտ: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է Թուրքիայի նորագույն շրջանի պատմությունը, Թուրքիայի քաղաքականությունը ազգայն-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ, Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության մեջ, ժամանակակից թյուրքական գրականությունը:

---

**Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.**

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող: Չբաղվում է Հայոց ցեղասպանության տարբեր ասպեկտների, ցեղասպանության ժխտման, Օսմանյան կայսրությունում հույների պատմության և Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերի ուսումնասիրությամբ:

**Նելլի Մինասյան, պ. գ. թ.**

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս է: Չբաղվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերով, մասնավորապես կենտրոնասիական ուղղության ուսումնասիրությամբ:

---

## AUTHORS

### **Vahram Ter–Matevosyan PhD**

Senior research fellow of the department for Regional International Relations Studies of the Middle East at the Institute of Oriental Studies, NAS RA and senior lecturer at the American University of Armenia. Main fields of his research include the modern history of Turkey and regional security issues.

### **Anush Hovhannisyan**

Senior research fellow of the department of Turkey at the Institut of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include the problems of modern history and regional policy of Turkey, also problems of Armenian genocide.

### **Levon Hovsepyan, PhD**

Senior research fellow of the department of Turkey at the Institute of Oriental Studies, NAS RA. His research interests include the problems of defense and security sector, foreign policy of Turkey.

### **Aleksandr Safaryan, Prof., PhD**

Head of the department of Turkic studies, senior researcher of the Institute of Armenian studies of YSU. Field of interests includes modern problems of Turkic and Ottoman studies, Armenian–Turkic linguistic and historico-cultural ties, history of Oriental Studies.

### **Ruben Melkonyan, Assoc. Prof., PhD**

Deputy Dean of the Faculty of Oriental Studies of YSU and associate professor in the Department of Turkic studies. The field of professional interests includes the modern history of Turkey, Turkish policy towards ethnic and religious minorities, the problem of the Armenian Genocide in the domestic and foreign policy of Turkey, modern Turkish literature.

### **Gevorg Vardanyan, PhD**

Senior research fellow, the head of the Department of Comparative Genocide Studies of the Armenian Genocide Museum and Institute, Yerevan. His research focuses on the comparative aspects of Armenian Genocide Studies, genocide denial, Ottoman Greek History, and Turkish foreign policy.

---

**Nelly Minasyan, PhD**

Lecturer at the Chair of the World History and its Teaching Methods of the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Her research interests include foreign policy issues of Turkey, particularly Central Asian direction.

---

## АВТОРЫ

### **Ваграм Тер–Матевосян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА и преподаватель Американского университета Армении. Занимается изучением новейшей истории Турции и вопросами региональной безопасности.

### **Ануш Оганнисян**

Старший научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА. Занимается изучением вопросов новой и новейшей истории и региональной политики Турции, а также проблемой Геноцида армян в Османской империи.

### **Левон Овсепян, к. и. н.**

Старший научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА. Область исследований включает вопросы обороны и безопасности, а также внешнеполитические проблемы Турции.

### **Александр Сафарян, к. и. н., профессор**

Заведующий кафедрой тюркологии ЕГУ, старший научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ. Занимается исследованием проблем тюркологии, османистики, армяно–тюрских языковых и историко–культурных связей, истории востоковедения.

### **Рубен Мелконян, к. ф. н., доцент**

Заместитель декана факультета Востоковедения ЕГУ и доцент кафедры Тюркологии. В область научных интересов входят новейшая история Турции, политика Турции по отношению к национально–религиозным меньшинствам, проблема Геноцида армян во внутренней и внешней политике Турции, современная турецкая литература.

### **Геворг Варданян, к.и.н.**

Старший научный сотрудник, заведующий отделом Сравнительной геноцидологии Музея–института Геноцида армян НАН РА. Сфера научных интересов включает различные аспекты Геноцида армян, отрицание геноцида, история греков Османской империи и внешняя политика Турции.

---

**Нелли Минасян к. и. н.**

Преподаватель кафедры Всемирной истории и методики ее преподавания Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна. Занимается вопросами внешней политики Турции, в частности, изучением ее центрально-азиатского направления.

# **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ**

**ԹՈՒՐԹԻԱ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

**ՀԱՏՈՐ III (2)**

Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 7,5 տպ. մամուլ:



Տպագրվել է «Չանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում  
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am